

106

8109

8110

9(5)

7-30

1919

409.

0

h / 2



۹۰۱۲

۹۰۱۲

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն Հ Ա Մ Ա Ը Խ Ա Ր Հ Ա Յ Ի Ն Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ Ի

Ե Ի
Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ը

Պ Ա Տ Ր Ա Ս Տ ՈՒ Ա Ս « Թ Ա Յ Մ Զ » Լ Ր Ա Գ Ր Ի Կ Ո Ղ Մ Է
Հ Ա Տ Ո Ր Բ .



Պ Ռ Ա Վ Օ՝ Պ Ե Լ Ծ Ի Գ Ա

Այս պատկերը հիանալիորեն կ'արտայայտե Պեղծիգացիներու դիմադրողական
նշխարիս ոգին՝ ընդդիմ գերման յարձակողականին

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Զ Ն Ե Ր

Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆ Ե Ի Յ. ԳՐԻՍԵԱՆ

ՁԵՐ—Համաշխարհային Պատերազմ



Տ Պ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Օ . Ա Ր Զ ՈՒ Մ Ա Ն



Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ .

Լ Ի Է Ժ Ի Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Պելիգայի «Պրմինկամ»ը. — Իր փոքրիկոս պատմութիւնը Բնական ու հարստապետական գեղեցկութիւններ. Պելիգայի պալատիացի բազումներն. — Գերմանիոյ ծրագիրը չյաջողիր. — Առաջին յարձակում Լիեժի վրայ. Չանգուածային հետեւակազօրքի սխալ գործածութիւն. — Պելիգայի յաջող պատերազմութիւն — Վեոական սուլինը — Գերման կարգապահութեան սխալը. — Լիեժի ուժն ու սկարութիւնը. Իրողութիւններ բերդերուն շուրջ Գերմանական գաղտնի գործեր Լիեժի մէջ. Զօրավար Լեման մագապուր կը փրկուի. — Լիեժի քաղաքացիներուն ջարդը. — Պելիգայի խարդախ յայտարարութիւններ. — Սխալ կիրարկում միջազգային օրէնքի. — Գերման դասը անուղղամիտ. — Գերմաններ կը կորսնցնեն ոսկեղէն առիթ մը. — Լիեժի խժոժութիւնները կ'ապացուցուին — Պելիգայի կ'արդարանայ. — Զօրավար Էմիլիս եւ իր գործը. — Պելիգայի նախնական յաջողութիւններուն արժեքը. — Գերմանական անողոքելի յառաջխաղացում. — Աւելի փայլուն պելիգայի յաջողութիւններ. — Պատուոյ լեգէոնի խաչ Պելիգայի համար. — Ամեն բան անօգուտ խոտոր բնդանօթներուն առջեւ. — Անոնց փոխարութեան դրժուարութիւնը. — Բերդերը կ'իյնան. — Քրուսի յաղթանակը. — Պատարման ամփոփումը. — Շէնքերու քանդումը. — Քաղաքին գրաւումը. — Անտիպի ուրախութիւն Պելիգայի մէջ եւ զուր յոյսեր Լոնսոնի մէջ. — Հակառակ ամեն ջանքի գերման յառաջխաղացումը անդիմադրելի. — Քաղաքացիներ Լիեժի եւ Նամիւրի. — Պելիգայի յաջող դիմադրութեան բարոյական ու քաղաքական ազդեցութիւնները. — Բերդերը կը քանդուին ու Զօրավար Լեման գերի կը բռնուի. — Յուզիչ ու փառաբան վերջաւորութիւնը. — Անգլիացի քաղաքացիներու վկայութիւնը:

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
№ 260

Լիեժի սովորաբար նկարագրուած է իբրև «Պելիգայի Պրմինկամ»ը, բայց այդ բացատրութիւնը չէ՛ր տար մեզի գաղափարը այն խաղաղիկ գեղեցկութեան որ կը տիրէր այդ քաղաքին մէջ, իր բազմաթիւ զանգակատուններով, լայն փողոցներով, որոնք եզերուած էին Մէզօրի լայնածաւալ ջուրերէն՝ դէպի անտառախիտ ու վէտվէտուն ցամաքը տարածուող ծառուղիներով: Այս անտառներուն միջև՝ զետեղուած էին բերդերը, խոշոր միջնաբերդներուն մասն, իրաքանչիւր գոթի կազմելով թագ մը՝ այն ողորկ զառիթափներուն վրայ, ուր Օգոստոս Տի գիշերը, դէզ-դէզ ինկան գերման մեռելները: Բայց Օգոստոս Տի, մինչ արևը մարը կը մտնէր խաղաղիկ, այս բերդերը իրենց նկարչագեղ չրջապատին մէջ սովորականէն աւելի աչքառու չէին: Եւ նոյնիսկ Լիեժիներու մաքրին մէջ, երբ անոնք կ'ունկնդրէին Ս. Բարթոլոմէոսի իրիկնամուտի ղօղանջին, քիչ

բան կար թելադրող թէ՛ առաւօտեան արևը այդ բնավայրը պողպատով չրջապատուած պիտի դանէր, կամ թէ շատ օրեր թնդանթներու անդադրում որոտումը պիտի պատմէր աշխարհին՝ Լիեժի հերոսութիւնն ու աւերումը: Արդարև, Օգոստոսի սկիզբը այդ ճնշող ու տաք երեկոյին, այն անտառուտ զառիթափները, — որոնց ետին դարանած Գերմանները մուծին կը սպասէին, — ըստ երևոյթին, թաւուաններուն եզերքն ի վեր թռչտող անծեղնելէն զատ վտանգաւոր ոչինչ կը ծածկէին: Ու ազարակները չրջապատող դաշտերուն մէջ կարելի չէր նշմարել ո՛ր է թշնամի, բացի կանուխ հասած կաղիներ փնտռող ագռաւներու խումբերէն, — ագռաւներ որոնք ընդ փոյթ պիտի գիրնային ձիերու փորոտիքը ուտելով ու մարդոց աչքերը փոքելով: Մօտեցող աղէտին լուրջ շուքը տակաւին չէր ինկած այս գեղեցիկ բլուրներուն վրայ:



84046
977-91

181-90 /



Պերլինի մէջ ամբոխը պատերազմը կը ծափահարէ

Զրոյցներ կային, անշուշտ, և զինուորները պատրաստ էին: Բայց Վալոնի գոհարա ազարակապանը մեծ կարևորութիւն չէր ընծայեր այդ զրոյցներուն և զինուորներու գործունէու-


թեան: Ան կը յուսար թէ այդ մռայլ մայրամուտը փոթորիկ չէր գուժեր. — ու մտքէն իսկ չէր անցունէր թնդանօթներու փոթորիկը որ օրերով ու գիշերներով պիտի որոտար իր ականջներուն մէջ: Կը խորհէր թերևս, աչքերը պտըտցնելով արևուն առատ լոյսին տակ աճող ցանքելուն վրայ, թէ 1914ի հունձքը իր առատութեան համար անմուաց պիտի մնար Լիէժցիներու մտքին մէջ: Ու արդարև այդպէս ալ եղաւ, որովհետև 1914ը այդ քաղաքին 1200 տարուան փոթորկոտ պատմութիւնը իր զագաթնակէտին հասցուց:

Լիէժ, քաղաքական պատմութեան մէջ մուտք գործեց 720 Քուականին, երբ Գրիգոր Բ Պապին հաւանութեամբ, Մաէսթրիխտի եպիսկոպոսը իր աթոռը փոխադրեց այդ քնացող քաղաքէն Մէտլի ու Ուրթի միացման կէտին վրայ գտնուող այս յարածուն քաղաքը: Յաջորդ դարուն, Լիէժի եպիսկոպոսները իրենց տիրոջներուն վրայ աւելցուցին նաև «Կայսրութեան իշխան» և «Պոլիսի Դուքս» տիտղոսները:

Լիէժի պատմութիւնը անհանդարտ ու ազատասէր քաղաքացիներու, և իրենց կղերական հարստահարիչներուն միջև տեղի ունեցած երկար պայքարներու պատմութիւնն է, լեցուն ապստամբութիւններով, արիւնահեղութիւններով



ՕՍԹԸՆ ԶԷՄՊՐԼԷՆ



Լուվէնի մէջ Պելճիգացիներու կողմէ գրաւուած վերջին դիրքը

ու վէճերով: Այս բոլոր կռիւներուն մէջ, սակայն, Լիէժ ծաղկեցաւ ու աճեցաւ, մինչև որ ժողովրդական տարրին և իշխող դասակարգին փոխնիփոխ յաջողութիւններէն ու ձախողութիւններէն վերջ, 1792ին, Լա Ֆայէթի հրամանատարութեան տակ Ֆրանսական զօրաբաժին մը քաղաքը գրաւելով՝ վերջ մը դրաւ անոր մարտական փորձառութիւններուն, մինչև ներկայ պայքարին սկիզբը:

Արդի Լիէժը, իր կեդրոն արևելեան Պելճիգայի անխահանքերու շրջանակի մը, միշտ, նոյն իսկ հեռուէն, ցուցադրած է ճամբորդին աչքին, իր զբաղումներուն ընդթը, գործարաններու անհամար ծխնելոյզներուն արտադրած մուխի ծածկոյթի մէջէն: Լիէժի հանքերէն մէկը աշխարհի մէջ ամենէն խորունկն է, և ուրիշ շատ մը հանքեր, որոնք հիմա լքուած են, կը տարածուին քաղաքին ու գետին ներքև:

Զինագործութիւնը մէկն է այն գլխաւոր ճարտարարուեստներէն, որոնց համար Լիէժ աշխարհի մէջ համբաւաւոր է եղած և անտարակոյս ասկէ վերջն ալ միշտ պիտի ըլլայ, ու թերևս Լիէժցիներու այս ուղղութեամբ ցոյց առած փութկոտութիւնը մասամբ կը բացատրէ, բայց երբէք չարդարացներ, գեմանական «փոխ վրէժներուն» վայրագութիւնը:

Սակայն, թէև ճարտարագիտական այս ընդարձակ գործունէութիւնը մուխով կ'ամպոտէր Լիէժի երկինքը, ու թէև շրջակայ բլուրներուն վրայ ս'եր որ ալ դառնար գիտողին աչքը, ծըխ-



Մ. Ռ. ՊՕ

Ֆրանսայի ելեւմտական նախարարը (1914)



ՊԵՆՏԻՊԱՅԻ ՕԳԱՆԱԻՈՐԳՆԵՐ

Որոնք մեծ ծառայութիւն ունեցան թշնամիները դերքերնուն վտարելու մէջ

Նամուրի առջև, սակայն, Գերմանները աւելի իմաստուն կիրպով շարժեցան ու աւելի արագ մէթոտ մը որդեգրեցին. նախ պաշարելով բերդերուն մէկ մասը ու գրաւելով զայն իրենց ծանր հրետանիին կրակովը: Հոս հրետանիի կրակը այնքան սարսափելի էր բերդերու օղակին վրայ որ, քանի մը կէտեր միաժամանակ ինկան:

Որպէսզի կարենանք հասկնալ թէ՛ ինչո՞ւ Լիէժ յարձակումով մը չառնուեցաւ, թէ ինչո՞ւ կրցաւ, մինչև աստիճան մը դիմադրել վճռական ու տևական յարձակումի մը, ու նաև թէ ինչո՞ւ ինկաւ անխուսափելիօրէն, պէտք է մեր միտքերուն մէջ ունենանք այդ քաղաքին պաշտպանութիւններուն յստակ պատկերը: Պէտք է յիշենք թէ՛ 12 բերդերէ կազմուած ամրութեանց օղակը 33 մղոն չրջագիծ մը ունէր, իւրաքանչիւր բերդ քաղաքէն իբր 4 մղոն և իր քովի բերդերէն 2-3 մղոն հեռու էր: Հետևաբար փոքրաթիւ պահակազօրքի մը համար, որպիսին էր զօրավար Լէմանի պահակազօրքը, բերդերը իրարմէ չափազանց հեռու էին:

Ճիշդ է որ, ի սկզբան, երբ տակաւին

Գերմանները փոքր ճակատի մը վրայ կը յարձակէին, Պելճիգացիները իրենց արագաշարժութեամբ կրցան առաւելութիւն ցոյց տալ, բայց այս առաւելութիւնը շատ շուտ կորսուեցաւ, երբ Գերմանները իրենց ճակատը ընդարձակեցին, և այլևս անկարելի էր Պելճիգացիներուն համար տեղէ մը ուրիշ տեղ օգնութիւն ղրկել:

Այն ատեն, զօրավար Լէման որոշեց դաշտային ուժերը ետ քաշել, ու բերդերուն պաշտպանութիւնը աւելցնել: Մինչ այդ, սակայն, Գերմանները կը գերազանցէին պիտ բերդերուն 400 թնդանօթները, թէ թիւի և թէ ծանրութեան տեսակէտէ:

Այլևս յոյս չկար որ, Լիէժ պիտի կարենար ստիպուի, բայց զօրավար Լէման կը յուսար, — ինչ որ հիանալիօրէն կրցաւ ի գործ դնել — յապաղել գերման յառաջխաղացումը ու բերդերը աւերակ վիճակի մը մէջ միայն յանձնել Գերմաններուն: Այս տաս երկու բերդերէն վեցը փոքր ու վեցը մեծ էին: Մեծ բերդերը ամենքն ալ շինուած էին նոյն յատակագիծին վրայ, եռանկիւնաձև խրամով մը չրջապատուած ու ամէն մէկ անկիւնը թնդանօթներ զետեղուած: Իրենց



Գերմանիոյ գահաժառանգ իշխանը Հիւսարներու տարազով

չինութեան թուականին, ծանօթ ոչ մէկ հրետանի կրնար թափանցել այս բերդերը, ու արդարև, նոյն իսկ այս պատերազմին, այս բերդերը պիտի կարենային դիմադրել ու է դաշտային հրետանիի, եթէ չըլլային Գերմաններու բերած պաշարման մեծ թնդանօթները, որոնք բոլորովին տարբեր հարց մը կը ներկայացնէին:

Որպէսզի կարենանք հասկնալ Լիէժի յարձակումին առաջին մասին քանի մը հետաքրքրական դէպքերը, պէտք է յիշենք թէ՛ Լիէժի մէջ ալ տեսնուած էին այն գաղտնի պատրաստութիւնները որոնք այնքան յաջողեցան Լիւքսէմպուրկի մէջ: Շատ մը անկասկածելի քաղաքացիներու տուներէն, — քաղաքացիներ որոնք իրապէս գերման գաղտնի գործակալներ էին, — հազարաւոր զէնքեր, արագահարուած հրացաններ գտնուեցան, որոնք յատկացուած էին քաղաքային հազուստով ու անզէն քաղաք մտած գերման զինուորները յաջողեցան Լիէժ քաղաքը կարգադրութիւններուն շնորհիւ էր որ, պաշա-

րուսին սկիզբը, խուճաք մը զինուած Գերմաններ կարողացան նենգօրէն չրջապատել այն տունը ուր ընդհանուր սպայակոյտը ժողով կը գումարէր և գնդապետ Մառչանը սպաննելէ զատ, քիչ մնաց նաև որ սպաննէին զօրավար Լէմանը, զոր հերքիւիսան կազմով սպայ մը կրցաւ փրկել, զինքը պատկից ձուլարանի մը պատէն անդին նետելով:

Լիէժի մէջ ծածկուած թշնամիներու այս ցնցիլ գիւտէն դրդուած, զօրավար Լէման անհրաժեշտ միջոցները ձեռք առնելով, գերման խուճաք մը բոլորովին փճացուց և ուրիշ խուճաք մը գլորի բռնեց:

Օգոստոս 7ի արիւնոտ պատահարներու շրջափոթութիւններուն մէջէն, միակ դէպք մը խիզախօրէն ի յայտ կուգայ, այն թէ, մինչդեռ իրենց մեռելները թաղելու համար Գերմաններուն առաջարկած զինադադարը նկատի կ'առնուէր, գերման զինուորները յաջողեցան Լիէժ քաղաքը մանել, և փողոցներու մէջ ծայր տուտ կուտա-

իրաւամբ, չվստահելով Գերմաններուն պատերին:

Յառաջացող գերման բանակներու և Լիէժի աներկիւղ պաշտպաններուն միջեւ տեղի ունեցող այս ահռելիօրէն անհաւասար մենամարտին գրեթէ միակ վկաները Հոլանտացիներն էին, որոնք Մաէսթրիխտի մէջ, ճիշտ հոլանտական անվտանգ սահմանագլուխէն ներս, գրեթէ ականատես էին անցուղարձին: Այսպէս, Մաէսթրիխտէն թղթակից մը սապէս կը նկարագրէ, ինչ որ կրցած էր ընդհանարել պատերազմին մշուշի մէջէն.—

«Բլուրին վրայէն շատ յստակ կերպով կը տեսնէի Գերմանները, փոքր նաւակներու մէջ, և ուրիշներ որոնք նաւակամուրջ մը կը ձգէին Մէօզի վրայ, Վիգէէն քիչ մը հարաւ, զետը լողալով կ'անցնէին: Գետին մէկ կողմէն միւս կողմ անցքը կը կատարուէր վեց զանազան կէտերու վրայ ու մեծ կանոնաւորութեամբ: Այնպէս կը թուէր թէ՛ Գերմանները շատ հոգ չէին ընել պիտ բերդերուն կրակը: Պելժ գինուորներ, որ տարածուած էին այդ կողմերը, ստիպուած էին հեռու մնալ Գերմաններու կրակէն խուսափելու համար, ու տակաւ քրակողը ամբողջովին ծածկուեցաւ գերման զօրքով:

«Ժամը 5ին, խոշոր ուժ մը անցած էր գետը և կը շարժէր դէպի Լիէժ: Պելժերը փորձեցին նեղել Գերմանները, կրակ բանալով անոնց յառաջացող սիւնակներուն վրայ, բայց ի վերջոյ դադարեցուցին կրակը ու քաշուեցան: Ծամբուն եզերքը գտնուող տուններուն բնակիչները յուսահատ վիճակի մէջ փախուստ տուին: Էպէն գիւղին մէջ ժողովուրդը աւելի հանդարտ գտայ: Անոնք զարմացումով կը դիտէին անցնող գինուորներու աւազին բազմութիւնը, ու նեղութիւն չէին զգար Գերմաններուն Մէօզի ասփերն ի վար դէպի Լիէժ յառաջանալը տեսնելով:

«Յատկանշական լաւատեսութեան մը, Գերմանները կ'ըսէին. «Երկու օրէն Լիէժը պիտի առնենք ու շարժմը մը չանցած Բարիդի առջև պիտի ըլլանք:»

Այս համառօտ հեռագիրը լաւ պատկեր մը կուտայ պատերազմին ընթացքին մասին ոչ թէ միայն Լիէժի առջև, այլ և Լիէժէն, Նամուռէն, Պրիւքսէլէն ալ անդին, մինչև որ Գերմանները Ֆրանսացի և անգլիացի դաշնակից ուժերուն ցնցումը զգացին:

Այսպէս, գերման զօրքին առատութեան ու

խիտ առ խիտ յառաջացումին հանդէպ, կը տեսնենք ոգեւորուած բայց անօգուտ հակա-յարձակումներ, ամէն կողմ ցրուած փոքրիկ բայց արի խմբակներ, որոնք Պելժիգան պաշտպանելու իրենց ջանքերուն մէջ կը կլլուին ու կ'անհետանան, գերման զօրքին յառաջացող գորշ-կանանչ հեղեղին մէջ: Շատ տեղեր կը տեսնենք որ, գեղջուկ ժողովուրդը անարեկած կը փախչի բազմամարտի փողոցներէն, մինչև ուրիշներ, զիւղերու և քաղաքներու փողոցներուն մէջ շարուած՝ ապուշ յուսահատութեամբ մը կը դիտեն շարք շարք դէպի արեւմուտք յառաջացող գերմանական անվերջանալի բանակները: Լիէժի շուրջ և անկէ անդին, այս էր պատերազմին ընհանուր պատկերը, բայց իր աւելի երկրորդական դրուագները կը տարբերէին օրէ օր: Ինչպէս, օրինակի համար, Լիէժի անձնատուութեան ճակատագրային օրուան նախորդ երեկոյին, երբ վեց բերդեր կը ուժեղացան, Պելժերուն մէկ յակայարձակումը փոխուեց յաջողութեամբ պսակուեցաւ:

Նոյն օրը, կիսաբոլոր կուռաղձին միւս ծայրը, Լիէժի քաղաքապահ զօրքը փայտոն յաղթանակ մը շահեցաւ և Պոնսէլի բերդին մօտ գրեթէ ոչնչացուց յարձակող թշնամին: Հոս ալ միջազգային խնդիրներ ծագեցան, որովհետև Գերմանները կը պնդէին քաղաքապահ զօրքը ոչ-պատերազմիկ նկատել: Դարձեալ նոյն օրը, ուրիշ պելժ զոյղն յաջողութիւն մը, Լանկոի դղեակէն վեր կը բարձրանայ, Լիէժի երկու կողմերը ծածկող մուխին մէջէն: Հոս Պելժերը դիմադրական փոքր ցոյց մը ըրին փախչելէ առաջ, և երբ յաղթական Գերմանները աւարի ի խնդիր ներս խուժեցին փառայեղ չէնքէն, անարկու պայթում մը վայրկեանի մը համար խեղդեց բերդէրը ուժեղացող խոշոր թնդանթներուն խլացուցիչ աղմուկն իսկ: Դղեակին ներքև ճարպիկօրէն սկաննեք գետեղուած էին:

Կը տեսնուի ուրեմն, թէ օրուան յաջողութիւնները այնքան փոփոխական էին իրենց մանրամասնութիւնն երուն մէջ, որ Պելժերը բազմաթիւ գերիներ բռնած, եօթը թնդանթներ գրաւած, և Պրանտէնպուրկի ընտիր զօրաբաժինը իսկուպէս պարտութեան մատնած ըլլալով, կը հպարտանային: Ասկէ զատ, Լիէժի հերոսական պաշտպանութիւնը արդէն քաղաքին համար շահած էր այն մեծագոյն պարգեւը զոր Ֆրանսական կառավարութիւնը կրնար տալ: Մ. Բուանգառէ, Հանրապետութեան նախագահը, Օգոստ. Դին հետեւեալ զեկոյցը զրկեց

Ու Եւրոպան գուրգուրանքով երախտագէտ յիշատակ մը պիտի պահէ միշտ, Լիէժի Պելժ հերոսներուն հանդէպ:

Բայց այս պելժ յաջողութիւններուն զարթուցած յոյսերը բոլորովին սխալ էին, եթէ կը ներշնչէին այն հաւատքը թէ՛ Գերմանները իրենց ուժը փորձած ու պարտուած էին: Այդպէս չէ: Պելժերուն յուսացածներէն ո՛չ մէկ բան կրնար ո՛ր և է օգուտ ունենալ Գերմաններու թուական անազին գերակշռութեան, և խոշոր թնդանթներուն առջև, որոնց ազդուօրէն պատասխանելու ո՛չ հրետանի ունէին Պելժերը, ո՛չ ալ ամրոցներ՝ անոնց դիմադրելու: Ականատեսներու վկայութեան համեմատ, Լիէժի բերդերուն մէջ նետուած ուժերուն գործած աւերին չափ սարսափելի բան տեսնուած չէր պատերազմի մէջ: Մարդիկ ո՛չ միայն կը սպաննուէին կամ կը վիրաւորուէին, այլ նաև կը սենային, կ'այրէին, ու կտոր կտոր կ'ըլլային: Զարմանալի չէ որ երեք բերդերը, թէև կը սպասուէր որ գոնէ ամիս մը դիմանային, շարժմը չկրնար անձնատուր եղան, երբ իրական ուժերու մը սկսաւ: Արդարեւ, Լիէժի



Պելժ գինուորները կամուրջէ մը նշան կ'առնեն

Պելժիգայի թագաւորին, կանխելով երախտագիտութեան ու հիացումի այն զգացումները, զորս ո՛չ միայն Ֆրանսա, այլ նաև ամբողջ քաղաքակիրթ աշխարհը զգաց վախճան այս ջախջախուած և արիւնոտ քաղաքին հանդէպ:

«Երջանիկ եմ ծանուցանելու ձեր վեհափառութեան թէ՛ Հանրապետութեան կառավարութիւնը Պատուոյ Լէգէոնի աստիճանը կը նուիրէ արի Լիէժ քաղաքին:

«Այսպէսով հանրապետութիւնը կը փափաքի պատուել այս վայրին քաջասիրտ պաշտպանները, ինչպէս նաև ամբողջ պելժ բանակը, որուն հետ միասին այս առատուընէ ի վեր, Ֆրանսական բանակն ալ ռազմադաշտին վրայ կը թափէ իր արիւնը:

«Ռէյմօն Բուանգարէ»

Տարակոյս չկայ որ, պելժ ազգին համար թէ՛ զօրաբաժիններու և թէ՛ անհատներու շատ մը անուններ նուիրագործուեցան Լիէժի մարտիրոսութեամբ, իրր արժանի անուններ դասուելու անմահ պատուոյ ցանկին վրայ: Սկսած զօր. Լէմանէն ու գնդապետ Մարշանէն մինչև պարզ գինուոր Տրմօլէն — որ առանձին սուրնաւոր յարձակում մը գործեց յառաջացող Գերմաններուն դէմ ու չորս հոգի սպաննելէ վերջ ապահով վերադարձաւ — ամէնուն անուններն ալ կրնան հպարտութիւն ներշնչել ո՛ր և է ազգի:



Կրակ ընող Պելժիգացի գինուորներ

ման համարաւի պղպջակին տրուած առաջին հարուածն էր:

Զօրավար Լէմանի յաղթութեան հաւասարապէս կարեւոր մէկ ուրիշ արդիւնքն ալ սու եղաւ որ, ան՝ գերմանական արշաւանքին մամանակացոյցը հիմէն ցնցեց ու խանգարեց, պատճառ ըլլալով անակնկալ յապաղման, ինչ որ մեծապէս վտանգաւոր է ո՛րէն բանակի համար: Գերմաններուն համար, մասնաւորապէս կրկնակի կարեւորութիւն ունեցաւ ասիկա, որովհետեւ ըստ անոնց հաշիւներուն՝ գերման բանակին մեծագոյն մասը Ֆրանսան պարտութեան մատնելէն անմիջապէս վերջ, ետ՝ Ռուսերուն դէմ պիտի վազէր:

Այսպէս, աշխարհի ամէն կողմը գտնուող Պելժերուն համար երջանկաբեր էր այն օրը, երբ Լիէժի ճակատամարտի լուրերը ստացուեցան. ընդհակառակը, Գերմանիոյ մէջ Պելժիգան սատանային գործակից ու Աստուծոյ դէմ ապրտամբ կը նկատուէր, անիրաւութեան դէմ կը ունեւրուն համար. — վասնզի Քայլերին կառավարութիւնը կը խոստովանէր թէ՛ սոններող գտնուած էր Պելժիգայի հանդէպ: Սակայն, Գերմանիայէն դատ, աշխարհի վրայ ամէն կողմ Պելժիգայի հերոսութիւնը կը գնահատուէր, և ամէն լեզու է թերթերու վերնագիրները՝ «Արի փոքրիկ Պելժիգան», անտարակոյս կ'ուրախացընէին պելժ աքսորականները:

Թերեւս չենք կրնար աւելի յարմար կերպով փակել Պելժիգայի պատմութեան այս արիւնալից բայց փառաւոր գլուխը, քան մէջ բերելով հոս, Անգլիոյ խորհրդարանին երկու ժողովներուն մէջ ալ, Օգոստ. 27ին, Անգլիացի դիւանագէտներու ըրած չափուած յայտարարութիւնները:

Երեսփոխանական ժողովին մէջ, վարչապետ Մր. Ասքուիթ կ'ըսէր. — «Լիէժի պաշտպանութիւնը (ծափեր) միշտ նիւթը պիտի կազմէ ազատութեան տարեգրութեանց ամէնէն ներշնչիչ գլուխներէն մէկուն: Պելժերը իրենց համար շահեցան այն անմահ փառքը որ բաժինն է ազատութիւնը հանգիստէն, ապահովութենէն, ու նոյն իսկ կեանքէն նախընտրող ժողովուրդին: Հպարտ կղզանք որ անոնց դէտնակիցն ու բարեկամն ենք:» (ծափեր):

Իրմէ անմիջապէս վերջ Մր. Պոնար Լօ, ընդդիմադիր խմբակին լիտորը, խօսք առնելով ըսաւ. — «Պելժիգա իր ընթացքովը պատիւ բերաւ աշխարհին: Ան հատ մը ևս աւելցուց փոքր ազգերու հերոսական հայրենասիրութեամբ»



ԶՕՐԱՎԱՐ ԼԵՄԱՆ

Ընդհ. հրամանատար Մէօզի գերման բանակին (1914)

ըր կատարուած մեծ գործերու երկար ցանկին վրայ:»

Լորտերու ժողովին մէջ, Լորտ Գրիւ՝ կառավարութեան կողմէ, և Լորտ Լէնստուն՝ Միութեանական մեծամասնութեան կողմէ, նմանօրինակ զգացումներ արտայայտեցին: Առաջինը ի մէջ այլոց ակնարկելով Լիէժի մէջ գերման զինուորներու կողմէ գործադրուած վայրագութեանց, ըսաւ. — «Կը համարձակիմ յայտարարել թէ՛ ո՛ր և է ազգ որ այսպէս կը վարուի, կը հատուցանէ ուշ կամ կանուխ, և կը հատուցանէ մինչեւ ամենավերջին Ֆարտինկը:»

Բրիտանական ազգը արդէն լրջօրէն որոշած էր վճարել տալ այդ վերջին Ֆարտին կը: Տըպլինի մէջ, 1914 Սեպտ. 25ին, վարչապետ Մր. Ասքուիթ անտարակոյս թարգման կը հանդիսանար իր անթիւ ունկնդիրներուն իւրաքանչիւրին ամենախորունկ զգացումներուն, երբ կ'ըսէ չափուած բառերով թէ՛ Պելժերուն անուած դիմադրութիւնը «կ'ապացուցանէ աշխարհին թէ՛ գաղափարներ որոնք չեն կրնար կշռուիլ կամ չափուիլ նիւթական հաշիւներով, կրնան տակաւին ներշնչել աշխարհը ու տիրել անոր:» Այս խօսքերով անշուշտ ըսել կ'ուզէր ինչ որ փողոցներուն մէջ թափառող մը պիտի արտայայտէր սա բառերով. — Իրաւունքը Պելժիգայինն է, և Աստուած վկայ, մենք պէտք է յաջողցնենք Պելժիգան:» Գաղափարը նոյնն էր և նոյն գաղափարին շուրջը հաւաքուեցան Մր. Ասքուիթ, Մր. Լոյտ Ճօրճ, Մր. Չըրչիլ, և ուրիշ նախարարներ, ընդդիմադիր լիտերներ, ամբողջ բրիտանական կայսրութիւնը, իր բոլոր գաղթավայրերով միացած, ինչպէս նաև բոլոր մեր դաշնակիցները և ուրիշ երկիրներու մեր բարեկամները:



Գայլէրը Ուհլաններու տարաղով

ճիգայինն է, և Աստուած վկայ, մենք պէտք է յաջողցնենք Պելժիգան:» Գաղափարը նոյնն էր և նոյն գաղափարին շուրջը հաւաքուեցան Մր. Ասքուիթ, Մր. Լոյտ Ճօրճ, Մր. Չըրչիլ, և ուրիշ նախարարներ, ընդդիմադիր լիտերներ, ամբողջ բրիտանական կայսրութիւնը, իր բոլոր գաղթավայրերով միացած, ինչպէս նաև բոլոր մեր դաշնակիցները և ուրիշ երկիրներու մեր բարեկամները:

Ու Մր. Ասքուիթ չէր չափազանցեր, երբ կ'ըսէր թէ՛ Պելժիգա այս գաղափարը հաստատելով, գերման բանակին օրագիրները փոխելէ աւելի բան մը ըրած էր, աւելի կարեւոր քան պատերազմին քաղաքական հետեւանքները. — մարդկութեան այս նոր միացումը ի պաշտպանութիւն իրաւունքին: Պարզ զուգարկութիւն մը չէր որ բովանդակ Բրիտանիոյ մէջ, պատերազմի ընթացքին, ոճիրի ապշեցուցիչ բացակայութիւն մը կը տիրէր, որովհետեւ բազմաթիւ գողեր Գերմանիոյ վայրագութիւններուն դէմ անկեղծ ցասումով մը տոգորուած, զինուոր արձանագրուեցան կամ կերպ մը գտան ինքզինքնին իրաւունքին կողմնակից յայտարարելու:

Ու ինչ որ պատահեցաւ Բրիտանիոյ մէջ, առաւել կ'ամ նուազ չափով ոլտատահեցաւ նաև ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ: Մարդոց որակը լաւացաւ: Ահաւասիկ Պելժիգայի մատուցած ծառայութիւնը, որուն համար աշխարհ երբեք չպիտի կարենայ ըստ բաւականին շնորհակալ ըլլալ Պելժիգայի:

ՎԵՐՋ ԺԴ. ԳԼՈՒԽԻ

Գոյութեան պայքարին մէջէն դուրս ելած ուղեղէն առաջնորդուած գերման կայսրութեան զինեալ ուժը, հակառակ կազմակերպութիւն մը՝ իր բոլոր մանրամասնութիւններով հիմնուած զուտ գիտութեան վրայ, բացարձակապէս կը մերժէր Գրիստոսի «գաղափարը» — «երկրի վրայ խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» — թէև գերման երազները կը հաստատէին թէ՛ իրենց նպատակն էր ստեղծել զոնուակութեան և հաճութեան համաշխարհային խաղաղութիւնը. բրուսիական արծիւին հովանաւոր թեւերուն տակ:

Գերմանիոյ և Ֆրանսայի միջև պատերազմի մը պարագային, մեր ալ պատերազմին խառնուելը կախում պիտի ունենար պարագաներէն: Բայց իրողութիւնը այն է որ, գերմանական միտքը արդէն անտեսած ըլլալով այն «գաղափարը» թէ՛ իրաւունքը պէտք է տիրէ Աստուծոյ կամքովը, չկարծեց երբէք որ, բրիտանական կայսրութիւնը, մղուած այդ «գաղափարէն» որուն կ'ակնարկէր Մր. Ասքուիթ Տըպլինի մէջ, անմիջապէս պիտի մխրճուէր այս պատերազմին մէջ, զոր Գերմանիա յիմարաբար կը նկրտէր դիւրաւ շահիլ, անպատիւ խաղով մը, ի հեճուկս Աստուածային կամքին:

Գերմանիոյ այս դաւադրական և աշխարհակալական երազը «յիմարական» կոչելով, Բրողութիւնները չափազանցած չենք ըլլար: «Աստուած, իր կործանել ուղածը նախ կը յիմարացնէ,» կ'ըսէ քրիստոնէական հին առած մը: Այս էր Գերմանիոյ հիւանդութիւնը: Տեստոնեան «կատարելութեան» և աշխարհի նուաճումին համար իր տեսած պատրաստութեանց մասին զգացած իր ազատութիւնը, բոլորովին մոռցնել տուած էր իրեն, մարդկութիւնը տակաւին ներշնչող ու անոր իշխող գաղափարը թէ՛ երբ իրաւունքը կը պաշտպանենք, Աստուծոյ կողմէն կը կուռնիք:

Իր գործքով, 1914 Օգոստոս 3ին, ահաւասիկ ինչ որ Գայլէրը կ'ըսէր. — «Իմ կայսերական և Արքայական մտադրութիւնս է, Պելժիգայի մասին Աստուծոյ ունեցած փափաքները նկատի առնել, երբ արդէն ի գործ դրած ըլլամ Ֆրանսայի և սա գլխու փորձանք ու արհամարելի Անգլիոյ մասին իմ կայսերական ու Արքայական կամքս»:

Գայլէրը չէր երազեր իսկ իր կատարած փառայնը գործին մասին, թէ ինչպէս ի մի կը կերտէր այն կայսրութիւնը, որուն արեւը երբէք մարը չի մտնէր, ու զայն կը վերածէր գործունեայ կազմակերպութեան մը, աշխարհի բարիքին ու Աստուծոյ փառքին համար: Ան կը խորհէր միայն Գերմանիոյ մասին, որու տիրւարն էր ինք, պատերազմի գերազոյն տէրը:

Առաջին շաբթուան վերջը, պելժ զինուորական հեղինակութիւնները մեծապէս գոհ էին իրերու վիճակէն: Լիէժ տակաւին կը դիմադրէր, ու գերմանական երեք զօրաբաժին կը զբաղեցնէր: Պելժ հեծելազօրքը մասնաւորաբար նշանաւոր հանդիսացուց ինքզինքը, ամենայանդուզն քաջութեամբ, ու ամէն շրթունքի վրայ, «Ամէն բան հանդարտ է. ամէն բան լաւ կ'ընդանայ» բառերը կային: Նոյնիսկ, լուրեր կը շրջէին թէ՛ Գերմանները կը մտածէին ետ քաշուիլ, և, Ուրթ գետին ափերուն վրայ ու Լիւքսէնպուրկի մէջ խրամային կռիւով պաշտպանել իրենց նահանջը:

Իրականութիւնը շատ տարբեր էր: Գերմանները վերջապէս յաջողութեամբ էին կամուրջ մը ձգել Լեքսէի քով, ու մեծ թիւով հեծելազօրք արդէն անցած էր գետը:

Կիրակի, Օգոստոս 9ին, գերման հեծելազօրքի երկու զօրաբաժին, մօտաւորապէս 7,000 մարդ, որոնց կը հետեւէր հետեւակ զօրքը, դէպի Հէսպէյ յառաջացան: Թօնկայի բնակիչները ապշեցան թշնամին իրենց գլխաւոր փողօցին մէջ տեսնելով, ու անմիջապէս խառնաշփոթութիւն մը տիրեց. մարդիկ աճապարանքով փակեցին իրենց պատուհաններն ու դռները, ու ճամբաներն ամայացան: Հեծելազօրքը դէպի քաղաքապետարան յառաջանալով, հրամայեց քաղաքապետին դանձր յանձնել և պատուհանէն կախուած պելժ դրօշակը վար առնել: Քաղաքապետը մերժեց դրօշակը վար առնել, ուստի Գերմանները իրենք վար առին զայն և քաղաքին ամբողջ հարստութիւնը գրաւեցին:

Յետոյ, հեծելազօրքը տարբեր ճամբաներէ յառաջանալով, փոքր ընդհարումներ ունեցաւ պելժ զինուորներու հետ: Յայտնի էր, սակայն, որ իրենց նպատակը լուրջ կռիւի բռնուելէ աւելի զննութիւններ կատարել էր, մինչդեռ Պելժերը այնպէս կը կարծեն թէ՛ յաղթած ու ետ մղած էին թշնամին:

Յաջորդ օրը, լուր հասաւ Լուվէն, թէ 6,000ի չափ ձիաւորներ դէպի վեր կը յառաջանային, հոլանտական սահմանազուխին շատ մօտիկ: Նոյն օրը, կէսօրէն վերջ, Գերմանները գրաւեցին Լանդէնը, որ Պրիւքսէլէն միայն 38 մղոն դէպի արեւելք կը գտնուի՝ հոն ժամանող ճամբորդի կառաչարք մը կեցուցին, հեռագրական կազմածները քանդեցին, երկաթուղին փրճացուցին, և յառաջ շարժեցան: Հեծելազօրքէն զատ նաև զինուորական օգնական արդէն կը սաւառնէին պելժ դիրքերուն վրայ:

Այժմ արդէն բացայայտ էր որ, գերման բանակը կը ծրագրէր Հասէլթի և Հաէլէնի միջև տարածուող դաշտերէն դէպի հիւսիս յառաջանալ և պելժ բանակը նահանջելու հարկադրել: Օգոստ. 12ի առաւօտուն կանուխ, իբր 10,000 հոգինոց գերմանական հեծեալ ուժ մը, հրետանիի և հետեւակազօրքի ընկերակցութեամբ, զանազան կողմերէ դէպի Հաէլէն և Տրսթ յառաջացաւ: Պելժերը կ'սպասէին այս յարձակումին, և ըստ այնմ պատրաստուած էին: Ժամը առաւօտեան 11ին յարձակումը սկսաւ. Պելժերը թոյլ տալէ վերջ որ Գերմանները բաւական մօտենան, կրակ բացին անոնց վրայ: Երկու կողմէ կատաղի պայքարէ մը վերջ, Գերմանները յուսահատ սկսան նահանջել, դաշտին վրայ կորսնցնելով իրենց իրական ուժին երեք հինգերորդը: Նմանօրինակ կռիւներ տեղի ունեցան նաև ուրիշ վայրերու մէջ, թէև, բաղդատելով յետագայ կռիւներու հետ, անոնք արժէք մը չեն ներկայացներ: Այսուհանդերձ, անոնց մէջ կը ցոլանայ այն քաջասիրտ ոգին զոր հազիւ երկու շաբթէ ի վեր զէնքի տակ առնուած պելժ զինուորները ի յայտ բերին թշնամին դէմ:

Օգոստոս 14ին, պաշտօնապէս ծանուցուեցաւ որ, Ֆրանսացի զիւորներ Շարլուպէն Պելժիգա մտած էին և իրենց ուժերը միացուցած պելժ ուժերուն: Փոքր դադար մը յաջորդեց ասոր, որովհետև Գերմանները ըմբռնել էին թշնամին ուժը և նոր օգնական ուժերու կ'ըսպասէին: Նոյն ատեն, սակայն, հոս հոն փոքր ընդհարումներ անպակաս էին, որոնց միջոցին Գերմանները վայրագ ու անխնայ ոգիով ամենափոքր դիմադրութեան կասկածի մը վրայ, իրենց անգթութեան առարկայ կ'ընէին խոյճ գիւղացիները:

Պելժ ընդհանուր սպայակոյտը կը շարունակէր ռազմաճակատի կացութեան մասին վստահացնող զեկոյցներ հրատարակել, բայց այլևս պատրանք չկար իրերու իսկական վիճակին շուրջ: Ժամէ ժամ յայտնի կ'ըլլար որ, Պրիւքսէլի դիրքը հետզհետէ կը վտանգուէր, ու անգամ մը որ պելժ բանակը ընկրկէր, Պրիւքսէլ դատապարտուած էր իյնալու:

Օգոստոս 17ին, Գերմանները սկսան իրենց լուրջ յառաջացումը: Վալուի մօտերը, ուժեղ բանակ մը սեպի պէս մտաւ Ֆրանսական ու պելժ բանակներու միջև, ու սկսաւ յառաջանալ գերակշիռ ուժերով, թէ՛ թիւի և թէ՛ հրետանիի տեսակէտէ, որոնց հանդէպ ամբողջ ճակատ



Անվերս

տին վրայ պելժ բանակին ցոյց տուած դիմադրութիւնը յուսահատական կը դառնար:

Որոշ կը տեսնուէր որ, պելժ բանակը չպիտի կարենար պահել իր դիրքերը, և աւելի երկար յապաղումը ամբողջական փճացում պիտի նշանակէր: Շատ տեղեր, Պելժերը արդէն ջախջախիչ պարտութիւններ կրած էին, հետեւաբար պելժ ուժերը հրաման ոտացան Անվերսի ուղղութեամբ նահանջելու և քաշուեցան մինչև Լուվէն, ուր վերջնական դիմադրութեան մը համար պատրաստութիւններ տեսնուած էին: Հոս, միակ նկատում մը կեցուց զիրենք: Իւրաքանչիւր Պելժի համար, Լուվէն, թանկագին յիշատակներով լեցուն, յարգանքի առարկայ, ու ամէն վտանգի դէմ պահուելու և պաշտպանուելու արժանի քաղաք մըն էր: Իր հինաւորաց համալսարանը, գեղեցիկ քաղաքապետարանը, 14րդ դարու չքնաղ շէնքերը, ու անգին գրադարանը եթէ անգամ մը քանդուէին, կորուստը անդարմանելի պիտի ըլլար ազգին համար, և զանոնք վտանգելը՝ ոճիր քաղաքակրթութեան դէմ: Այս նկատումներուն անձնատուր՝ պելժ բանակը քաշուեցաւ քաղաքէն, թոյլ տալով որ Գերմանները առանց դիմադրութեան գրաւեն զայն: Երբէք չէր անցնէր իրենց մտքէն՝ որովհետև տակաւին չէին հասկցած թէ ինչ ծայրայեղութիւններ կրնային գործել կարգ մը գերման հրամանատարներ — թէ՛ քաղաքը իրենց յարմար դատած եղանակով լքելով, զայն կը յանձնէին ո՛ւրէ կռիւի յառաջ բերելիք քանդումէն աւելի գէշ ու անխիղճ աւերումի մը:

Պելժ բանակը չէր կրնար պահել իր դիրքերը, ոչ ալ կրնար ետ կեցնել Գերմանները: Մէկ ճամբայ միայն կը մնար ի զուր չգոհուելու համար — լքել Պրիւքսէլը և դէպի Անվերս քաշուիլ:

Պելժ սպայակոյտը անհրաժեշտ նկատեց նահանջին մասին հետեւեալ խնամեալ բացատրութիւնը հրատարակել. —

«Ներկայ վայրկեանին, պատերազմին պելժ թատերաբեմին կացութիւնը կարելի է հետեւեայ կերպով նկարագրել. — Բրուսիական բանակը, երկար ժամանակ, մեծ թիւով զինուոր ու մեծ քանակութեամբ ռազմանիւթ վառնելէն վերջ, յաջողած է Մէօզի երկու ափերուն վրայ հող չահիլ, մինչև այն գիծը, ուր յարաբերութեան մէջ կը մտնէ Դաշնակից բանակներուն հետ: Մէօզի հիւսիսային կողմը գտնուող գերման զինուորները կը պատկանին զանազան զօրաբանակներու, որոնք գլխաւորաբար Լիէժի դէմ գործելէ վերջ, գործածուած են նաև ուրիշ կողմեր: Կայ նաև հեծեալ զօրաւոր ուժ մը, որոնց չնորհիւ, Գերմանները յաջողած են հիւսիս եւ հարաւ տարածուիլ: Հարաւային կողմը մեր զինուորները ընդհարմամբ ետ մղեցին զանոնք, բայց հիւսիսային կողմը ճամբան բաց էր և քանի մը թշնամի խումբեր յաջողեցան մեծապէս յառաջանալ:

«Մէկ խօսքով, Գերմանները կ'իշխեն մեր դիրքին, երկու շաբթ կորսնցնելէ վերջ, ինչ որ պատիւ կը բերէ մեր զէնքերուն, և կրնայ անհաշուելի հետեւանքներ ունենալ գործողութիւն»



ԶՕՐԱՎԱՐ ՖՕՆ ՖՍԼԹԷՆ ԼՍՅՆ

Բրուսելոյ պատերազմական նախարարը (1914)

չատ լաւ գիտէին որ, այս պարագաներուն տակ, Գերմանները ետ մղելու ո՛նէ ջանք պատճառ պիտի ըլլար բուն իսկ Պրիւքսէլի առաւել կամ նուազ քանդումին: Կային նաև մարդիկ, որոնք, հակառակ չէզոք ազգերու պաղարին խորհրդատուներու խրատներուն, կը պաշտպանէին կոբլը մինչև վերջը մղելու գաղափարը: Աւելի իմաստուն խորհուրդները յաղթանակեցին, և որոշուեցաւ որ Գերմանները թոյլատրուին խաղաղիկ կերպով քաղաք մտնել:

Այդ գիշերը, Պրիւքսէլի պատերուն վրայ յայտարարութիւն մը փակցուեցաւ, ստորագրութեամբ քաղաքապետ Մ. Մաքսի, որ յետագայ անձկալից շաբաթներուն մէջ իր քաջասրտութեամբն ու Գերմաններուն հետ վարուելու իր խելքովը, մեծ համբաւ մը վատկեցաւ: Ահաւասիկ այդ յայտարարութիւնը:—

«Հակառակ մեր զինուորներուն հետապնդիմադրութեան, որոնց կ'օգնէին Դաշնակից բանակները, վախ կայ որ թշնամին յաջողի Պրիւքսէլ մտնել: Ատանկ պարագայի մը, վստահ եմ որ ժողովուրդը հանդարտ պիտի մնայ: Խուճապէ խոյս տուէք: Պատերազմական օրէնքները կ'արգիլեն թշնամին ազգային պաշտպանութեան մասին բռնի տեղեկութիւններ քաղելէ:

Պրիւքսէլի բնակիչները իրաւունք ունին մերժելու այսօրինակ ամէն տեղեկութիւն:

«Որքան ատեն որ ողջ եմ կամ ինքզինքիս տէրը, պիտի ջանամ իմ ընկեր-քաղաքացիներուս իրաւունքն ու արժանապատուութիւնը պաշտպանել: Կ'աղաչեմ որ ամէն թշնամական արարքներէ ետ կենալով, իմ գործս նուազ դժուար ընէք: Քաղաքացիներ, ինչ որ ալ պատահի, մտիկ ըրէք ձեր քաղաքապետին: Ան ձեր դէմ չպիտի դաւաճանէ: Կեցցէ՛ ազատ ու անկախ Պելճիգան: Կեցցէ՛ Պրիւքսէլը:»

Հինգշաբթի առտու, քաղաքապետը իր պաշտօնական ուսնոցով, ընդառաջ գնաց գերման հրամանատարին: Կոչտօրէն ընդունեցին զինքը, հրամայեցին որ ուսնոցը հանէ, և յետոյ հարցուցին թէ՛ պատրաստ էր քաղաքը անպայման յանձնելու: Եթէ ոչ, պիտի ուժարկոծէին: Քաղաքապետը հասկցուց որ, անձնատուր ըլլալէ զատ ուրիշ բան մը չէր մնար իրեն: Ատոր վրայ, իրեն հաղորդեցին որ, ինք և քաղաքին միւս պատասխանատու գլուխները անձնապէս պատասխանատու պիտի նկատուէին քաղաքացիներու վարմունքին, և ժողովուրդին կողմէ Գերմաններուն դէմ ի գործ դրուած բռնութիւններուն համար: Այդ օրը, գերման զինուորներ պիտի մտնէին ու զբաւէին քաղաքը:



ԶՕՐԱՎԱՐ ՖՕՆ ՄՈՒԹԹԷ

Գերման բանակին ընդհ. Սպայակոյտի պետը (1914)

Գերման հրամանատարը, զօրավար Սեքսթուս ֆօն Արնէմ, Պրիւքսէլի պատերուն վրայ փակցնել տուաւ հետեւեալ յայտարարութիւնը:—

«Գերման զինուորները Պրիւքսէլի մէջէն պիտի անցնին այսօր և յաջորդ օրերուն, և պարագաներու բերումով ստիպուած են քաղաքէն բնակարան, անուշուր ու պաշար պահանջել: Այս բոլորը պիտի կարգադրուին քաղաքապետարանի հեղինակութեանց միջոցաւ:

«Կ'ակնկալեմ որ բնակչութիւնը, առանց դիմադրութեան, համակերպի պատերազմական այս անհրաժեշտութիւններուն, ու մանաւանդ չփորձէ վատնել զինուորներուն ապահովութիւնը, այլ փութայ հայթայթել պահանջուած պաշարը:

«Այդ պարագային, ամէն կերպով կ'երաշխաւորեմ քաղաքին պահպանումը, և իր բնակիչներուն ապահովութիւնը:


«Եթէ, սակայն, հոս ալ յարձակում գործուի զինուորներու դէմ, ինչպէս դժբաղդաբար ուրիշ տեղեր պատահած է, եթէ շէնքերն այրուին կամ ո՛ն է տեսակ պայթում տեղի ունենայ, ես ստիպուած պիտի ըլլամ ամենախիստ միջոցներ ձեռք առնել:

Զօրաբաժնի հրամանատար, զօրավար Սիստրուս ֆօն Արնէմ»


Առաւօտուն, անաղմուկ քաղաքիւններ հաւաքուեցան քաղաքին սիրտը գտնուող գլխաւոր փողոցին մէջ: Յայտնի էր որ, գերման Ընդհանուր Սպայակոյտը հրամայած էր մուտքը կարելի եղածին չափ տագնաօրիչ ընել: Փոխանակ Լիէժէն մինչեւ հոս կուտելով վտիտցած շարքերով զօրանցք մը կատարելու, թարմ զօրաբաժին մը բերուեցաւ: Պրիւքսէլի ժողովուրդը կ'ըստատէր պատերազմէն յոգնած և ուժասպառ զինուորներ տեսնել — մարդիկ՝ որոնք կրէին վէրքերու սպիները, ու պատռտած համազգեստ: Իրականութիւնը բոլորովին տարբեր էր:

Ժամը երկու քէն անմիջապէս վերջ, հրետանի հեռուոր թնդիւնը, Գերմաններուն մօտենալուն յայտարար նշանը կուտար: Յետոյ, լսուեցաւ երաժշտութիւնը, և յաղթական բանակին յատուցապահները երեւցան: Զինուորները 40,000 հոգի կը հաշուուէին, ու կը ներկայացնէին գերման բանակին բոլոր ծիւղերը, ամէնքն ալ թարմ, անթերի զրկեստուորութեամբ և զինատրու մով, հանդիսատեսներու հիացումը գրգռելու համար, մինչ ժողովուրդը, մեծ ու պզտիկ գունատ ու բարկութեանէն անխօս, կը դիտէր զարմացումով ու սարսափով:

Զինուորները իսկայն գրաւեցին քաղաքին զանազան ռազմագիտական կէտերը: Անմիջա-



ԺՕՅՈՒ, ՄՐԵՆԷԼ, ԿՈՒԼԹԷՆԻ ՆԻ ԲՕ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ



ՊԵՂՖՈՒՒ ՄՈՋՆԱՔԱՂԱՔԸ

Հսկայ առիւծը որուն դէմքը դէպի Գերմանիա դարձած է

կան ջարդի վախերը հանդարտած էին: Ձին ուռնները, փոխանակ թալանելու, եռանդ մը ունէին, իրենց դրամին առատութեամբն ու ծախսելու յօժարութեամբը՝ սպացոյցը տալու գերման ուժին և ճարտարութեան: Մ. Մաքս տակաւին պատասխանատու կը նկատուէր տեղային վարչութեան մանրամասնութիւններուն համար: Գերմանները նշանակեցին իրենց քաղաքային կառավարիչը, որ բարձրագոյն հեղինակութիւնը կը ներկայացնէր: Քաղաքին վարչութիւնը իրենց ձեռքն առնելէ վերջ, Գերմաններուն առաջին պահանջներէն մէկն եղաւ ութը միլիոն ոսկիի պատերազմական տուգանք մը: Բայց, քաղաքապետը պատասխանեց թէ՛ անկարելի պիտի ըլլար գոհացում տալ այս պահանջին, քանի որ քաղաքին դրամը Անվէրս փոխադրուած էր: Գերմաններուն Պրիւքսէլ մուտքովը, պատերազմին առաջին տեսարանը կը վերջանար:

Պելժերը իրենց պարտականութիւնը լաւ կատարած էին: Անոնք յաջողեցան անակնկալ կերպով յապաղել գերման յառաջացումը, ժամանակ տալով Ֆրանսայի, որ հաւաքէ իր ուժերը, և առիթ տալով Անգլիոյ, որ Ֆրանսայի մէջ ցամաք հանէ իր կատարելագոյն սպառազինուած բանակները: Պատերազմը հիմա նոր փուլի մը մէջ կը մտնէր: Փոխանակ Պելժիգայի սահմանափակ ճակատներուն վրայ, բազմաազարդ փոքր ուժերու միջև տեղի ունեցող ընդհարումներու, այժմ Ֆրանսայի բանակները, իրենց թիկունք ունենալով Անգլիացիները, պիտի կռուէին Գերմանիոյ ուժերուն դէմ, նախ Պելժիգայի և ապա Ֆրանսայի հողին վրայ: Գերմանիա պատրաստած էր իր հսկայ հարուածը: Այդ հարուածը իջնալու վրայ էր «կայծակի մը պէս», ինչպէս կ'ըսէ գերման յատկանշական բացատրութիւնը:

ՎԵՐՋ ԺԵ. ԳԼՈՒԽԻ

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՐՉԱԿՈՂԱԿԱՆՐ ԱՆՉԱՍԻ ՄԷՉ

Ֆրանսացիները Ալզաս կ'արեաւեն. — Քննադատութիւններ զօրավար Ժօֆուի ռազմավարութեան մասին. — Իր կեանքը. — Սահմանազրուիւններ կը խառնուելուին. — Պելժոն՝ խարխիս Ֆրանսացիներուն. — Ֆրանսական սահմանազրուիլի պատշաճութիւնները. — Յարձակողականին նպատակը. — Խնդրումը Ալզաս-Լոռէնի մէջ. — Գերման յարձակողականի հաւանականութիւնը. — Ֆրանսական նախնական յարձակումներ. — Թան, Ալքրիս եւ Միւլհաուզեն կը գրաւուին. — Գերմանական հսկայարձակումը կը սխալէ Ֆրանսացիները քառուիլ. — Կը հաստատուի որ Ֆրանսական հրետանին գերազանց է. — Ֆրանսացիները լրջօրէն կ'արեաւեն Ալզաս. — Գերմանները խառնաժողով փախուսի կը մատուցին. — Թան եւ Միւլհաուզեն կրկին կը գրաւուին. — Կանխահաս ցնծութիւններ Բարիզի մէջ. — Գերման հսկայարձակումը Ֆրանսացիները կը վանէ կորսուած նահանգներէն:

Օգոստոս 2ին, Գերմանները բռնարարեցին Լիւքսէնպուրկի չէղոքութիւնը. 3ին՝ Պելժիգան սասպատակեցին և 3էն 5 փորձեցին Լիէժի բերդերէն ոմանք առնել, ձեռքի հարուածով մը: Երկու օր վերջ, Ֆրանսացիները օգնութեան փութալով Պելժերուն, միացան իրենց նոր դաշնակիցներուն, մինչդեռ նոյն ատեն, Ֆրանսական վաշտ մը որ Պելժօնէն կուգար — Գերմանիոյ, Ֆրանսայի և Զուիցերիոյ սահմանազրուիւններուն միացման կէտին վրայ — յառաջացաւ դէպի Վերին Ալզաս, և իրիկուան դէմ գրաւեց Ալքրիսը: Յաջորդ օրը, Ֆրանսացիները Միւլհաուզէն մտան, և Ֆրանսական ընդհանուր հրամանատար զօրավար Ժօֆու հետեւեալ յայտարարութիւնը շրջաբերութեան հանեց Ալզասցիներուն մէջ:


«Ալզասի զաւակներ,»

Քառասուն և չորս տարուան ցաւազին սպասումէ մը վերջ, Ֆրանսացի զինուորներ, ահա՛ անգամ մը ևս ոտք կը դնեն ձեր ազնիւ երկրին վրայ: Անոնք, ռազմիկներն են վրէժի մեծ գործին, ինչ որ մեծ յուզում ու մեծ հրպարտութիւն կը ներշնչէ անոնց:

«Այս գործը ի գլուխ հանելու համար, անոնք իրենց կեանքերը զոհարեցին: Ֆրանսական ազգը միաձայնութեամբ յառաջ կը մղէ զանոնք, ու անոնց դրօշին ծալքերուն մէջ արձանագրուած են «Իրաւունք և Ազատութիւն» մոգական բառերը: Կեցցէ՛ Ալզաս Կեցցէ՛ Ֆրանսա:»

Ընդհ. հրատեսուսար ֆրնս. բանակներուն ԺՕՖՈՒ»

Շատեր խստօրէն քննադատած են զօրավար Ժօֆուի ռազմավարութիւնը, զինուորները Ալզաս նետելուն համար ա՛յնպիսի ատեն մը, երբ ամէն մէկ տրամադրելի զինուորի և թնդանօթի պէտք կար Պելժիգայի մէջ: Բայց, արդար ըլլալու համար Ֆրանսայի սպարապետին հանդէպ, պէտք է ըսել որ, այն ատենները, բազմաթիւ փորձ քննադատներ կ'արդարացնէին զայն: Ծնած 1852ին, զօրավար Ժօֆու, Լորտ Բիչնէրի նման, տակաւին ուսանող էր, երբ Ֆրանսա-բերուսիական պատերազմը ծագեցաւ: Գործեալ, Լորտ Բիչնէրի նման, ճարտարագիտութիւն ուսած էր, երեք տարի աշխատած էր Բարիզի նոր ամրութիւնները շինելու գործին մէջ: 1885ին, մասնակցեցաւ Յորմոզա զրկուած արչաւախումբին, ու յետոյ կազմակերպեց Վերին Թօնքիսի ամրութիւնները: Վերջապէս, թէ՛ Ֆրանսական Մայր Հայրենիքին և թէ՛ գաղթականութեանց մէջ, զանազան պաշտօններ վարելէ վերջ, 1911ին ընդհանուր սպայակոյտի պետ նշանակուեցաւ: Անազմուկ, լուսկեաց, ու տիրական, ան երբէք թոյլ չպիտի տար որ զուտ քաղաքական նկատումներ իշխեն իր ռազմավարութեան. Մաքմահօն Սեաան զացած էր, որովհետեւ Բարիզի քաղաքագէտները այդպէս հրամայած էին: Սեաանէն վերջ, Կամպէզդա իր ա՛յնքան ճիգերով ստեղծած բանակներուն՝ ազնտարեր շարժումներ հրամայեց Պուտոյէն: Բայց Ժօֆու, ո՛չ Մաքմահօն էր, ո՛չ ալ Պուտոյէն: «Կը վստահացնեմ ձեզ որ, կ'ըսէր Ֆրանսայի պատերազմական նախորարը Անգլիացի օրագրողի մը, երբ պատերազմը նոր էր սկսած, եթէ ևս ինքնա-



Յրանգո-գերման սահմանադրւելին քարտէսը

քարին տեղում ընթացին, — պայքար մը որուն մէջ մասնաք գերման ազգին ազգային համար»:

Քայգէրին խորհրդածութիւնները արդարացի էին: Նարոյէն Գ. աքտորի մէջ բսած էր թէ՛ 1870-71ին, Յրանսացիները պարտուած էին, որովհետեւ չէին հասկցած երկաթուղիներու արժէքը: Գերմանները իրաւունք չպիտի ունենան զանգատելու թէ Քայգէրը չէր հայթայթած փոխադրութեան յարմարագոյն միջոցները: Արդարեւ, ոչ մէկ բանակ այնքան լաւ կազմակերպուած մեքենական զիւրութիւններ ունեցած էր, որքան գերմանական բանակը:

Այդասի ֆրանսական արշաւանքը ձախ

ղած էր, բայց իրր սաղմագիտական շարժում, ձախողանք մըն էր արդեօք: Ժամանակը ցոյց պիտի տար: Ան պնդացոյց Յրանսացիներուն բարոյական կորովը, համոզեց դանձաբ թէ՛ առանձին առանձին առնելով, Յրանսայի զինուորը աւելի կ'արժէր գերման զինուորէն, հաւանաբար արգիլեց Գերմանները Նանսիի անպաշտօտ շրջանակէն ներս մտնելով ֆրանսական զօրանաւաքը խանգարելէ, և Սարպուրկի վրայ յաւաշացումը ստիպեց գերման վարիչները, որ հարաւ, դէպի Մէօրթ քաղն ուժեր որոնք աւելի ազդուօրէն կրնային դործածուիլ Մէօրթի վրայ, վերտէծնի և Սէօանի միջև:

ՎԵՐՁ ԺՁ. ԳԼՈՒԽԻ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԳԵՐՄԱՆ ՎԱՆՏԱԼԻԶՄԸ ՊԵՆՃԻԳԱՅԻ ՄԷՋ


Ֆրուսիական «մշակոյթը». — Մոսսէնի անօգուտ բողոքը. — Թրայքէի սիրապետութիւնը. — Պելնիգայի հողը. — Ճարտարաւես եւ անկախութիւն. — Արուես ու քաղաքային կեանք. — Պատերազմելու գերմանական մեթոտներ. — Վիգէ. — Լիքժ. — Տիւան. — Նամիւ. — Լուվէն. — Իր պատմութիւնը. — Շէնքեր. — Համալսարանը. — Լուվէն եւ Անգլիա. — Լուվէնի քանդումը. — Մալին. — Իր հինաւուրց փառքը. — Ս. Ռոմպո. — Հին տուներ. Մալինի քանդումը. — Թերմոն. — Իր ամբողջական աւերումը. — Ալո. — Տէյնգ եւ Թիլք. — Անվերս. — Երկրագործութիւնը:

Պատերազմին սկիզբը, անմիջապէս յայտնի եղաւ որ Գերմանները մտադրութիւն չունէին իրենց անցնելիք գիւղերուն և քաղաքներուն խնայելու պատերազմին սարսափներէն ո՛նէ մէկը: Ասիկա, հաւանաբար, շատ զարմանք չպատճառեց աշխարհի ուրիշ մասերուն մէջ Գերմանիոյ մղած կռիւները ուսումնասիրողներուն: 1900 Յուլիսին, Քայգէր Վելչէլմ Բ., Չինաստանի մէջ Պօքսէօի շարժումը զսպելու զրկուող գերման զինուորներուն ուղղելով խօսքը, կ'ըսէր. — «Ով որ ձեր ձեռքն իյնայ, դատապարտուած պէտք է նկատուի, ձիշտ ինչպէս որ հազար տարի առաջ Հոնները(*) Աշիլլայի առաջ-

նորդութեամբ այնպիսի անուն մը վաստակեցան, որ ցարդ հզօր է աւանդութեան ու պատմութեան մէջ:» Այս խօսքը նոյնքան հակառակ կ'երեւի «մշակոյթ»ի գաղափարականին, — «մշակոյթ» մը՝ որուն առաքեալը կը դաւանի ինքզինքը Գերման կայսրութիւնը — որքան բրուսիական զինուորներու արարքները հակասական են քաղաքակիրթ ժողովուրդներու կողմէ ընդունուած պատերազմի գաղափարին: Բայց, այնքան դժուար չպիտի ըլլայ բացատրել այս հակասութիւնը:

Գերմանական «մշակոյթ»ին արմատական սկզբունքը սա է. — գերման քաղաքակիրթութիւնը լաւագոյնն է, հետեւաբար Գերմանիոյ պարտականութիւնն է դայն ամէն տեղ պարտադրել: Մը Պրեքերթըն, «Ով է պատասխանատուն» զիրքին մէջ կ'ըսէ. — «Գերմանները քսաներորդ

(*) Հոն. Թաթար-մոնղոլ ցեղ մը, ջարդարար, կողոպտող, սրիկայ. իրենց պետը Աղիլլա նշանաւոր է պատմութեան մէջ, որ եւրոպա անցնելով ահաւոր չարիքներ գործած է:



ԳԵՐՄԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԲԱՅՈՒՄԸ ԿՐԱԿԻՆ ԱՐԳԻՆՆԵՐԸ
 Խորակոծութիւնը ազդեցիկ ընելու համար, Գերմանները պատերազմէն շատ առաջ, մասնաւոր ուսումնասիրութիւններով գտած էին թէ՛ ուղեբերը ինչ բարձրութենէ ձգուելու էին

ուսումնականներ, ինչպէս Ատրիան Պարլան, նը-
շանաւոր լատինագէտը, Անդրէաս Վէսալիաս,
հիմնադիր արդի մարդակազմութեան, Փօն
Հէլմօնդ նշանաւոր քիմիագէտը, և ուրիշ բազ-
մաթիւ գիտուններ, որոնք իրենց մասնաւոր
գուրգուրանքին առարկայ ըրած էին միշտ հա-
մալսարանը, հետեւաբար նաև Լուվէն քաղաքը:


Այսպիսի ուսումնատեղը ու խաղաղիկ մթ-
նոլորտ մը և ոգի մը ունէր այս հնօրեայ
քաղաքը, որուն վրայ Օգոստոսի այդ Երեք-
շաբթին պայթեցաւ արդի Հոնքերուն ամբողջ
քանդումն ու կողոպուտը, աւերն ու վայրա-
գութիւնը:

Քաղաքին քանդումը ո՛չ արկածի ար-
դիւնք էր, ո՛չ ալ ուժակոծութեան, այլ այդ
նպատակին համար յատկապէս պատրաստուած
գերման զինուորներու սխթեմաթիկ ու բժա-
խնդիր գործունէութեան: Գերմանները նախ
ուզեցին պաշտպանել իրենց գործը, ըսելով թէ
իրենք ստիպուած էին 24 ժամ կողուիլ բնակ
չութեան հետ, և թէ այդ կողուի միջոցին էր
որ քաղաքը քանդուած էր: Ապացուցուեցաւ,
սակայն, որ ասպատակներուն այս անպաշտ-
պան քաղաքը մուտք գործելէն առաջ, քաղա-
քային պահակները զինաթափ եղած էին, ու
խիստ խուզարկութիւնով մը հաւաքուած էին
բնակիչներուն բոլոր հին ու նոր զէնքերը: Ա-
ւելի հաւանական բացատրութիւն մը սա է թէ՛
գերման զինուորներու խումբ մը, որ Պելժերու
կողմէ վճռուած էր Մալինէն, ետ գէպի Լու-
վէն կուգար. քաղաքին մէջ գտնուող իրենց
զինով ընկերները — Գերմաններէ շատերը սկսեր
էին արդէն ինքզինքնին գինովութեան ապլ —
կարծելով թէ Պելժերու կողմէ յարձակում մը
կը կրեն, իրենց իսկ ընկերներուն վրայ կրակ
բացին, ու ա՛յս այս սխալին հետեւանքով քա-
ղաքը այրուեցաւ, բազմաթիւ արու բնակիչներ
քաղաքէն հեռացուեցան ու հրացանազարկ
եղան: Զինուորները շատ կանոնաւոր կերպով
յառաջ տարին հրճիգութեան գործը: Նախ
սկսաւ քաղաքին սրտէն, և յետոյ տունէ տուն,
փողոցէ փողոց տարածուեցաւ, մինչեւ զուրսի
թաղերը: Բնակիչները չէին դիմադրեր, որով-
հետեւ կա՛մ արդէն վճռուած էին և կա՛մ թէ
չափէն աւելի սարսափահար վիճակ մը ունէին:
Այսպէս քաղաքը կրակելու գործը շարունակ-
ուեցաւ 36 ժամէն աւելի:

Կրակին ամէնէն աւելի ճարակ եղած մա-
սին մէջ կը գտնուէին համալսարանը, գրա-
տունը և Ս. Պետրոսի եկեղեցին: Նախ, լուր


տարածուեցաւ թէ՛ հռչակաւոր քաղաքապե-
տարանն ալ փնջացուած էր, բայց յետոյ յայտնի
եղաւ որ Գերմանները իրենք ազատած էին
զայն բոցերուն ճարակ ըլլալէն, և գոնէ ար-
տաքինը անվթար կը մնայ. աւերումի և սեւ-
ցած կոյտերու խառնաշփոթութեան մէջ: Ս.
Պետրոս եկեղեցիին եղած վնասը բոլորովին ան-
դարմանելի չէր, ու գերման զինուորներ
փրկած էին նկարները, անտարակոյս միտք ու-
նենալով զանոնք Պերլին փոխադրել: Գալով
համալսարանին, համալսարան մը չի կրնար այ-
րուիլ: Շէնքերէ ու արուեստի գործերէն աւելի,
ան ոգեկան իր մը, կազմակերպութիւն մը ի-
տէալ մըն է վստահօրէն, և կը յուսանք որ
Լուվէնի համալսարանը իր քոյր համալսարան-
ներու օգնութեամբ, դարձեալ պիտի կանգնի
իրեն արուած այս ամենավատ ու ամենածանր
հարուածէն վերջ. թէեւ զրկուած ըլլայ իր 500
տարուայ շէնքերէն: Այս ամէն շէնքերու կո-
րուստը, սակայն, բաղդատաբար կը կորսնցնէ
ուժգնութիւնը, երբ յիշենք Լուվէնի գրատունը,
որ թէեւ Պօպրեանէն կամ քրիտանական թան-
գարանէն աւելի փոքր, տակաւին աշխարհա-
հռչակ էր ու Եւրոպայի լաւագոյն թանգարան-
ներէն մէկը, ուր կը գտնուէին դարերու ըն-
թացքին հաւաքուած 100,000է աւելի թանկա-
մէք ու երբեմն անգին հատորներ: Կորուստը
անգարմանելի էր: Որքան ատեն որ աշխարհ
գոյութիւն ունի, ուսումնականները պիտի զգան
այս կորուստը, որ սակայն կատարուեցաւ յա-
նուն «մշակութեամբ»:

Լուվէնէն յետոյ Մալինն է պատմական ու
հնաբանական տեսակէտէ ամէնէն հետաքրքրա-
կան քաղաքը, հրապուրիչ գեղեցկութեամբ,
որ Պրիւքսէլէն առաջ մայրաքաղաք էր Պել-
ճիգոյի: Երբեմնի զուարթ ու փարթամ այս քա-
ղաքը, հիմա անցեալ փառքերու ու ճոխու-
թեանց յիշատակով կ'ապրէր: Քաղաքին ու նաև
անոր կեանքին կեդրոնը կը կազմէր մեծ հրա-
պարակը, ուր կը գտնուէին մեծ ու պատկա-
ռելի շինութիւններ, քաղաքին պաշտպան Տի-
րուհիին արձանը, և այլն: Բայց այս հրապա-
րակը այցելողին միտքն և ուշադրութիւնը կը
կեդրոնանար մէկ առարկայի մը վրայ միայն —
Ս. Ռօմպոյի հսկայ ու սիրուն Մայր Եկեղեցին,
իր երկնալացիկ աշտարակովը, որ սակայն զայն
կառուցանողներուն մտադրածին հազիւ կէսն
էր: Եկեղեցին խաչաձև էր, սուր տանիքով,
բազմաթիւ աշտարակներով, վսեմ ու պատ-
կառազու շէնք մը իր ամբողջութեանը մէջ:



Գերմանական նշանաւոր պաշարման թնդանօթերէն մին՝ որ անջատուած է իր յենարանէն,
փոխադրութիւնը դուրացնելու համար

Եկեղեցիին ներսն ալ շատ ճոխ էր. գլխաւոր ուրիշ եկեղեցիներ ալ, որոնց ամենուն մէջ կա-
գանձը կը կազմէին մանաւանդ կարգ մը նշա-
նաւոր նկարներ, մասնաւորաբար Վան Տիքի
մէկ «Սաչելութիւնը», նկարուած 1627ին: Օյ ինակի
համար, 15րդ դարու կառուցուած Ս. Ժան Եկե-
ղեցին, բազմաթիւ գանձերէ զատ, կը պա-



Վերի պատկերին մէջ ցոյց տրուած թնդանօթին յենարանը

լատին, և միւսները մեծ մասամբ ուղղուած էին հանրային շէնքերու: Զոհերուն թիւը բաւական նշանակելի էր: Ուրիշ առիթներով, գերման օդանաւեր դարձեալ այցելեցին Անվէրս և հարուածուած շէնքերուն մէջ կար նաև հիւանդանոց մը, որուն վրայ շատ յատուկ կերպով դրուած էր կարմիր խաչի նշանը: Պելժ իշխանութիւնները անմիջապէս նախազգուշացման միջոցներ ձեռք առին Անվէրսի նշանաւոր Մայր Եկեղեցիին արժէքաւոր առարկաները ապահով տեղ մը փոխադրելով: Փոխադրուած նկարներուն մէջ կար նաև Ռիւպէնսի մէկ գլուխ-գործոցը — «Սաչէն վար էջքը»:

Բայց որքան ալ քննենք այս աւերումի և քանդումի խնդիրը — այնքան կատարեալ և ահուկի կ'ըլլան ապացոյցները աւերածութեան այն հետքերուն, զորս գերման ուժերը իրենց մշակոյթը տարածելու ատեն թողուցին իրենց ետևէն: Անշուշտ պատրազմը — մանաւանդ պատերազմը ներկայ պայթուցիկներու, և գիտութեան զիրար սպաննելու համար հնարած միջոցներու օգնութեամբ — անկարելի էր որ չմղուէր առանց խառնակութեան: Կարգ մը պարագաներու մէջ, Գերմաններուն ձեռք առած զինուորական միջոցները կ'արդարանան: Բայց շատ մը ուրիշ պարագաներու պատմութիւնը չկրնար ներել անոնց անսանց աւերները, որոնք պարզապէս ներշնչուած էին վրէժխնդրութենէ կամ անասնական քանդումի ցանկութենէ մը:

Ամբողջ երկրին մէջ հունձքերու և ագարակային արտադրութիւններու կորուստը անհաշուելի է: Պատերազմէն առաջ, Պելժիգա խիտ բնակչութիւն մը ունէր, որոնց ամենքն ալ աշխատասէր ու ժրջամ: Պելժիգան հասցուցեր էին իր ծաղկած վիճակին: Անսովոր բան մը չէր տեսնել նոյնիոկ ամենափոքր տղաքը, որոնք իրենց պարզուկ ու դիւրին բաժինը կ'ըստանձնէին երկրագործական աշխատանքի:



ՀէՐ ԳՐՈՒՆ ՅՕՆ ՊՈՅԼԷՆ

տութիւններու մէջ. ու այս ընդհանուր և անխոնջ աշխատանքն էր որ երկիրը միշտ յաջողութեան ճամբուն մէջ կը պահէր: Սակայն, այս փոքր զբաղումները շատ նեղ անց մը կը թողուն իրենց տէրերուն համար, հանգիստի ու չքաւորութեան միջև: Անգլիա ապաստանած հազարաւոր փախստականներուն մեծ մասը բացարձակ չքաւորութեան մէջ էին: Իրենց տունները քանդուած ու այրուած էին, իրենց ձիերն ու շունները փոխցուած էին, իրենց հունձքերը բոլորովին փճացուած, ու իրենց հողն իսկ այնպիսի վիճակի մը մէջ ձգուած էր որ, տարիներու մշակութիւնը միայն կրնար զայն վերստին հասցնել իր նախկին պայմաններուն, որ արդիւնք էր մանրակրկիտ ու ժրջան աշխատանքի:


ՎԵՐՋ ԺԷ. ԳԼՈՒԽԻ

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԳԵՐՄԱՆ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ


Կազմութիւն պեղնիական յանձնախումբին. — Յանձնախումբին առաջին սեղեկագիրը. — Գերման վկայութիւնները կը հակասեն. — Գիւղերու մէջ գործուած անգթութիւններ. — Հրամանատար Ժիլսոնի վկայութիւնը. — Կիներն ու տղաքը իբր վահան կը գործածուին. — Երկրորդ սեղեկագիր. — Կսրասուս, կախաղան եւ այլուս. — Լուվէնի համալսարանը. — Պելժերու ստիպանքներ. — Ամփոփում անգթութեանց. — Երրորդ սեղեկագիր. — Չորրորդ սեղեկագիր. — Սրբապղծութեան ապացոյցներ. — Սպաննութիւն իբր «փոխվրէժ». — Սպաննութիւն ըստ բախտի. — Գերմանական պաշտամունք բազուսի. — Ահրեօթի խժոժութիւնները. — Վերջաբան:

Հիմա կուզանք ամենացաւաղին ու փափուկ խնդրի մը, — թէ ինչ ընթացք բռնեցին Գերմանները ոչ-պատերազմիկներու կեանքին ու ազատութիւններուն հանդէպ: Այս նիւթը, ինքնին արդէն դժուար ու բժախնդիր քննութեան մը համար, ա'լ աւելի կը դժուարանայ բազմաթիւ անհիմն զրոյցներով, զորս սարսափահար ժողովուրդը կամ անպատասխանատու մարդիկ կը պատմէին առանց ապացոյցի: Նկատի ունենալով այս անհիմն զրոյցներուն առթած անպատեհութիւնները, պելժ կառավարութիւնը իմաստուն կարգադրութեամբ մը յանձնախումբ մը կարգեց, որուն պաշտօնն էր գոհացուցիչ պայմաններու վրայ հիմնուած, և կշիռ ու խոհականութիւն ունեցող մարդոց կողմէ հաստատուած փաստեր հաւաքել, գերման անգթութեանց մասին: Պելժ կառավարութիւնը կարելին ըրաւ, որպէս զի քննական այս ձեռնարկը բժախնդրորէն ճշգրիտ ըլլար, և կարելի ըլլար զայն անվախօրէն ներկայացնել ազագայ պատմաբանին վերջնական դատումին, ինչպէս նաև պատերազմէն վերջը, Գերմանիոյ սխալ արարքները դատելու համար կազմուելիք միջազգային դատարանին: Առաջին տեղեկագիրը հրատարակուեցաւ Լոնտոնի պելժ պեսպանին կողմէ, 1914 Օգոստոսի 1-ին:



ԶՕՐԱՎՈՐ ՎՕՆԹԵՐՍ ԵՒ ԻՐ ԹԻԵՆՍՆԱԿՆԵՐ

Այս զօրավարն էր որ վարեց Պելժիգայի մէջ Գերմաններուն դէմ կատարուած ռազմական շարժումներուն մեծ մասը



Պէլժուռի մէջ գրաւուած գերման թնդանօթներ

Շատ տեղերու արու բնակչութիւնը Գերմանիա դրկուած է, կ'երեւի հունձքի աշխատութիւնները կատարելու համար, ինչպէս սովորութիւն էր հին օրերուն: Շատեր բռնութեան տակ հարկադրուած են Գերմաններուն իբր առաջնորդ ծառայել, և խրամներ փորել անոնց համար: Բազմաթիւ վկաներ կը հաւաստեն թէ իրենց յառաջացումներուն, կամ նոյնիսկ յարձակումներուն միջոցին, Գերմանները իրենց առաջին շարքերուն մէջ քաղաքային բնակչութիւնէն կիներ ու մարդիկ կը դնեն, որպէս զի մեր զինուորները արգելուին կրակել: Ըստ պիտ սպաներու և զինուորներու վկայութեան, գերման գունդեր չեն վարանիր սպիտակ դրօշ կամ Կարմիր Սաչի դրօշ պարզել անարգել մօտենալու համար մեր զօրքերուն: Միւս կողմէ, անոնք կրակ կը բանան մեր շարժական հիւանդանոցներուն վրայ և կը խոշտանգեն հիւանդապահները, և չեն քաշուիր չարչարել, նոյնիսկ սպաննել վիրաւորները: Մասնաւորաբար կղերականները ընտրած են իբր նիւթ իրենց գազանութեանց: Վերջապէս, ի ձեռին ունինք ընդարձակող զնդակներ, զորս թշնամին լքած էր Վէրխմէրի մէջ, ինչպէս նաև բժշկական վկայագրեր, որոնք ցոյց կուտան թէ բազմաթիւ վէրքեր արդիւնք են այս տեսակ գնտակներու»:

Երրորդ տեղեկագիրը: որ Սեպտեմբեր 10ին Անվերսի մէջ թուագրուած էր, Լուվէնի դէպ-

քերու մասին կարգ մը նոր ապացոյցներէ զատ, կուտայ նաև Վիդէի խնդրոյն մանրամասնութիւնները: Ստորեւ կու տանք քանի մը հատուածներ այս երրորդ տեղեկագրէն.

«Յանձնախո. մեր վերստին ձեռք առած է Վիդէի դէպքերուն մասին Պրիւքսէի մէջ բացուած քննութիւնը: Վիդէ առաջին պիտ քաղաքն էր, որուն վրայ Գերմանները փորձեցին այն սիսթէմը, զոր յետագայ օրերու մէջ մեր բազմաթիւ քաղաքներուն և գիւղերուն վրայ կիրարկեցին: Հետեւաբար, մենք ուզեցինք ամենարժանիւղի կերպով քննել թէ ո՞րքան ճշմարիտ են գերմանական մեկնութիւնները, որոնց համեմատ իբր թէ Վիդէի բնակչութիւնը մասնակցեցաւ քաղաքին պաշտպանութեան, կամ նոյնիսկ քաղաքին գրաւումէն վերջ, ըմբոստացաւ Գերմաններուն դէմ:

Բազմաթիւ արժանահաւատ վկաներու յայտարարութիւններէն ապացուցուած է որ, բընակիչները երբէք չեն մասնակցած Օգոստոս 4ին Լիքսէի ծանծաղուտին ու նոյնիսկ Վիդէի մէջ տեղի ունեցող կռիւներուն:

Կը հաստատուի որ Վիդէ քաղաքը ամբողջովին հրոյ ճարակ եղաւ, ի բաց առեալ կրօնական հաստատութիւնէ մը, զոր կ'երեւի թէ յարգեցին, և թէ այս քաղաքէն ու Գան գիւղէն բազմաթիւ քաղաքացիներ հրացանազարկ եղան:

Իրենց վայրագութիւնները արդարացնելու



ՄՐ. ՊՈՆՍԻ ԼՕ

համար, Գերմանները կը յայտարարէին թէ ժողովուրդը զէնքով դիմադրած է այն բոլոր տեղերը, ուր իրենք հրացանի բռնած են քաղաքացիները, կամ այրած ու թալանած քաղաքները: Եթէ նոյնիսկ կարգ մը այս տեսակ կըղղիացած դէպքեր պատահած են, ամէն պարագայի տակ ատիկա ո՛րէ պատերազմի մէջ պատահածէն աւելի չէ, և եթէ Գերմանները բաւականացած ըլլային միմիայն յանցաւորները մահուամբ պատժելով, մեզի պիտի մնար պարզապէս խոնարհիլ զինուորական օրէնքի դժբնդակութեան առջև:

Գերմանները իրենց օրաթերթերուն մէջ կը հաւաստեն թէ՛ թշնամիին դէմ գործածուելու համար, պիտ կառավարութիւնը զէնք բաժնած էր ժողովուրդին: Կ'աւելցնեն նաև թէ կաթոլիկ դերը տեսակ մը սուրբ պատերազմի կը մղէր իր ամբողջ հօտը, Գերմանները ջարդելու նպատակով: Վերջապէս, կիններուն ջարդը արդարացընելու համար, կը յայտարարեն թէ կինները ինքզինքնին էրիկմարդոց չափ կատաղի ցոյց տուին ու նոյնիսկ եռացած իւղ թափեցին պատուհաններէն վար՝ անցնող զինուորներուն վրայ:

Այս բոլոր վկայութիւնները սուտ են: Պիտ իշխանութիւնները չէ թէ միայն զէնք չեն բաժնած, այլ և թշնամիին մօտենալուն հետ զինաթափ ըրած են ժողովուրդը, բռնի արարքներէ

զգուշացնելով զանոնք, և կղերը, անդադար հանդարտութիւն քարոզած է իր հօտին: Գալով կիններուն, եթէ բացառութիւն համարենք օտար թերթի մը մէջ երեւցած պատմութեան մը, որուն աղբիւրը կասկածելի է, ամէն բան ցոյց կուտայ թէ անոնց միտակ անձկութիւնն էր խոյս տալ այս անխիղճ պատերազմին սուրսափներէն:

Այս նկարագրուած և ապացուցուած խրժողովութիւններուն ճշմարիտ շարժառիթները երկու բան միայն կրնան ըլլալ: Մէկ կողմէ ժողովուրդը սարսափեցնելու և բարոյալքելու փափաքը, համաձայն գերման զինուորական հեղինակներուն անմարդկային տեսութիւններուն, միւս կողմէ՝ կողոպուտի փափաքը:

Այս հետազօտութիւններուն մէջ մօնք միմիայն կը յիշենք արժանահաւատ վկայութեանց վրայ հիմնուած իրողութիւններ: Կ'արժէ դիտել որ ցարդ մենք կարող եղանք օրէնքի, մարդկութեան, և քաղաքակրթութեան դէմ գործուած ոճիրներուն մէկ փոքր մասը միայն արձանագրել — ոճիրներ՝ որոնք ժամանակակից պատմութեան ամէնէն չարաչուք և ընդ վրդեցուցիչ էջը պիտի կազմեն ապահովարար: Եթէ մեր երկրին մէջ ալ միջազգային քննութիւն մը բացուի, ինչպէս որ Պալքաններու մէջ եղան Գարնէկիի Յանձնախումբին կողմէ, վստահ համոզուած ենք որ այդ քննութիւնը



ՄՍՐԱՋՍԵՏ ՅՕՆ ՏԷՐ ԿՈՒՑ

պիտի հաստատէ մեր հաւաստիքներուն ճշմարտութիւնը:»

Չորրորդ տեղեկագիրը, թուագրուած Սեպտեմբեր 17ին, կը զբաղի միմիայն Աէրշօթի վիճակով, որու մասին արդէն ասկէ առաջ խօսած էինք: Այսու հանդերձ, առնելով այն բարձր եղինակութիւնը, զոր ականաւոր անձերէ բաղկացիլ այս յանձնախումբը կը ներկայացընէ, յարմար կը դատենք տեղեկագրէն մէջ բերել քանի մը համառօտ կտորներ, որոնց նիւթը կազմող դէպքերուն համար Գերմանիայէն պատասխան պիտի պահանջուի քաղաքակիրթ մարդկութեան դատարանին առջեւ: Օրինակի համար, ահա թէ ինչպէս կը նկարագրէ տեղեկագիրը, Աէրշօթի գեղեցիկ եկեղեցիին վիճակը, որու կրօնական հոյակապ շինուածքները քանդուեցան ու սրբապղծուեցան Գերմաններուն կողմէ: —

«Եկեղեցին ողբալի վիճակ մը կը ներկայացնէ: Իր երեք դռները, ինչպէս նաև պահարանին դուռը, առաւել կամ նուազ այրած են: Ներսը, խորանները, խոստովանանքի խոցերը, երգահանները և աշտանակները կտոր կտոր եղած են, գանձանակները բռնութեամբ բացուած, սիւնները զարդարող փայտէ գոթական արձանները փրձուած հանուած են, ուրիշներ կրակէն մասամբ փձացած են: Տախտակամածը ծածկուած էր չոր խոտով, որուն վրայ եկեղեցիին մէջ բռնի փակուած մեծ թիւով բնակիչներ օրերով քնացած էին»: —

Ուրիշ կարեւոր ամբաստանութիւն մը սա է թէ, հակառակ անոր որ Գերմանները կը ջանային միջազգային օրէնքի քօղին տակ ներկայացնել ոչ-պատերազմիկներու հանդէպ իրենց գործքերը, տակաւին ամենափոքր ջանքն իսկ չէին ըներ իրենց անգթութիւնները գոնէ արդարութեան մակերեսային ցոյցով մը մեղմելու: Այս մասն, պատուիրակութեան խորհրդական Մ. Օրց «մահապատիժին» վայրը այցելելէ վերջ կը գրէ. —

«Հոս, քաղաքէն դուրս, ճամբէն հարիւր հարտա դէպի ձախ դաշտի մը մէջ էր որ Գերմանները հրացանի բռնեցին քաղաքապետ թիւէմանս, իր զաւակը, եղբայրը և խումբ մը քաղաքացիներ: —

Քիչ մը փնտռուքէ վերջ, գտայ ճիշտ այն վայրը, ուր այս անմեղները զո՞ ինկան գերման կատաղութեան: Արիւնի սև ճապաղիքներ տակաւին ցոյց կուտային դահիճներուն կրակին տակ իւրաքանչիւր զո՞ի կեցած տեղը: —

Արեան այս բիծերը իրարմէ երկու հարտա հեռաւորութիւն ունէին, ինչ որ կը հաստատէ ականատեսներու վկայութիւնը թէ, վերջին վայրկեանին դահիճները գիւղացիներու շարքերուն մէջէն դատեցին իւրաքանչիւր երեք հոգիէն երկուքը եւ սպաննեցին զանոնք: Այսպէս, ի բացակայութեան ո՞ր և է տեսակ հարցափորձի կամ դատավարութեան, բախտն ու պատահմունքն էր որ կ'որոշէր մահապարտները: —

Այս տեղէն քանի մը քայլ անդին, նոր փորուած հողակոյտ մը և բարեկամ ձեռքերու կողմէ գաղտագողի տնկուած փոքրիկ խաչ մը ցոյց կուտան այն տեղը ուր կը հանգչին 27 զոհերուն մարմինները:»

Դատապարտութեան ու է խօսք աւելորդ է մահավճիռի գործադրութեան գերմանական այս մեթոտին քով. ուր «ի բացակայութեան ու է տեսակ հարցափորձի կամ դատավարութեան, բախտն ու պատահմունքն էր որ կ'որոշէր մահապարտները:» Եթէ այս բաները անտարակուսելիօրէն կատարուած չըլլային բազմաթիւ տեղերու մէջ, դժուար պիտի ըլլար անոնց կարելիութեանը հաւատալ, քաղաքակիրթ կարծուած ազգի մը մղած պատերազմին մէջ: —

Մ. Օրց շարունակելով Աէրշօթի մէջ կատարած իր անձնական զննութիւններու մասին խօսել, կը գրէ.

«Ըստ բախտի ընտրուած քանի մը տուն մտայ և բոլոր յարկերը վեր վար պտտեցայ: Ամէն տեղ կան կարասին տակնու վրայ եղած, պատուած և աղտոտած ու ամէնէն անարգ կերպով: Մասններուն դուռները կոտորուած բացուած են, պահարաններ ու դարակներ պարպուած են, ճերմակեղէններ և ուրիշ առարկաներ անիմաստ կերպով ցանուցիր նետուած են գետինները, պարապ շիշերու անհաւատալի թիւի մը հետ: —

Բարեկեցիկ տուններու մէջ, նկարները երկայնքէն կտրատուած են, իսկ արուեստի ուրիշ առարկաներ ջարդու փշուր եղած: Տուն մը մըտայ ուր գերման սպաններ իրենց բնակութիւնը հաստատել էին: Երբոր դրան չէմքին հասայ, թափուած գինիի հոտ մը մեր ուշադրութիւնը դարձուց հարիւրաւոր պարապ և կոտորած շիշերու, որոնք մուտքի սրահը, սանդուխը և նոյնիսկ պարտէզին վրայի բակը կը լեցնէին: Սենեակներուն անկարգութիւնը աննկարագրելի էր: Ննջասենեակները տակնու վրայ, խայտառակ անկողիներ, ու դարձեալ պարապ շիշեր անկո-

ղիններուն քով: Հիւրանոցը լեցուն էր անոնցմով, իսկ երկվեցեակներով գինիի գաւաթներ կը ծածկէին սեղանն ու սպասադարանները, որոնց քով կը գտնուէին պատուած թիկնաթոռներ ու բազմոց մը: Այս ամէնը ցոյց կուտային թէ, այս տունը օրերով ու գիշերներով շարունակ թատերավայրն եղած էր ամէնէն անարգ շոյութեանց, և գինարբուքի ընդհարմանց »

Նախորդ գլուխը կարգացողները պիտի յիշեն թէ Աէրշօթի մէջ էր ուր Գերմանները ամէնէն աւելի կը կարճէին իրաւունք ունենալ արիւնոտ վրիժառութիւններ և գազանային պատիմներ ի գործ դնելու, որովհետեւ գրաւող բանակին հրամանատարը գնդակի հարուածով մը սպաննուեցաւ քաղաքապետին տանը պատշգամին վրայ: Ու այս սպաննութիւնը, զոր Գերմանները վերագրեցին քաղաքապետին զաւկին, խոշոր աղէտներ բերաւ քաղաքին գլխուն: Հինգերորդ տեղեկագրին մեծագոյն մասը այս խնդրով կը զբաղի, և ուրիշ ապացոյցներու հետ կուտայ նաև քաղաքապետին կնոջ, Տիկին Թիլէմանսի մէկ գրաւոր յայտարարութիւնը: Այս յայտարարութեամբ տիկինը կը պատմէ պատահարը, և յայտնապէս ցոյց կուտայ որ քաղաքապետն ու իր ամբաստանեալ զաւակը բացարձակապէս անմասն են ոճիրին: —

Ի մտի ունենալով Գերմաններուն անկարգ

արեւցողութեան մրցումները, և անոնց հետեւեալ կոխները, — որուն անժխտելի ապացոյցը կը կազմեն Աէրշօթը գրեթէ ծածկող պարապ շիշերն ու տիրող տակնու վրայութիւնը — առնուազն աւելի հաւանական է որ զօրավարը սպաննուեցաւ անխորհրդաբար, քաղաքապետին տանը կողմէ արձակուած մոլորուն գնդակէ մը, քան թէ զոհն եղաւ սոսկ տղու մը կողմէ ի գործ դրուած կանխամտածուած ոճիրի մը: Արդարև, գոյութիւն չունէր ո՞ր և է մէկը որ կ'սրենար ըսել թէ տեսած էր հարուածը, և զէնքի ի խնդիր տունին մէջ կատարուած փնտռութիւնները բոլորովին ապարդիւն մնացին: Հարցափորձ չեղաւ: Պարզապէս որոշում տրուած էր սարսափեցուցիչ օրինակ մը տալ Պելժերուն: —

Ու, քանի որ անօգուտ է այլ ևս երկարել ապացոյցներու և վկայութեանց այս արդէն ծանրաբուն ցանկը, հոս կը փակենք յանձնախումբին տեղեկագիրներուն վրայ կատարած մեր քաղուածը: Կ'ուզենք միայն դիտել տալ, թէ այս հասարակ գազանային արարքներուն մէկ կարևոր մասը գինովութեան և անզուսպ գինուորներու վայրագ բնազդներու արդիւնքն ըլլալով հանդերձ, շատ բաներ բացայայտուէն կանխաւ ծրագրուած էին ու գործադրուեցան գերման վարիչներու որոշ հրամաններուն համաձայն: —

Վ Ե Ր Ջ Ժ Ը . Գ Լ Ո Ւ Խ Ի



Գ Լ ՈՒ Խ Ժ Թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՅԱՌՈՉԱՅՈՒՄԸ ԴԵՊԻ ԲԱՐԻՉ ՆԱՄԻՒՌԻ, ՇԱՐԼՐՈՒՌՈՒԱՅԻ ԵՒ ՄՕՆՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆԵՐԸ

Գերմաններուն նպատակը . — Պելնիգայի մեջէն արեւան մը՝ անխուսափելի, — Ֆրանսացիներուն ուժը արեւելեան սահմանագլուխին վրայ, եւ սկարուրիւնը հիւսիսային սահմանագլուխին վրայ . — Ամուրիւններու համար եղած ծախքը . — Գերմանական եւ Ֆրանսական ծրագիրներ . — Արագ յարձակողական մը հրամայական պահանջ Գերմաններուն համար . — Բրիտանական արեւախուսքը եւ իր տեղը գործարար ժողովուրդի ծրագիրներուն մեջ . — Զօրաւարժ, կազմութիւն եւ փոխադրութիւն բրիտանական բանակին դէպի Ֆրանսա . Պատերազմի բաւարարելու եւ Անգլիացիներուն դերը . — Բայդերն ու «արհամարհելի» անգլիական բանակը . — Գերմանները կը յառաջանան դէպի Սամայո . — Նամիւրի գրաւումը . — Շարլոտուայի մեջն ու մօտը բռնի անցք Սամայոն . — Մօնսի նակասամարքը :

Նախորդ գլուխներուն մէջ տեսանք որ, Լիէժի ամրոցներուն եւ պելժ բանակին ցոյց տուած արի ու վճռական դիմադրութիւնը բոլորովին տակնուվրայ ըրաւ գերմանական ծրագիրները : Թէն ճշմարիտ է որ պատերազմական ո՛ր եւ է գործողութիւն կարենայ կանխաւ պատրաստուած ծրագրի մը անփոփոխ գործադրութեամբը լրանալ : Վասնզի թշնամի ուժերուն հետ առաջին բախումը կրնայ մեծապէս ազդել կամ նոյնիսկ բոլորովին փոխել գործողութեան ուղղութիւնը : Աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել, հետեւաբար, պատերազմը կը մղուի «ընդհանուր գաղափար»ի մը համաձայն, որ իրեն համար կ'ունենայ որոշ նպատակներ :

Այս նպատակներուն առաջինն ու ամենակարեւորն է փճացնել թշնամիին դաշտային ուժերը, որովհետեւ անգամ մը որ անոնք ընկճուին, այլ ևս վերջացած կ'ըլլայ դիմադրական ուժը, եւ թշնամին ստիպուած կը զգայ յանձնուիլ յաղթականին կամքին :

Սակայն եւ այնպէս, պատմութիւնը ցոյց կուտայ թէ՛ զլխաւոր նպատակը այս ըլլալով հանդերձ, կան նաև ուրիշ նպատակներ, որոնց իրագործումը մեծապէս կ'ազդէ պատերազմի արդիւնքին վրայ : Օրինակի համար, անունդի կամ ռազմանիւթի հայթայթման կարեւոր ազդերններուն գրաւումը մեծապէս կ'ազդէ, եւ, զօրաւոր կերպով կեդրոնացած պետութիւններու մայրաքաղաքին գրաւումը, միշտ ամենախոր տպաւորութիւնը թողած է : Բարիզի նախորդ գրաւումը յիշելով, Գերմանները կը հաւատային թէ՛ այս պատերազմին մէջ ալ Բա-

րիզը գրաւելով պիտի կարենային նոյն արդիւնքները ձեռք ձգել : Հետեւաբար, գերմանական ծրագրին առաջնորդող գաղափարն էր շուտափոյթ խուժում մը Պելնիգայի մէջէն, որուն պիտի յաջորդէր արագ յառաջացում մը դէպի Բարիզ :

Ճամբաներու անբաւականութեան պատճառաւ, գերման խոշոր բանակին համար անկարելի էր Վոժերու մէջէն անցնիլ : Անկարելի էր նաև անցնիլ Պելնիգայի անցքէն, վասնզի այդ զօրաւոր շերտը այդպէս էր Արչաւանքի մը համար, ուրեմն երկու գօտի միայն կը մնար, մէկը Նանսիի եւ Թիօնվիլի միջեւ, իսկ միւսը Մօպէտէն մինչեւ Տիւնքէրք . այս վերջինը, սակայն, մատչելի էր միմիայն Պելնիգայի մէջէն :

Հետեւաբար, բազմազան առաւելութիւններ ցոյց կուտար Պելնիգայի մէջէն յառաջացում մը : Գերմանները այնպէս կը կարծէին թէ երկրին կառավարութիւնը գլուխ պիտի ծնէր այս անդիմադրելի ուժին (force majeure) եւ ո՛ր եւ է արդեւ չպիտի յարուցանէր : Կը հաւատային նաև թէ պելժ բանակը շատ մեծ արժէք մը չէր ներկայացնէր, ու կարելի պիտի ըլլար դիւրաւ ցրուել զայն : Այսպէսով, Գերմանները շուտով պիտի հասնէին Ֆրանսական սահմանագլուխին այն կէտերը, որոնք հազիւ 120 քիլոմէթր հեռու են Բարիզէն :

1870ի պատերազմէն ետքը, Ֆրանսա հասկցած էր թէ պէտք էր նախ պաշտպանուիլ գերմանական արչաւանքի մը դէմ, ու հետեւաբար ինչուսեւ եւ հինգ միլիոն անգլիական ռսկիի ծախ-



ԶՕՐԱՎՍԵ ՍԵՐ ՀԱՄԻԼԹԸՆ

Հրամանատար անգլ. Բ. Զօրաբանակի աջ թեւին

քով ամրութիւններու երկար շարք մը կանգնած էր, ի պաշտպանութիւն իր սահմանագլուխներուն : Արչաւանքի երկու զլխաւոր գիծեր միայն կային նկատի առնելիք, մէկը՝ Պելնիգայի մէջէն Լիլ-Մօպէտ գիծին դէմ, իսկ միւսը Պալերիայէն՝ Թրէվի եւ Նանսիի միջեւ :

Արեւելեան սահմանագլուխը բնականաբար ամէնէն կարեւորը կը նկատուէր, վասն զի այդ կողմէն բռնի խուժումի մը վտանգը շատ աւելի վերահաս էր, քան որ հիւսիսային սահմանագլուխը արդէս կերպով մը ապահով կը նկատուէր Պելնիգայի չէզոքութեամբ, զոր երաշխաւորած էին Ֆրանսա, Բրուսիա եւ Ռուսիա : Ասկէ դատ, Բարիզի ամրութիւնները այնքան կատարելագործուած էին որ, 178ին տիրող կարծիքին համեմատ, այդ քաղաքը պաշարելու համար պէտք պիտի ըլլար գերմանական բանակին մէկ անագին մասը այդ գործին յատկացնել, որով գերման դաշտային բանակը պիտի նուազէր թուով եւ ֆրանսական բանակի վրայ ունեցած թուական առաւելութիւնը պիտի կորսնցնէր :

Այլ սակայն, այս շինութիւններուն պատճառաւ անագին ծախքը թոյլ տուաւ որ պաշտպանութեան այս ծրագիրը իր ամբողջութեամբ ի կատար հանուի նաև հիւսիսային սահմանագլուխին վրայ :

Սովորական վառօդին յաջորդող աւելի ուժգին պայթուցիկներու գիւտը, աշխարհի զինուորական արուեստին մէջ լիակատար փոփոխութիւններ մտցուց : Եօթանասնական թուականներու ֆրանսացի ճարտարապետները, ամրութիւններու շինութեան ատեն, նկատի ունէին միայն այն ատենուան զէնքերը, իսկ անաւասիկ հիմա այդ բերդերուն դէմ նոր զէնքեր կը բերուէին : Բայց ամրութիւններուն վրայ ծախսուած գումարը, ինչպէս յիշեցինք արդէն, այնքան խոշոր էր որ, կարելի չէր ամբողջ սիսթէմը վերաշինել, թէեւ բաւական կարեւոր գումարներ որոնք պիտի յատկացուէին Պելնիգայի սահմանագլուխը ամրացնելու գործին, յատկացուեցաւ Լորէնի հանդէպ զըտնուող մասը բարեփոխելու : Հիւսիսային սահմանագլուխին վրայ Տէօնքէրք, Վալանսիէն ու Մէզիէնը ամրացնելու ծրագիրները յետաձգուեցան : Նոյնը պատահեցաւ նաև Տուէի, Փէնօնի եւ Լիլի որ, հետեւաբար, չկրցաւ պաշտպանուիլ Մեծ Պատերազմին մէջ : Դարձեալ պաշտպանութեան երկրորդ գիծը, զոր Ֆրանսացիք որոշած էին շինել Լաֆէն-Լան-Ռէնսի վրայով, երբեք պէտք եղածին պէս չլրացաւ, եւ ուստի գրեթէ երբեք չդիմադրեց Գերմաններուն յառաջացումին :

Պատերազմին առաջին օրերու կռիւնները հասկնալու համար, անհրաժեշտ է ըմբռնել գեր-



ՍԵՐ ՅԻԼԻՔ ԶԵՌՈՒՌՈՑ

Անգլ. հեծելազօրաց Ե. վաշտի հրամանատար

Գ Լ Ո Ւ Խ Ի

Դ Է Պ Ի Մ Ա Ռ Ն Ն Ա Հ Ա Ն Ջ Ը

Բրիտանական նահանգները պատահաբար — Գրանսացիները չեն կրնար բիկուցի կանգնել Անգլիացիներուն. — Գերմանները կը հետապնդեն. — Կուրի՝ Մեոգի հովիտին մէջ Նամիւռէն մինչեւ Վեռստոն. — Շարլըվիլի նահանգաւարտ. — Հեծելազորքի կուրներ Անգլիացիներուն եւ Գերմաններուն միջեւ. — Գրանսական նոր դահլիճը. — Տեսակցութիւն մը գորավար Ժօֆուի եւ Սըր ձօն Ֆրենչի միջեւ. — Ռոբուստ՝ դէպի Մառն նահանգները. — Գրանսական բանակներուն հակայարձակումը՝ պատգամներու համար անգլիական նահանգը. — Համաձայնականները Մառնի ետեւը կ'անցնին:

Կիրակի, կէս օրէ վերջ ժամը 5ին, Սըր ձօն Ֆրէնչ հեռագրով ամենակարեւոր լուր մը ստացաւ զօրավար Ժօֆուէն, որ կ'իմացնէր թէ երեք գերմանական զօրաբաժիններ կը յառաջանային դէպի բրիտանական ճակատը, և թէ ասոնցմէ զատ երկրորդ զօրաբաժինը ձախ կողմէն շուրջառիկ շարժում մը կը պատրաստէր թուրքի ուղղութեամբ: Հոս, Գերմանները տիրացած էին Շարլըռուայի և Նամիւռի միջև գտնուող Սամպուի անցքերուն, և ֆրանսական երկու պահեստի զուեղեր ամբողջովին կը նահանջէին: Այդ լուրերուն ճշդութիւնը ստուգուեցան նաև օդանավային զննութիւններով, և Սըր ձօն որոշեց իր բանակը կանխաւ քննուած դիրքի մը մէջ քաշել: Այս դիրքը կը տարածուէր Մօպէօթի բերդէն մինչև Ժանլէն, Վալանսիէնի հարաւ-արեւելակողմը, բայց դժուար պիտի ըլլար զայն պաշտպանել, որովհետև հոն գտնուող շէնքերն ու հունձքը կը դժուարացնէին խրամներու գործը և շատ մը կարեւոր կէտերու վրայ կը սահմանափակէին դաշտային կրակը: Այսու հանդերձ հրետանին համար քանի մը լաւ դիրքեր ունէր:

Գերմանները, սակայն, հրամանատարութեամբ Փօն Դուրի, Օգոստոս 24ի առտուն կանուխ հանգիստ չտուն Անգլիացիներուն, և տեղի ունեցաւ շարունակական կռիւներ: Վերջապէս Սըր ձօն Ֆրէնչ ստիպուեցաւ իր ուժերը աւելի ետ քաշել, նոյն ատեն, սակայն, կռուելով ու պաշտպանելով այս կամ այն զօրաբաժինն նահանջը:

Սեպտեմբեր եօթնի Սըր ձօն Ֆրէնչի տեղեկագրէն հատուած մը ցոյց պիտի տայ ընթերցողին թէ որքան վտանգաւոր էր բրիտանական բանակին դիրքը: Ան կ'ըսէ. — «Ֆրանսացիները տակաւին կը նահանջէին ու ինծի իբր պաշտպանութիւն Մօպէօթի բերդը միայն

մնացած էր, եւ ձախ թելիս ետեւը անցնելու համար թշնամիին ըրած վճռական ջանքերը վստահեցուցին զիս թէ իր նպատակն էր զիս այդ տեղը թխմել ու պաշարել: Զգացի որ առանց վայրկեան մը կորսնցնելու ուրիշ դիրքի մը մէջ քաշուելու էինք: Այս գործը, սակայն, շատ վտանգաւոր ու դժուար էր, ոչ միայն որովհետև դէմս գտնուող ուժերը գերակշիռ էին, այլ նաև որովհետև մեր զինուորները սպառած էին»:

Նահանջը սկսաւ Օգոստոս 25ին առաւօտուն կանուխ և վերջապահներն հրաման ստացան ժամը 5.30ին արդէն բոլորովին հեռացած ըլլալու էթ-Պայէ-Մօպէօթ գիծէն: Զօրավար Ալէնպիի և հեծելազորքին յանձնուած էր նահանջին պաշտպանութիւնը: Զորքը յարթի օր, Օգոստոս 26, նահանջին ամենէն ճգնաժամային օրն էր: Արշալոյսին յայտնի եղաւ որ որ թշնամին կը ծրագրէր իր ուժի զանգուածը յառաջ մղել անգլիական ուժերուն դէմ: Գերմանական չորս զօրաբաժիններու թնդանօթները շարուած էին բրիտանական թելին դէմ, և Սըր Հօրէյս Սիթ-Տօրերն հասկցաւ որ այս յարձակումին հանդէպ կարելի չպիտի ըլլար շարունակել նահանջը: Այդ պահուն առաջին զօրաբանակը ո' և է շարժում չէր կրնար ընել և ֆրանսացի զօրավար Սօռտէ իր յոգնած և սպառած ձիերով չէր կրնար օգնել Անգլիացիներուն: Ասկէ զատ պէտք եղածին չափ ժամանակ ալ չկար խրամային պաշտպանութիւն մը պատրաստելու համար:

Հետեւաբար, ռազմավարական կանոններու համեմատ, բրիտանական ձախ թելը բնաջնջուելու դատապարտուած էր. բայց, ինչպէս շատ ուրիշ առիթներով պատմութեան մէջ, այս անգամ ալ Անգլիացի զինուորը պարտուել չէր գիտեր: Թէև թշնամի հրետանին մէկի դէմ

չորսի գերակշռութիւն մը ունէր, բայց անգլիական հրետանին շուրջնալով ողողեց յառաջացող Գերմանները: Ի դուր գերման հրամանատարը իր բնարեւոյ հեծելազորք կուրին մէջ կը մղէր, որովհետև Անգլիացիները յաջողեցան զանոնք կատարեալ անկարգութեան մատնել ու ետ նետել:

Այսուհանդերձ մարդուս դիմանալու կարողութիւնն ալ բաժան մը ունի, և վերջապէս յայտնի եղաւ որ Սըր Հօրէյս Սիթ-Տօրերն կ'ուզէր բնաջնջուի խուսափել իրեն կ'իյնար ամէն գնով նահանջել: Կէս օրէն վերջ ժամը երեքուկէսին նահանջի հրամանը տրուեցաւ, և շնորհիւ հրետանին ու հեծելազորքին, նաև զօրավարին ճարպիկ ռազմավարութեան, այս ամենադժուար ու վտանգաւոր գործը ի գլուխ հանուեցաւ: «Առանց վարանուծի կ'ըսեմ, կը զրէր Սըր ձօն Ֆրէնչ, թէ ձախ թելը չպիտի կարենար երեք փրկուիլ եթէ հազուադէպ ու անսովոր պաղարիւնութիւն ունեցող հրամանատար մը (Սըր Հօրէյս Սիթ-Տօրերն) իր աներկիւղութեամբն ու վճռականութեամբը անձնապես վարած չըլլար նահանջի գործողութիւնը»:

Անգլիական օդային ուժերն ալ, Սըր Տէյվիտ Հէնտըրսընի հրամանին տակ, իրենց կրակէ մկրտութիւնն ունեցան եւ նոյն ատեն փառքով ծածկուեցան: «Օդանաւորներն էին որ ինծի բերին, կ'ըսէ Սըր ձօն Ֆրէնչ, ամենակատարեալ և ամենաճիշտ տեղեկութիւններ, որոնք անհաշուելի արժէք մը ունեցան ռազմական գործողութիւններու յաջողութեան համար»:

Պահ մը թողունք Անգլիացիները և դառնանք պատերազմի թատերաբեմին դէպի Մէօզի չըջանակը:

Նամիւռի անկումը եւ Գերմաններու անցքը Սամպուէն, թերեւս ինքնին ստիպած չըլլային Անգլիացիներն ու Գրանսացիները Սամպուէն դէպի ետ նահանջելու, եթէ ֆրանսական յարձակողականը չձախողէր պիտիական Առտէնի մէջ, եթէ ֆրանսացի զօրքը Մէօզի հովիտը քաշուած չըլլար, եւ եթէ, կատարի կուրէ մը վերջ՝ Ժիվէի եւ Նամիւռի միջև Գերմանները բռնի անցած չըլլային Մէօզը: Այս պատճառներուն համար էր, հաւանաբար, որ զօրավար Ժօֆուր որոշեց դէպի էն ու Մառն քաշուիլ:

Ժիվէի և Մէզիէնի միջև գտնուող անտառոտ գետինը թոյլ տուաւ Գրանսացիներուն որ յուսահատական դիմադրութեամբ մը ընդիմա-

նան Մէօզն ի վար իջնող թշնամիին: Շարլըվիլի մէջ — Մէզիէնի դէմ Մէօզի արեւմտեան եզերքին վրայ — վճռաբախ դիմադրութիւն մը ցոյց տրուեցաւ: Բնակիչները հանուեցան Շարլըվիլէն և տուներուն մէջ գնդացիները գետեղուեցան: Գերմանները Շարլըվիլ հասան Օգոստոս 25ին եւ Գրանսացիները նախ թոյլ տուն որ անոնք անցնին երեք կամուրջներէն ու մտնեն քաղաքը: Յանկարծ գայտնի ականներու միջոցաւ երեք կամուրջները օդը հանուեցան եւ Գերմանները մնացին ֆրանսական գնդացիներու եւ ուժերու կրակին տակ: Այսուհանդերձ, անփոյթ քաջասրտութիւնով մը Գերմանները յարատեկցին իրենց ձեռնարկին մէջ, նաւակամուրջներ ձգեցին գետին վրայ, և ի վերջոյ ֆրանսացի թնդանօթածիզները ստիպուեցան ետ քաշուիլ, եւ Գրանսացիք լքեցին Մէզիէնը: Նոյն ատեն, Մէզիէնի և Վէռստէնի միջև գտնուող հողամասին Գրանսացիներուն մղած յարձակողականը ձախողեցաւ, Մէօզի հովտին յարձակողականին նման:

Պատերազմին սկիզբը գերման հեծելազորքի մեծ խումբ մը լիւքսէնպուրկէն իջնելով ջանաց Լօնկվիէն անցնիլ եւ ֆրանսական գիծը կտրել Վէռստէնի ու Մէզիէնի միջև: Բայց Լօնկվիլի պահակազօրքը, հերոս գնդապետ ա'Մըրչի առաջնորդութեամբ կեցուց այս յարձակող խումբը և ետ մղեց ծանր կորուստ պատճառելով: Լօնկվիի, հակառակ իր շինցած ամրութիւններուն անձնատուր չեղաւ մինչև Օգոստոս 27 և իր պահակազօրքին հիանալի դիմադրութիւնը լրջօրէն յապաղեցուց գահաժառանգ իշխանին հրամանատարութեան տակ գտնուող գերմանական բանակին ընթացքը. Սիլիքուրի մօտ, Վէռստէնի հիւսիս արեւելեան կողմը:

Գրանսացիները ետ մղեցին գերմանական յարձակում մը, գրաւելով երեք թնդանօթ ու երեք գնդացի: Այս չըջանին մէջ Գրանսացիները ունեցան նաև քանի մը ուրիշ յաջողութիւններ և ծանր կորուստներ պատճառեցին Գերմաններուն:

Բայց, հակառակ Մէզիէնի և Վէռստէնի միջև ֆրանսական յաջողութիւններուն, Սամպուի եւ հիւսիսային Մէօզի գործողութիւններուն անյաջողութեան պատճառաւ, Գրանսացիները ստիպուեցան քաշուիլ Մէօզի հովիտը: Օգոստ. 27ին Լօնկվիի անձնատուր եղաւ, եւ Օգոստոս 31ին մեծ ճակատամարտ մը տեղի ունեցաւ Մէօզի և Ռէթէլի միջև: Բայց զօրավար Ժօֆուարդէն որոշած էր դէպի Մառն քաշուիլ, եւ



ՊԵՆՏԱՆԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Ծառի բունին առջև խրամ մը փորուած է, զոր ձեւերը կը ծածկեն

ուստի Թրանսպիկները լքեցին Վէրտէօնի եւ Մէլիէնի միջեւ Մէօզի գիծը, և Գերմանները յառաջացան դէպի Առիօնի անտառը:

Օգոստոս 28ին բրիտանական բանակը կը նահանջէր Նուայօնէն, Լա Ֆէռէն եւ Սուսսոնէն: Գերմանական հեծելազորքի երկու թեւեր Սէն Գանթէնի մօտերէն մեծ եռանդով կը հետապնդէին նահանջող բանակը: Անգլիական հեծելազորքը, որուն պաշտօն յանձնուած էր պաշտպանել նահանջը, մեծ յաջողութեամբ կը զբաղեցնէր այս թշնամի ուժը, մասնաւորաբար ցոյց տալով թէ ինչ անազդեցիկ համբաւ մը կրնան շինել իրենց համար անգլիական ձիերը:

Այսուհանդերձ, Անգլիացիներուն դիրքը ծայր աստիճան ճգնաժամային էր: Վեց օր անընդհատ քաղեր ու կռուեր էին — ցորեկին՝ Օգոստոսի կիզիչ արեւին տակ, եւ գիշերը՝ ծանր ու խեղդող մթնոլորտով մը — ա՛յնպիսի երկրի մը մէջ որուն հովիտն ու բլուրը անձանօթ էր իրենց, և որուն բնակիչներուն խօսած լեզուէն զինուորներուն մեծ մասը բառ մը իսկ չէր հասկնար:

Բարիզի մէջ պատերազմին համար պատրաստուող դահլիճին կը յաջորդէր նոր և աւելի

զօրաւոր դահլիճ մը, որուն մէջ Մ. Վիլիամի վարչապետ էր, նախկին ընկերավարական Պոիան արդարութեան նախարար, Տէլքասէ — որուն Թրանսա եւ Մեծն Բրիտանիա այնքան մեծ եւ



ՍԵՐ ՀՕՐԷՅՍ ՍՄԻԹ ՏՕՐԵՆ

Հրամանատար անգլիական Բ. զօրաբանակի

րախտագիտութիւն կը պարտէին — արտաքին գործոց նախարար էր, և Միլէրան՝ պատերազմական նախարար: Երկու օր առաջ զօրավար Կալլիէնի Բարիզի կառավարիչ անուանուած էր: Գանի մ'օր վերջ Հանրապետութեան նախագահն ու նախարարութիւնը Բարիզէն Պօրտօ մեկնեցան:

Վայրկեանը հասեր էր, որ ատեն ֆրանսական եւ բրիտանական հրահանատարները խորհրդակցութեան մտնելու էին: Նահանջը շարունակելու թէ յարձակողական դիրք գրաւելու էր: 25ին Լորտ Քիչնէր Լորտերու ժողովին մէջ իր առաջին ճառը խօսեցաւ: Թշնամի կայսրութիւնները, ըսաւ Քիչնէր, շարժման մէջ դրեր են իրենց մարդկային բոլոր ազբիւրները: Մինչ թշնամիին գերագոյն ուժը մշտակայ նուազումի ենթակայ է, բրիտանական ուժը յարատեւօրէն կ'աւելնայ: Արագ յաղթանակ մը անհրաժեշտ էր Գերմաններու համար: Ռուսերը ակնկալուածէն աւելի արագ զօրաշարժ ըրին: Անոնք արշաւած էին Կալիցիա եւ Արեւելեան Բրուսիա, իսկ Սերպերը 22ին շարաշար կերպով Աւստրիացիները պարտութեան մատներ էին: Անանկ որ հարկ չկար կանխահաս յարձակողականով մը Գերմաններու հացին իւղ քսել:

Օգոստոս 29ին Սեր Ճոն Ֆրէնչ զօրավար Ժօֆուի այցելութիւնը ընդունեց: Թրանսպի ընդհ. հրամանատարը, տեսնելով որ Պելձիգայի եւ Լիւքսեմպուրի ընդմէջէն Գերմանիա արշաւելու իր ծրագիրը ի դերեւ ելաւ, Նամիւռի և Առտէններու պարտութիւններովը, անմիջական կերպով ու հանդարտութեամբ փոխեց իր ռազմավարութիւնը: Ան Գերմաններու յարձակման պատասխանեց պաշտպանողականով մը: Իր ռազմավարական ըմբռնումն էր թշնամին քաշել բոլոր կէտերու վրայ, եւ ապա սկսիլ յարձակողականի», կը գրէր զօրավար Ֆրէնչ: Օրէ օր ան կը փոխէր այն ծրագիրները, զորս կը յուսար գլուխ հանել: Որոշուեցաւ թշնամիին լքել Սօմի, էնի և Լաֆէտի, Լօնի եւ Ռէնսի կէս-ամրացեալ գիծերը, եւ շարունակել նահանջը մինչեւ Մառն: Արեւելեան սահմանի ֆրանսական ուժերը պիտի ընէին միեւնոյն բանը:

Մինչ Բրիտանացիք կը նահանջէին՝ իրենց անցած գետերու բոլոր կամուրջները օղբ կը հանէին: Սեպտ. 3ին, Մառնի ետեւը հասեր էին, սակայն զօրավար Ժօֆու վճռեց որ անոնք




ԶՕՐԱՎԱՐ ՅՕՆ ԲԼՈՒԳ

Հրամանատար գերման Ա. բանակին

անցնէին անանկ կէտի մը վրայ, որ Սէն մնայ իրենց և թշնամիին միջեւ: Գերմանք Մառնի վրայ կամուրջներ զետեղեցին և սպառնացին իրենց աջը գտնուող բրիտանական ճրգ և Փըրանսական ճրգ բանակներուն: Սեպտ. 5ին բրիտանացիք Սէնէն անդին անցեր էին. այդ օրը զօրավար Ժօֆու զօրավար Ֆրէնչի բացատրեց թէ նպատակ ունէր յարձակողականի սկսիլ: 2ին Թրանսպի նախագահը, նախարարներն ու զիւսանագիտական մարմինները Պօռտօ մեկնել էին: Լուրեր եկան թէ Ռուսերը Կալիցիոյ մէջ վճռական յաղթանակ մը տարեր էին Սեպտ. 4ին յայտնի եղաւ որ Գերմանք իրենց Բարիզի վրայ ընելիք խոյանքը յետաձգեր էին, եւ իրենց բանակները Արկօնի արեւմտակողմը կը գտնուին: Մօպէօթը տակաւին ինկած չէր: Մօնսէն մինչեւ Մառն կատարուած գործողութիւններուն մէջ Բրիտանացիք ունեցան 15,000 մեռեալ, վիրաւոր և անյայտացած: 19 հազարէ բաղկացող զօրագունդեր անմիջական կերպով օգնութեան փութացին, և նիւթական կորուստը դարձանուեցաւ:

ՎԵՐՋ Ի. ԳԼՈՒԽԻ



Ֆրանսական 75 միլիմետրոնոց թնդանօթ մը

անվնաս խուսափիլ այս անախորժ հիւրերէն: Թշնամի թորփիլարձակներէն միայն երկուքին ընկղմուիլը նշմարուած էր. 18-20 նաւերէն մեծագոյն մասը շրջապատուելով չարաչար պատժուեր էին եւ հազիւ հազ անկանոն և ցրուած խառնիխուռն փախուստով մը կրցեր էին օձիքնին աղատել: Բրիտանական թորփիլարձակներու թնդանօթին ուժն ու զօրութիւնը վերջնականապէս ապացուցուած էր: Ընկղմուած գերման հինգ նաւերը ունէին 1,200 սպայ և նաւազ, որոնք ամբողջութեամբ — գերի ինկած 330 վիրաւոր և ոչ-վիրաւոր մարդոցմէ զատ — կորսուեցան: Գերմանք, ասոնցմէ զառ ունեցան ուրիշ կորուստներ ալ թորփիլարձակներու և ուրիշ յաճանաւերու մէջ, որոնք այդ վտանգաւոր ձեռնարկին մէջ չընկղմեցան: Բրիտանիոյ ամբողջական մարդու կորուստը եղաւ 69 մեռեալ եւ վիրաւոր: Բոլոր բրիտանական նաւերը շաբաթէ մը ի վիճակի պիտի ըլլային մտնելու գործօն օձառայութեան մէջ, այնչափ աննշան էր իրենց վնասը: Այս գործողութեան յաջողութիւնը գլխաւորաբար կը պարտէր ընդծովեաներուն ճշգրիտ տեղեկագրութեանց, որոնք վերջին երեք շաբաթներուն մէջ արտակարգ յանդերձութեամբ մը թշնամի ջուրերու մէջ հետազօտութիւններ կատարեցին:

Կ'ըսուէր թէ՛ կռիւի պահուն գերման սպաներ կրակ ըրեր էին ջուրը ինկող իրենց նաւազներուն վրայ: Սակայն տեսնուեցաւ որ այս պարագան ըսուածին պէս ուղիղ չէր: Իրողութիւնը սա էր. գերման Մեկն նաւուն մարդիկը կռուող յաճանաւերու մօտենալը տեսնելով խու-

ճապի մատնուեր և լքեր են իրենց թնդանօթները. ասոր վրայ սպաները կրակ բացեր են իրենց անհաւատարիմ նաւազներուն դէմ: Ասով հանդերձ, գերման սպաներու աշխատանքը կրնանք գնահատել. անոնք կռուեցան մինչեւ վերջին րոպէն: Ո՛ր մարդը կրնար ասկէ աւելին ընել:

Սեպտ. 3ին ականի մը զոհ գնաց մեր Սփիտի թնդանօթակիրը, և 5ին՝ Փեթրիֆայնսթեթեւ յաճանաւը ընկղմուեցաւ գերման ընդծովեայի մը կողմէ: 268 սպայ եւ նաւազ կորսուեցան: Սեպտ. 15ին, գերման Հեյա թեթեւ յաճանաւը մեր E 9 թիւ ընծովեային կողմէ ընկղմուեցաւ, Հելիկոլանտէն վեց մղոն հեռու, դէպի հարաւ:

Սեպտեմբերի մէջ, ծովակալութեան կողմէ յայտարարուեցաւ թէ՛ Հիւսիսային ծովու մէջ ականներու զետեղումը կը շարունակուէր, և թէ գերման դրօշակով նաւ բնաւ տեսնուած չէր այդ սահմաններուն մէջ. որով յայտնի կ'ըլլար թէ՛ ականները չէզոք դրօշ պարզող գերման նաւերու կողմէ կը ցանուէին: Ուստի, բոլոր նաւերուն հրամայուեցաւ որ իրենց տեսած բոլոր օտար նաւերը, ծովերու վրայ, խուզարկութեան ենթարկէին, առանց քաղաքավարական պատշաճութեանց մէջ թերանալու:

Պատերազմի սկզբնաւորութենէն ասդին, շաբաթներէ ի վեր Հիւսիսային ծովը խաղաղ էր, սակայն Սեպտ. 11ին, օդին մէջ յանկարծական փոփոխում մը տեղի ունեցաւ և տասը օր շարունակ, մինչեւ 22 քամին կը փչէր մոլեգնաբար և յաճախակի հեղեղանման անձրեւները կը

յորդէին ամէնուրեք: Պահակ շրջող նաւերուն շարժումը փոխադրուած էր քիչ մը դէպի հիւսիս, առանց թորփիլարձակներու ընկերակցութեան, որովհետեւ այս վերջինները փոթորիկի սաստկութենէն անկարող կը դառնային ծովու երես մնալ: Փոթորիկը 21 ին բաւական մեղմացած ըլլալով կարգադրութիւններ եղան որպէսզի թորփիլարձակներ յաջորդ առտու իրենց նաւահանգիստներէն դուրս գան և միանան Ապուլիո, Հօկ և Բրեսսի յաճանաւերուն: Ասոնք, իրարմէ երեքական մղոն միջոցով մը կ'ընթանային, երբ իրիկնադէմին տեսնուեցաւ որ զօրաւոր կերպով կը դանդաղէր Ապուլիո և ապա մէկ կողմի վրայ կը հակէր: Յաճանաւը թորփիլի մը զարնուած էր: Ականատես մը սապէս կը պատմէ այդ անաւոր աղէտը. «... Բրեսսի և Հօկ յաճանաւերը անմիջական կերպով փութացին վտանգուած կեանքեր փրկելու: Հօկ՝ Ապուլիո ըրի աջ կողմը և Բրէսսի ալ ձախը տեղաւորուէր էին: Ապուլիո ջանաց վար իջեցնել իր աջ կողմի նաւակը, սակայն մէկ կողմի վրայ հակուած անձրեւի կատարեալ էր, որ նաւակը փակաւ նաւուն կողքին և կարելի չեղաւ յաջողիլ: Արեւը վեհութեամբ կը փայլէր, և նաւուն պղնձեայ յատակին կարմրագոյն շողշողումը, և անոր կողերուն կառուցող ու դէպի վար մագլցող մարդիկը կը ստեղծէին անանկ անաւոր տեսարան մը, որ բնաւ պիտի չմոռցուի: Ոմանք կը ցատկէին, ոմանք նստած վիճակով դէպի վար կը սահէին: Յանկարծ երկու զարհուրելի պայթումներ լսուեցան և Հօկ զսպանակի մը պէս բովանդակ զանգուածովը դողողաց: Ընդծովեայ մը զայն թորփիլահար ըրած էր: Վեց վայրկեանէն ծովուն տակը սուզած էր, և Ապուլիոն փրկուած նաւազներն ալ յաւիտենապէս կորսուած էին:»

Այս պահուն հրաշալի բան մը պատահեցաւ: Մինչ Հօկ դէպի անդունդը կը խորասուզուէր, յանկարծ մասամբ մը շտկուեցաւ, և իբր արդիւնք այս շարժումին, իրմէ անջատուեցան երկու նաւակներ, որոնք ազատօրէն կը ծփային ծովուն վրայ: Վերապրողները անոնց մէջ ապաստան գտնելով՝ փրկուեցան: Բրէսսի յաճանաւը այս պահուն վրայ եկաւ և կրակ բացաւ ընդծովեային վրայ: Ան շարունակեց իր փրկութեան գործը մինչեւ որ ինքն ալ իր կարգին երկու անգամ թորփիլահար եղաւ և ընկղմեցաւ անմիջական կերպով: Փրկութեան գործը շարունակուեցաւ ուրիշ նաւերու կողմէ, որոնք արկածին վայրը փութացեր էին: Վերապրողնե-



Ֆրանսացի զինուորը զօրաշարժի ատեն

րը նաւակներէն նաւերը առնուեցան, և երբ տեսնուեցաւ որ իրենց պարտականութիւնը գրլուխ ելած էր՝ մեկնեցան իրենց նաւահանգիստները: Մեր 60 սպաներուն և 1400 մարդոց կորուստը այնքան դառն չպիտի թուէր մեզ՝ եթէ ան արդիւնքը եղած ըլլար բաց դաշտի վրայ տեղի ունեցած ճակատ առ ճակատ կռիւի մը:

Հոկտմ. 15ին Հօքը յաճանաւը թորփիլահար ընկղմեցաւ Հիւսիսային ծովու հիւսիսային ջուրերուն մէջ, և իր 544 սպայ և նաւազներէն հազիւ 70 հոգի փրկուեցան: Միւսոյն ատեն Թեսիւս յաճանաւն ալ յարձակում կրեց, սակայն առանց վնասի:

Արդ, այժմ գանք այս սարսուղեցիկ տրուամին երկրորդ արարուածին, որ պատահեցաւ Հոկտ. 17ին, որ ատեն գերման չորս թորփիլարձակներ ընկղմեցան — S 115, S 117, S 118 և S 119 — դանիական ծովեզերքը: Պաշտօնական տեղեկագիրը կ'ըսէ. «Նորաշէն թեթեւ Տօնթէտ (անվախ) յաճանաւը՝ Լէնս, Լէգիոն և Լայլը թորփիլարձակներու ընկերակցութեամբ՝ կռիւի բռնուեցաւ գերման չորս թորփիլար-

ձաներուն հետ, դանիական ծովեզերքը: Թշնամի բոլոր նաւերն ալ ընկղմեցան: Այս գործողութեան մէջ միայն մէկ սպայ և չորս զինուոր վիրաւորուեցան: Բրիտանական թորփիլարձակներուն վնասը շատ չնչին է: Յի Գերման վերապրողներ գերի բռնեցինք:»

Գերման այս չորս թորփիլարձակներու կորուստովը՝ երկու հակառակորդ կողմերու են թարկուած վնասները, — նիթի և անձի տեսակէտով — իրար կը հաւասարակշռէին:

Հոկտ. 18 ին դժբախտութիւնը ունեցանք ողբալու ԵՅ թիւ ընդժովեան, որուն կորուստեան պատճառները անձանօթ մնացին:

Մովակալ Մահուն ըսած է. «Օգուտ չունի թշնամին կրունկէն զարնելը, զայն սրտէն հարուածելու է:» Հարուածելիք այդ սիրտը Հիւսիսային ծովուն մէջն էր, սակայն Միջերկրական ալ կը պահէր իրեն յատուկ կարեւոր դիրքը: Յրանսայի հետ համաձայնութեամբ, Մեծն Բրիտանիա, պատերազմի պահուն կը ստանձնէր հիւսիսային շուրերու պաշտպանութիւնը և օգնութեան կը հասնէր հարաւային բաժնին մէջ: Այս համաձայնողութեան չորհիւ Յրանսա իր ուժերովը կը մնար Միջերկրականի մէջ աւելի սեղմօրէն պաշտպանելու իր շահերը: Այս հարցին լուծումը խիստ կենսական էր Յրանսայի համար: Յրանսայի մեծ սպայակոյտը տարիներով միտք յոգնեցուցեր էր թէ Յրանսա ինչպէս պիտի կրնայ — Համաձայնութեան և Զինակցութեան միջև ծագելիք պատերազմի մը պարագային — իր Ալճերիայի բանակները Յրանսա փոխադրել: Երբ Իտալիա շատ բանաւոր պատճառներով խեղճիկ մը իր տեղը նստաւ, Ֆրանսական այս կնճռոտ հարցը ինքնին լուծուեցաւ: Աւստրիական տկար նաւատորմը Գերմանիոյ օրինակին հետեւելով՝ թխմուեցաւ իր նաւահանգիստներուն գիրկը: Դուրս գալը իրեն համար անխուսափելի կորուստ էր:

Միջերկրական ծովու նաւատորմին ընդհ. հրամանատարը, ծովակալ Պուէ տը Լափէրէր գործադրած է այն ինչ որ հրամայական է: Ան բռնագրաւած է Լիսսան (Ադրիականի մէջ կղզի մը՝ որ Աւստրիոյ կը պատկանի 7,900 բնակիչներով) իբր գործողութեանց խարխուխ: Ասանկով ան հեռուէն պաշարած է բոլոր աւստրիական նաւահանգիստները, Թրիէսթէն մինչև Բօլա: Քաթթարօն ուժակոծեց, որպէսզի Գարատաղի շարժումները դիւրացնէ: Բօլայի դիմաց դարանակալ սպասելով, ցանուած ականները հաւաքելէ վերջ, կը սպասէ Աւստրիա-

ցիներուն դուրս գալուն: Ինչ որ Յրանսացիք ըրեր են Միջերկրականի մէջ, կը համապատասխանէ այն դերին զոր Անգլիացիք կատարեր են Հիւսիսային ծովու մէջ՝ պաշարելով Վիլհելմսհէյմը, Քիւքսհէյմը, Պրիմէն, Համպուրկ և Քաթթէկաթ, այն նպատակով որ գերման նաւատորմը չի համարձակէր դուրս գալ: Գերման և աւստրո-հունգարական վաճառականութիւնը այսպէսով փճացաւ:

Երբ պատերազմը ծագեցաւ, գերման երկու յաճանաւորը, Կէօպէն և Պրէսլաւ Միջերկրականը կը գտնուէին: Օգոստոս 6ին տեղեկագրութեամբ թէ բրիտանական յաճանաւոր յուզումնայից հալածումի մ'ենթարկեր էին զանոնք մինչև Մեսինա, և ապա 8ին՝ դարձեալ զեկուցուեցաւ թէ անոնք Մեսինայէն մեկնած էին, անձանօթ ուղղութեամբ: Ի վերջոյ յայտնի եղաւ որ՝ անոնք Տարտանէլ մեկներ էին: Կրուսեթթ թիւթե յաճանաւոր սրտոտ փորձ մը կատարեց արգիլելու անոնց փախուստը: Այդ երկու նաւերը թուրք իշխանութեանց խաբեկատիր կերպով վաճառուելէ վերջ, գերման նաւազները Պոլիս ղրկուեցան՝ թուրք նաւատորմին միւս նաւերը կառավարելու պատրուակին ներքեւ: Վերջապէս էնվէր փաշա, իր գերման բարեկամներու դժբախտութեամբը նետեց իր երկիրը պատերազմի մէջ ընդդէմ Դաշնակիցներուն:

Այն զօրաւոր պատճառներէն մէկը, որ կը պարտադրէին գերման նաւատորմը լճանալու իր նաւահանգիստներուն ծոցը, ռուս ծովային ուժերու վախն էր: Իրաւ է թէ արդի զէնքերու համեմատութեամբ ռուսական այս զէնքերը այնքան ալ վախ ազդելիք բաներ չէին, սակայն Ռուսիա ունէր բազմաթիւ յաճանաւոր, որոնց վրայ Գերմանիա մօտէն հսկողութիւն կատարելու էր Պալթիկի մէջ, որպէսզի մի գուցէ ծովու ճամբով փոխադրութիւն կատարուէր այն զօրազուեղերուն, որոնք Պերլինի համար յատկացուած էին: Պալթիկէն հեռանալ դէպի բաց ծովերը, կը նշանակէր քաջալերել ռուս ցամաքահանումը, բան մը որ Ռուսերուն համար խիստ հեշտ պիտի ըլլար, քանի որ գերման ծովեզերքը պաշտպանողական միջոցներէ զուրկ էր:

Պատերազմին սկիզբները Գերմանք կորսնցուցին իրենց նորաշէն և ընտիր Մակտէպուրկ յաճանաւոր, Պալթիկի մէջ: Կ'ըսուի թէ անոր նաւազները զայն օդը հանեցին՝ այն պահուն երբ տեսնուեցաւ որ ռուսական գերագոյն ուժ մը իրենց կը մօտենար: Սեպտ. 4ին ծովակալութիւնը կը զեկուցանէր թէ եօթը գերման

թորփիլարձակներ և թորփիտօ-պօթեր Բիլ հասեր են վնասուած վիճակով, և ուրիշ մէկ քանիներ ալ ջրանցքին մօտերը ընկղմեր են: Սակայն չըսուեցաւ թէ ո՛վ էր այն թշնամին, որուն հետ այդ չարաշուք կռիւին բռնուեր էին: Սեպտ. 16ին «Թայմզ»ի Փեթոկրատէն հետեւեալ հեռագիրը կը հաղորդուէր. «Պալթիկի մէջ գերման նաւատորմին զլիւնն եկած աղէտը նորագոյն տեղեկութիւններով կը հաստատուի: Այլևս կասկած չկայ թէ գերման նաւերը իրարու վրայ կրակ բացեր են: Պալթիկի մէջ ռուս ուժերու հետ պատահած կռիւներու բոլոր զրոյցները անհիմն են:

Վստահելի աղբիւրէ քաղուած տեղեկութեանց համաձայն, բազմաթիւ նաւերէ բաղկացած գերման տորմիկ մը, յաճանաւորու ընկերակցութեամբ, մինչ զբաղած էր ճամբորդի նաւեր որսալու, իրենց նաւերը թշնամի նաւ կարծելով՝ տաք կռիւի մը բռնուեցան: Վնասուած նաւերուն թիւը անձանօթ է, սակայն հաստատեցի որ մէկ քանի յաճանաւոր Բիլ մտան խոշտանգուած և ծակծկուած վիճակով, և շատ մը վիրաւորներ ցամաք հանուեցան:»

Հոկտ. 10ին, ռուս զրահապատ յաճանաւոր

ըր, Մաքարօֆ, Փայատա և Պէյան, Պալթիկի մէջ հետախուզական պտոյտներ կը կատարէին: Այդ առտու Մաքարօֆ յարձակում կրեց թշնամի ընդժովեայի մը կողմէ. ճիշտ այն միջոցին ան խուզարկութիւն կը կատարէր առագաստանաւի մը մէջ, զոր ճամբուն վրայ կեցուցեր էր: Իր վրայ ուղղուած մէկ քանի հարուածները բարեբախտաբար վրիպեր էին: Հոկտմ. 11 ին թշնամի նաւերը կրկին յարձակում գործեր էին Պէյանի և Փայատայի դէմ: Յաճանաւորը բուռն կրակ բացին, սակայն ընդժովեաներէն մին յաջողեցաւ Փայատան մահացու կերպով հարուածել. անաւոր պայթում մը տեղի ունեցաւ և Փայատա խորասուզուեցաւ անդունդին խորը, հետը տանելով իր դժբախտ մարդիկը:

Հոկտեմբերին Սէվէրն, Հրմպր և Մէրսէյ ազդանաւորը պելճ ծովեզերքէն ցամաքին վրայ կուռող բանակին շատ թանկագին ծառայութիւններ կատարեցին, ուժակոծելով գերման բանակին աջ թեւը: Այս նաւերը ցամաքը զընդացիրերով զինուած գունդեր հանելով՝ մեծ ծառայութիւն մատուցին Նիուփորթի պաշտպանութեանը համար:

ՎԵՐՋ ԻԱ. ԳԼՈՒԻԻ



Պավերիոյ գահատառանգը (1914)

Գ Լ ՈՒ Խ Ի Բ.

Մ Ա Ռ Ն Ի Ճ Ա Կ Ա Տ Ա Մ Ա Ր Տ Ն Ե Ր Ը

Մեծ նահանջին վախճանը. — Բանակներու դիրքերուն ռազմաւարժումը. — Օգոս. 22ի դէպքերը. — Սաարպուրիք՝ արեւելեան, եւ Շառլոտուա հիւսիսային նահանգները կ'որոշագծեն. — Նահանգէն վերջ՝ բանակին բարոյական կորույր. — Մառնի նահանգներին մասնակցող զորաց քիւր. — Պայքարի դաւար. — Հակառակորդ բանակներու տրամադրութիւնները. — Ֆոն Գլուֆ վար կը զարնէ բրիտանական բանակը. — Գերման աջը կը խորհակուի. — Գերման գիծերը սեղի կու տան. — Իսպանական ծախսը էն կը հասնի. — Ֆաղքանակին ազդեցութիւնը Ֆրանսայի վրայ. — Ուրգի նահանգները — Բրիտանական յառաջացումը :

Սեպտ. 3ին վերջ գտաւ Մառնի նահանջը: Այդ թուականին զօրավար Ֆրէնչ կը գրէ. «Բրիտանական ոյժերը սեպտ. 3ին Մառնի հարաւային կողմը դիրքերու մէջ էին: Մինչեւ այս ատեն զօրավար Ժոֆու խնդրած էր որ կարելի եղածին չափ երկար ատեն անցքերը պաշտպանեմ, եւ դիմացս գտնուող կամուրջները օղը հանեմ: Այդ կարգադրութիւնները գլուխ հանելէ վերջ՝ ֆրանսացի հրամանատարը խնդրեց որ նահանջս շարունակեմ մինչեւ 12 մը զոն դէպի ետ, այն կէտէն զոր այն ատեն կը գտնուէի, Սէնի ետեւ երկրորդ դիրք մը բռնելու դիտարութեամբ: Այս նահանջը ժամանակին տեղի ունեցաւ: Միւսին ատեն թըշնամին գետին վրայ կամուրջներ գետեղած՝ մեծ ուժերով անցած էր, և կը սպառնար բրիտանական բոլոր գիծերուն և ֆրանսական ճրդ և ճրդ բանակներուն: Յառաջապահներու քանի մը գործողութիւններ կատարուեցան: Գերման առաջին բանակը, Մոնսի ճակատամարտէն է վեր կը ճգնէր դաշնակիցներու համար ստեղծել նոր Սէտան մը՝ կողէն զարնելով և շրջապատելով անոնց բովանդակ գծին ձախակողմը, անանկ որ բրիտանական և ֆրանսական ուժերը պաշարելով զանոնք քշէր դէպի հարաւ: Այժմ փոփոխութիւն մը կար իր նպատակին մէջ: Նշմարուած էր որ բրիտանական ուժերու դէմ ճակատող Գերմանները կը սկսէին շարժիլ դէպի հարաւ-արեւելեան ուղղութեամբ, փոխանակ շարունակելու մայրաքաղաքը տանող հարաւ-արեւմտեան գիծը»:

«Ֆրանսացի հրամանատարի փափաքին վերայ՝ զինքը տեսայ, որ ինձ այստեղ թէ նպատակ ունէր անմիջական կերպով յարձակողականի ձեռնարկել՝ ետ դարձնելով ճրդ բանակին ձախ թեւը եւ ուղղելով զայն դէպի Ուրգ, Մառնը միշտ առանցք բռնելով, անցնիլ և զարնել գերման առաջին բանակին կողը, որ այն ատեն հարաւ-արեւելեան ուղղութեամբ կը շարժէր դէպի Ուրգ գետի արեւելակողմը:»

Մառնը միշտ առանցք բռնելով, անցնիլ և զարնել գերման առաջին բանակին կողը, որ այն ատեն հարաւ-արեւելեան ուղղութեամբ կը շարժէր դէպի Ուրգ գետի արեւելակողմը:»

«Ան ինձմէ խնդրեց որ իմ աջ կողմի ճակատին մէջ փոփոխութիւն մտցնեմ — ձախս Մառնի և աջս ճրդ բանակին վրայ հանգչեցնելով — զոցելու ճրդ և ճրդ բանակներու բացուածքը: Այն ատեն իմ ճակատէս պիտի յառաջանայի դէպի թշնամին և պիտի միանայի ընդհ. յարձակողական շարժումին: Գերման զօրազունները դադարեցուցանելին իրենց շարժումը և կը կենսային Ուրգի դիմացը: Թշնամի բազուկներու առաջամասերը տեսնուեցան, որոնք Շանտիէն, Լաֆէրէն, Նոթանէն, Շաթո Թիէրիէն և Մեղիէն կ'անցնէին»:

«Գերման ամէն կարգի զօրազուններ տեսնուեցան, որոնք Մոնսիոյ վրայ կ'ուղղուէին, մինչ արեւամուտէն առաջ թշնամի մեծ խումբեր կը տեղաւորուէին Գուլոմիէի շրջակաները, Ուրպէի, Լաֆէրթէ-Կոչէի և Տանիի հարաւակողմը»:

Կարեւոր կռիւներ տեղի ունեցան ֆրանսական ճրդ բանակին հետ, որ իր դիրքերէն Մառնի հարաւ ինկաւ դէպի Սէնը:

«Այս միացեալ շարժումները սկսան սեպտ. 6ի, արեւածագին: Կրնայ ըսուիլ թէ մեծ ճակատամարտ մը ծայր տուաւ ճակատի մը վրայ, որ կը տարածուէր Էրմէնօնվիլէն — որ ճրդ բանակին ձախ թեւին ճիշտ դիմացն էր — Մառնի վրայ հանգչող Լիդիէն, Մօփէրթիւիէն Գուլօնէն, որ կը կազմէր ֆրանսական ճրդ բանակին ձախ թեւը, մինչեւ Էսթէրնէ և Շառվիլ — զօրավար Ֆօքի հրամանին ներքեւ գործող ճրդ բանակին ձախը — և այսպէս ֆրանսական ճրդ, ճրդ և ճրդ բանակներուն ճակատէն անցնելով կը յան»



ԶՕՐԱՎԱՐ ԿԱՆԻՔՆԻ

Բարիզի զինուորական կառավարիչը (1914)

գէր Վէրտոն բերդին հիւսիսային կէտի մը վրայ»:

Բարիզ — Վէրտոն — Պէլֆօն ճակատին վրայ կանգնող հակառակորդ բանակներուն տրամադրութիւնները՝ ուղղակի արդիւնք էին երեք դէպքերու որոնք պատահեցան օգոստ. 22ին իրարմէ քանի մը հարիւր մը ճոն հեռաւորութեամբ:

Ժամանակի ազդակը ուղեց որ ֆրանսական բանակը ոչ միայն ցրուի, այլ նաև անկարողութեան մատուի: Իսկ այս նպատակաւ Գերմանք կազմեր էին կռուելու ծրագիր մը, որուն համաձայն բանակը պիտի ունենար տկար կեդրոն մը և ծայրայեղօրէն զօրաւոր թեւեր: Առաջինը պիտի աշխատէր թշնամին գամելու իր գրաւած դիրքերուն վրայ, և երկրորդը պիտի հարուածէր թշնամին կողերը, գլուխ պիտի հանէր պաշարումի գործողութիւնը և պիտի ստեղծէր «Գերազոյն Սէտան» մը: Այս էր գերման տեսագէտներու զօրաւոր համոզումը:

Երկու ազգերու հասարակաց սահմանին վրայ գտնուող ֆրանսական ամրութեանց մեծ ուժը պարտադրեց Գերմանները որ իրենց այս ծրագիրը Վէրտոնի հիւսիսային ֆրանսական

սահմանին վրայ գործադրեն չէզոք հողի մէջէն: Հոս Թիոնվիլի և Առաքններու մէջտեղ գոյացած բացուածքը ձախ-յարձակողականի անցքին համար առիթ կը հայթայթէր: Առաքններու խորտուբորտ հողերը սակաւաթիւ ճամբաներով և երկաթուղիներով օժտուած, կեդրոնին բաժին ինկած էր: Առաքններու հիւսիսը, պիտի դաշտագետինը — ճամբաներու, երկաթուղիներու և ջրանցքներու ցանցերով ծածկուած — աջ-յարձակողականին համար գործողութիւններու հիանալի թատերավայր մըն էր:

Օգոս. 16ին, մինչ աջ-յարձակողականը կը ճգնէր Պելճիգայի ընդմէջէն իրեն համար ճամբայ բանալ, ֆրանսական 15րդ զօրաբանակը Լիւնէվիլէն Սաարպուրի հասաւ. Մէցի և Սթրասպուրի միջև գտնուած երկաթուղին կտրեց և ուսուցանեց գերման ձախ-յարձակողականին կողին ու յետակողին: Օգոստ. 22ին զօրաւոր գերման զօրազունը մը — թերեւս չորս զօրաբանակներ — մարդու և թնդանօթի ծանր կորուստով մրանսացիները դուրս նետեցին Լոնէնէն: Ասանկով ֆրանսական յարձակողականը, կորսուած գաւառներու մէջ, պարտութեամբ վերջացաւ, սակայն հաստատուեցաւ թէ Մէցի հարաւակողմը գերման զօրաւոր ուժ չկար:



ԶՕՐԱՎԱՐ ՊԻՐԻ

Հրամանատար Հիւսիսային ծովու բրիտանական ծովային ուժերու (1914)

կը համեմատի ֆիզիքականին, ինչպէս երեքը՝ մէկին:» Պատերազմի մէջ, կ'ըսէ Հէնտէրըն, ուժ մը կայ, որ աւելի հզօր է՝ քան սոսկական թիւերը:» Բոլոր այն ազգականները, որոնք միացան ստեղծելու այն հետեւանքը, որ առաջ եկաւ Մառնի աւազանին մէջ, ոչ մին այնքան վճռական եղած է որքան քարոյակաւոր: Մեծ Նահանջը անխուսափելիօրէն բովանդակ պատերազմի արդիւնքին վրայ խորապէս ազդեց - ո՛չ միայն իր նիւթական հետեւանքներուն մէջ, այլ նաեւ բարոյականին: Ան, գալիք սերունդի մը համար կարգադրեց գնահատումի այն հարցը, որով կուտոյ զինուորը, երկու կողմէն ալ, պիտի չափէ իր հակառակորդը: Բրիտանացի զիւուորը շատ յստակ հասկացողութիւն մը ունեցած էր իր հակառակորդին նկատմամբ, իրրեւ զինուոր եւ իբրեւ մարդ: Իբրեւ զինուոր Բրիտանացին կը հիանար Գերմանացիին քաջութեան վրայ, սակայն կ'ապշէր անոր անճարակ նշանառութեան, անոր ամբողջական քաֆիֆին, անոր ձեռներեցութեան և իմացականութեան խեղճութեան վրայ, և այն կերպին վրայ, որով ան թոյլ կուտար որ իր սպանները զինքը, անասունի մը պէս, գործողութեան մղէին: Բրիտանացի զինուորը անշուշտ ի վիճակի չէր գնահատելու գերման բարձր առաջնորդութեան ու սպայակոյտի գործերը, սակայն առաջնակարգ դատաւոր մըն էր այն խնդիրներուն մէջ, որոնք անմիջական կերպով իր կարողութեան չըջանակին մէջ կ'իյնային: Անիկա հեգնանքով կը դիտէր գերման դասակին (պէօլլեկ) հրամանատար սպան, որ իր մարդոց հետ կը վարուէր անարգանքով, և ռոնէ նկատում չէր ունենար այն երկրին մասէն, ուրկէ կ'անցնէր: Անոր համար Գերմանը, իբրեւ մարդ, քաջ և բիրտ էակ մըն էր: Մոնսի մէջ, ի վերջոյ, ան առիթ ունեցեր էր ակնատես ըլլալու գերման խժողութիւններուն, որոնց մէկ պզտիկ պատկերը կարելի է գտնել հետեւեալ հատուածներուն մէջ, որոնք առնուած են զինուորներու և սպաններու նամակներէն:—

«Ո՛չ մէկ յարձակողական ասոր չափ անփոյթ քաջութիւն և անագորոյն կատաղութիւն ցոյց տուած է: Ո՛չ մէկ պաշտպանողական այսքան մեծ հերոսութիւն ստեղծած է: Իւրաքանչիւր քայլափոխին կռիւ տեղի ունեցաւ, յստակ քաջութեամբ մը: Բրիտանացիները եւ Ֆրանսացիները ետ կը քաշուէին, իրենց երեսները դէպի թշնամին դարձուցած: Թշնամիին թիւերը հակայ էին: Մեզի դադար չտուին, զի-

չեր ցորեկ կոնակածեւ վրանիս յառաջացան: Մեր բացուածքները անմիջական կերպով լեցուեցան: Իրենց վարպետ հրետանին անդադար մեր վրայ կը գործէր: Իրենց հեծելազօրքը ապշեցուցիչ անտարբերութեամբ մը վրանիս խուժեց: Շարք շարքի ետեւէ, զօրաբաժին զօրաբաժինի ետեւէ, և զանգուած զանգուածի ետեւէ: Թշնամին եկաւ մանզղիոնի մը պէս, ջարդ ու փշուր ընելով ամէն բան որ իր ճամբուն վրայ կը հանդիպէր: Գնդակներու և ուժերու տեղատարափին տակ, թշնամին փշուրելով ինքզինքը կը վերանորոգէր վայրկեանաբար: Մարդիկ ամէն կողմէ կը վխտային: Բանակը ընտելուած փրկողը եղաւ մեր զինուորական սրտտուութիւնը, յստակ քաջութիւնը և անկքելի վճռականութիւնը:


«Թշնամիին ենթարկուած կորուստը անաւոր ըլլալու է: Անոնք խիտ շարքերով յառաջացան և հետեւակազօրքի լման կիսաբաժիններ տասանորդուեցան՝ մեր հրացաններուն և թնդանօթներուն կրակովը: Քաղաքակիրթ մարդոց ոչ մէկ բանակ կրնար դիմանալ այն անիրաւումին, որ գործուեցաւ գերման շարքերու մէջ, այս երկարատեւ ճակատամարտի ընթացքին»:

Յիսնապետ էճքիւմայ իր հօրը ուղղուած նամակի մը մէջ կ'ըսէր, «Իմ զօրագունդս դառն բողբոջներ ունեցաւ: չափազանց կը վախնամ որ ընկերներս չարաչար կերպով վնասուած ըլլան: Անոնք տան մը մէջ բռնուեցան Գերմաններու կողմէ, որոնք յաջողք էին մեր համազգեստը հագնիլ: Այլևս ընաւ Գերմանները չպիտի յարգեմ: Անոնք պատուոյ օրէնք չունին»:

Ուրիշ սպայ մը սապէս կը գրէ. «Իրիկուն մը մեր մօտ գտնուող անտառէ մը մեծ յարձակում մը կրեցինք: Յաջորդ առտուն 800է աւելի գերման զիակներ գտանք: Անոնք յարձակեցան պոռալով. «Կեցցէ Անգլիան»:

Մոնսի կռիւներուն մէջ վիրաւորուած են թայնսպետ մը հետեւեալը կը գրէ, «Մինչ ուժասպառ գետին ինկած էի՝ գերման հետեւակազօրքը քովէս անցաւ: Կը լսէի ողորձի ազգաղակները վիրաւորեալներուն, որոնք անագորոյն կերպով կը մահացուէին թշնամիին կողմէ: Անշուշտ և անշարժ կը սպասէի: Բովէս անցնող Գերմաններէն մին իր հրացանին սուր ծայրովը ջախջախեց կողերէս մին»:

Պէտք է ըսել թէ Գերմանները ամէն ատեն բիրտ և անզգայ չէին:



Կ Է Օ Պ Է Ն
Թրքական դրօշը պարզած

Բրիտանացի զինուոր մը կը գրէ թէ՛ երեք օրուան դառն կռիւներէ վերջ, չրաքնէլի հարուածով մը վիրաւորուեցաւ: Մթութեան պատճառաւ ինքը և ուրիշներ անշուշտ մնալով, գետնատարած մնացին չողգամի արտի մը մէջ: Գիպուածաւ Գերմանները գտան զինքը, և մեծ ազնուութեամբ խնամեցին բոլոր վիրաւորներն ալ: Գերման զինուոր մը տրցակ մը խոտ բերաւ իրեն որ վրան պակի, և քիչ վերջ պատգարակով փոխադրուեցաւ հիւանդանոց մը, ուր կեցաւ երկու շաբաթի մը չափ: Արտօնութիւն տրուեցաւ իրեն որ իր բարեկամներուն հետ թղթակցի:

Գերմանները Մոնսէն Լիւշարչի մօտերը յառաջացեր էին այնպիսի թափով մը, որ բնաւ իր հաւասարը ունեցած չէ պատմութեան մէջ: Օգոստ. 31ին, թշնամին խիստ մօտեցեր էր Բարիզի, որուն զինուորական կառավարիչը փափաքելով ազատիլ «անօգուտ սպառող բերաններէ»՝ հրաւէր կարգացրեր էր քաղաքացիներուն որ մեկնին. ասոր վրայ բնակչութեան գրեթէ մէկ երրորդը հեռացեր էր քաղաքէն և կառավարութիւնն ալ Պօրտօ քաջուեր էր: Մնացողները անխուով էին: Գերման օգնաւորները, որոնք իրենց առատ ուժերովը քաղաքը կ'ողողէին, հաղիւ հաղ յաջողք էին քանի մը ծերուկներ և աղջիկներ սպաննել և վիրաւորել: Ասոնք ալ վախճան գտան, որովհետեւ ֆրանսացի կէս երկոտասնեակ մը օգնաւորներ, ի տես թշնամիին, խիզախօրէն կը պայքարէին մեծ յաջողութեամբ:

Մեծ քաղաքին պաշտպանութեան համար լաւ խորհուած և պատրաստութիւններ տեսնուած էին: Հարիւրաւոր քաղաքային երկրաչափներ, որմնադիրներ և ուրիշ արհեստաւորներ կամաւոր ներկայացրեր էին: Օղանաւներ գնդացիներով զինուած՝ շարունակաբար կը չըջագայէին երկնակամարին մէջ: Անհաշուելի քանակութեամբ ուտելիք և ռազմամթերք համախմբուած էին քաղաքին մէջն ու չըջալայքը: Արջառ, ոչխար և կաթնտու կովեր, տասը հազարներով մակաղուած էին գրեթէ ամէն մէկ կանանչուտ գետնի վրայ, 90 մղոնէ բաղկացեալ պաշտպանողական չըջազծի մը սահմանին մէջ: Պուա տը Պուլօնեը անասուններու կարեւոր հաւաքավայր մը եղած էր: Հազարաւոր զինուորներ վէրսայլի և Յօնթէնպոլոյ պէս վայրերու մէջ համախմբուած էին:

Բիւրաւոր փախստականներ հիւսիսէն և արեւելքէն Բարիզ խուժեր էին: Գերման յառաջացման գոյն վրայ գտնուող բազմաթիւ քաղաքներու նոյնիսկ իշխանութիւնները՝ փախուստ տուեր էին, խուսափելու համար գերման վրէժխնդրութենէն, որովհետեւ Գերմանները սովորութիւն ունէին իրենց գրաստի հողերուն քաղաքային պաշտօնատարները ձերբակալել, իբրեւ թշնամութիւն գրգռող տարր, և հրացանի բռնել ունէ անկարեւոր պատրուակով: Ամէն ուրեք, սակայն և այնպէս, անվեհերօրէն մնաց գիւղին երէցը՝ իր հօտին հայրը, զրկեալին մխիթարիչը, գիւղապետը, գիւղին ախոռապետը և չըջականերու ընդհանուր գործակատարը:



ՖՕՆ ՊԻՒԼՈՎ

Հրամանատար գերման Բ. Բանակին

նակին կոչում կ'ընեմ՝ թշնամիին ցոյց տալու իր ուժը, և ֆրանսական ճրգ բանակին հետ, կողք կողքի, հզօր թափով մը սկսիլ յարձակումը:»

«Վստահ եմ թէ ի զուր չէ որ այս կոչս կ'ընեմ. ընդհակառակն անցեալ երկու շաբթուան միջոցին ցոյց տրուած սքանչելի ոգիի արտայայտութեամբը, ձեր բոլոր կարողութեամբը, պիտի իյնաք թշնամիին կողին վրայ, և դաշնակիցներու հետ ներդաշնակ գործակցութեամբ զայն եռ պիտի մղէք:»

Յաղթական Ֆրանսացիք Վիթուի-լը-Ֆրանսուա մտած ժամանակին, գերման ճրգ զօրաբանակի սպայակոյտին գրուած տանը մէջ գտան հետեւեալ օրակարգը. — «Վիթուի-լը-Ֆրանսուա, ինպտ. 7, ժամը 10.30, կէսօրէ վերջ: Մեր երկար և տաժանելի զօրաշուին նպատակը ձեռք ձգուած է: Ֆրանսական զլխաւոր զօրագունդերը, շարունակաբար նահանջելու պարտաւորուելէ վերջ՝ բռնադատուած են այժմ ընդունելու մեր ճակատամարտի հրաւերը: Մեծագոյն վճռականութիւնը, անկասկածօրէն, կը մերձենայ: Վաղը, ուրեմն, գերման բանակին



ՎԻԻԲՐԷՄՊԷՐԿԻ ԱԼՊԵՆԻ ԻՇԵԱՆՆԸ

Հրամանատար գերման Դ. Բանակին

բրիտանական զօրագունդերուն հետեւեալ օրակարգը կը հրատարակէր. —

«Մեծ փորձութեամբ լեցուն գործողութիւններու շարքէ մը վերջ — մեծ մասամբ նահանջ — որոնք դաշնակից բանակներու ընդհ. ռազմագիտական ծրագիրով հարկեցուցիչ համարուեցաւ, բրիտանական ուժեր, միացած իրենց ֆրանսացի ընկերներուն հետ, այսօր պատրաստ են թշնամիին վրայ գրոհ տալու: Բարիզը պաշարելու իրենց փորձին մէջ ընկճուած՝ Գերմանները պարտաւորուեցան շարժելու արեւելեան և հարաւ արեւելեան ուղղութեամբ, ուժով մը ֆրանսական ճրգ բանակին վրայ իյնալու յայտնի դիտաւորութեամբ: Այս գործողութեամբ անոնք իրենց աջ կողը և հաղորդակցութեան գիծը՝ ֆրանսական ճրգ բանակին և բրիտանական ուժերուն միացեալ յարձակման կ'ենթարկեն:»

«Ֆրանսայի մէջ գործող բրիտանական բա-



ԶՕՐԱՎԱՐ ՍԸՐ ԶԱՐԼՍ ՖԷՌԵՐԸՆ

Հրամանատար Բրիտ. Ե. Զօրաբանակին

բովանդակ ուժը պիտի զբաղի Բարիզէն Վէնտէօն երկարող գիծն ի վեր: Գերմանիոյ բարօրութիւնն ու պատիւը փրկելու համար՝ կ'ակնկալեմ որ՝ ամէն մէկ սպայ և զինուոր, առանց նկատի առնելու վերջին մէկ քսնի օրերու դառն և դիւցազնական կռիւնհորը, կատարէ իր պարտականութիւնը անչեզօրէն և ցմահ: Ահէն բան վաղուան արդիւնքէն կախում ունի:» Սեպտ. 6ին, կիրակի առտու, ֆրանսական առաջին և երկրորդ բանակները, հաստատուած Պէլֆու-Վէնտէօն գծին վրայ, դէմ յանդիման կը կանգնէին գերման Է. (Ֆօն Հիրինկին) և Զ. (Պավերիայի գահաժառանգ) բանակներուն, Ալզասի և Լօռէնի մէջ: Ֆրանսականին ծայրագոյն աջը տակաւին կառչած կը մնար Ալզասի մէկ անկիւնը, կեղբոնը՝ ի Նանսի, մինչ Բ. բանակին ձախը՝ Վէնտէօնի արեւելեան և հիւսիսային կողմը կը կանգնէր:

Մառնի ճակատամարտին մէջ, այս գերման բանակները՝ իրենց դէմ կանգնող ֆրանսական բանակներուն վրայ յարձակեցան: Այս յարձակումները, մասնաւորաբար Նանսիի մէջ յուսահատական երեւոյթ մը առին: Չամբացուած մեծ բացուածք մը կար թուլի և Էփինաիլ

բերդերուն միջեւ, անանկ որ Շալօնի դաշտին վրայ ձեռք բերուած յաջողութիւն մը՝ Գերմանները ի վիճակի պիտի ընէր իրարմէ անջատել ֆրանսական, Բ. Գ. և մասամբ մըն ալ Դ. բանակները, և Վէնտէօն-Թուլ ամրացեալ գիծը:

Զօրավար Սառայի ֆրանսական Գ. բանակը հաստատուած էր Վէնտէօնի և Մէօզի բարձունքներուն վրայ: Իր աջը կը տարածէր մինչև Վէնտէօնի հիւսիսը գտնուող կէտի մը վրայ և ձախը դէպի Պաուլը-Տիւք: Ասանկով ան կը դառնար դէպի արեւմուտք, և ֆրանսական Բ. բանակին հետ կռնակ կռնակի կու գար: Գերման Գ. բանակը (գահաժառանգ), որ Լիւքսէմպուրկէն դէպի արեւմուտք խուժած՝ և Առկոնի ընդմէջէն դէպի հարաւ դարձած էր, այժմ կը պատրաստուէր յարձակելու ֆրանսական Գ. բանակին վրայ, Ֆու-Թուուայեօնի մէջ, խորտակելու համար Վէնտէօն-Թուլ ամրացեալ գիծը:

Զօրավար տը Լանկլի Դ. բանակը Վիթուի-լը-Ֆրանսուայի հարաւը կը գտնուէր, երեսը դէպի հիւսիս դարձուցած: Ան կ'երկարաձգուէր գրեթէ Շալօնի բովանդակ դաշտին մէկ ծայրէն միւսը, ուր Գերմանները ընտրեցին իբր կարեւոր կէտ իրենց թափելիք զլխաւոր ճիգին: Հոս կը գտնուէր գերման Գ. բանակը (իշխան Վիլթէմպերկի):

Այս միջոցիս գերման Զ. Գ. բանակը (Ֆօն



ԶՕՐԱՎԱՐ ՍՆՕՈՒ

Հրամանատար Բրիտ. Դ. Զօրաբանակին

Հառուղիի Մաքսոն բանակը) շատ պակասած էր: Իր միութիւններէն մեծագոյն մասը ի վերջոյ արեւելեան ճակատին վրայ վերերեւեր էին: Գերման ռազմական գծին մէջ ստեղծուած այս կերպ բացուածքը գոցուեցաւ Փօն Պիւլովի և Փօն Բլուքի կողմէ:

Զօրավար Ֆօլի նոր կազմած Թ. բանակը հիշտ այդ ատեն բերուած էր տեղաւորուելու Դ. և Ե. բանակներուն միջեւ, որուն գլխաւոր հակառակորդն էր Փօն Պիւլովի Բ. բանակը:

Զօրավար տիէփրէի ֆրանսական Ե. բանակը կը բռնէր Էսթէնէյ-Բուսթիօն գիծը, իր ձախը ունենալով Բօնոյի հեծելազօրքը: Մինչ զօրավար Բոյի Զ. բանակը Բարիզի հիւսիսէն յառաջանալով դէպի արեւելք կ'ընթանար, աջը Մառնի վրայ—Մոյի մօտ—և ձախը դէպի Պէց ուղղուած: Այս երկու ֆրանսական բանակներուն հակառակորդը կը հանդիսանար գերման առաջին բանակը (Փօն Բլուք): Գերման հրամանատարը Բ. և Դ. պահեստի զօրաբանակները Ուրգի արեւելեան կողմը թողուց—Լաֆէնթէ Միլօնի և Մառնի միջեւ—դէպի արեւմուտք դարձած, ֆրանսական Զ. բանակին յառաջացումը արգելելու համար, մինչ Դ., Գ. և Ե. զօրաբանակներով յառաջացաւ դէպի Բուլօմիէ, Ռէպէ, Լաֆէնթէ Կօչէ, ֆրանսական Ե. բանակին կեղրոնն ու ձախը զարնելու յայտնի դիտաւորութեամբ: Դժուար է հասկնալ թէ ինչպէս ու է գերման զօրավար կրնար զանցառելի քանակութիւն սեպել բրիտանական բանակը: Ճշմարիտ է թէ Գերմանները տասնեակ տարիներէ ի վեր զբաղած էին համոզելու իրենց հայրենակիցները, մասնաւորաբար զօրագունդերը, թէ իրենց բանակը աշխարհի ու է բանակէ շատ գերազանց էր: Պարտաւորուած ըլլալով որդեգրել ընդհանուր ծառայութեան դրութիւնը՝ անոնք ջանացին նորին գերազանցութիւնը հաստատել անուանարկելով հինը: Բրիտանիոյ կամաւորական ծառայութեան դրութիւնը, իրենց համար, խաւար դարերու նշխար մըն էր, և երբեք առիթ չփակցուցին յայտարարելու թէ՛ անոր սպանները անապօքոններու զբօսասէր խումբ մը կը ներկայացնէին, և իր զինուորութիւնը՝ վրձարուածներու խումբ մը, կազմուած ազգաբնակչութեան ոճրալից և քաղցած զիրտերէն: Կը պատմուի թէ՛ երբ մէկը Պիզմարքի կ'ըսէր թէ՛ բրիտանական բանակը կրնար գերման ցամաքը ելլել, ան հանդարտութեամբ պատասխանեց. «Եթէ այդպէս ընէ՛ ոստիկանութեան

լուր պիտի տամ և զայն պիտի արգելափակեմ:» Գիտենք թէ ինչպէս գերման կայսրը օգոստ. ին, իր մէկ հրամանագրին մէջ, զայն կը նկարագրէր որպէս «արհամարհելի» ուժ մը: Բրիտանական բանակը պարտաւորուած էր իր Մոնսի դիրքերէն ետ նահանջել, և երկու շաբաթի շափ շարունակաբար ետ մղուիլ: Այս երեւոյթէն դատելով՝ գերման իշխանութիւնք այն եզրակացութեան կը յանգէին թէ՛ բրիտանական բանակը կարելի էր ընաճնջել: Վերջին տարիներու մէջ, անոնք որ առիթ ունեցեր են գերման գաղափարները շօշափելու, անշուշտ դիտած ըլլալու են որ, անոնց մէջ կայ չինական այն տարօրինակ մտայնութիւնը թէ՛ բան մը այս կամ այն կերպ ըլլալու է, որովհետեւ իրենք անանկ կ'ուզեն: Գերմաններու համար շատ անտեղի բան մը պիտի ըլլար՝ եթէ բրիտանական բանակը պայքարին միջամտէր: Ֆրանսական Ե. և Զ. բանակներուն մէջտեղ ձեղք մը կար. Գերմանները միաքերնին դրին վերջինը իր դիրքին վրայ գամել, մինչ առաջինին ձախը պիտի պաշարէին. սակայն վերջին պարագային, գործողութեան մասնակցող գունդերը կողային յարձակման պիտի ենթարկուէին՝ այն գունդերուն կողմէ, որոնք կրնային ֆրանսական երկու բանակներուն մէջտեղ մտնել: Այս պահուս բրիտանական բանակը—հինգ զօրաւոր զօրաբաժիններով և հինգ հեծելազօրքի կիսաբաժինով—Քրէսի անտառին քովերը թաքցատոց մտեր էր: Փօն Բլուքի կարծիքով, Անգլիոյ միջամտութիւնը գէթ հեռաւոր հաւանականութեան մը կարելիութիւնը ցոյց կուտար. ասոր վրայ էր որ ան հեծելազօրքի Բ. բաժինը Բուլօմիէ դրկեց, և իր Թ. հեծելազօրքի բաժինն ալ՝ Քրէսի արեւմտեան կողմը: Այս կերպով տեղաւորուած գերման հեծելազօրքը պիտի կրնար, հարաւ-արեւմուտքէն, ու է թշնամի գունդերու մերձեցումը նախապէս տեղեկագրել:

Կրնայ ըսուիլ թէ՛ ճակատամարտը ծայր տուաւ ֆրանսական Զ. բանակին Ուրգի դէմ յառաջացումովը: Գերմանները կը բաղկանային երեք առաջին գծի զօրաբաժիններէ (Բ. զօրաբանակէն), և երկու երկրորդ գծի զօրաբաժիններէ (Դ. պահեստի զօրաբանակ): Անոնք, իբրև առաջապահ գունդեր, Ուրգի արեւմտակողմի բարձրաւանդակի գիւղերուն մեծ մասը բռնած կեցեր էին: Ֆրանսական Զ. բանակը կը բաղկանար երեք «գործօն» և չորս երկրորդ գծի զօրաբաժիններէ, որոնց պարտք կ'իյնար բռնա-

զրաւել Ուրգի արեւմտեան եզերքի գիւղերը, գետէն անդին թշնամիին գլխաւոր դիրքերուն վրայ յարձակիլ սկսելէ առաջ: Կուրը այնքան հատուածներու ռաժնուած էր, որքան էր Գերմաններու գրաւած գիւղերու թիւը: Գերմանները երբ կը տեսնէին որ դիրք մը իրենց ձեռքէն պիտի ելլէր, գիւղը կրակի կուտային, ժամանակ շանելու և թշնամիին ու է ապաւին զլանալու համար: Միւս բոլոր ֆրանսական բանակները շաբ մը կատաղի կուրեններու բռնուած էին, որոնց մէջ ոչ մէկ կողմ յառաջդիմութիւն ըրաւ, ի բաց առեալ ֆրանսական Գ. բանակը, որ աստիճանաբար դէպի հարաւ քշուեցաւ, Մէօզի բարձունքներն ի վեր:

Այս բոլորէն էր որ բրիտանական զօրաբաժինները կուրի մէջ մտան և ստեղծեցին կացութիւն մը, որ թէ՛ թատերական էր և թէ՛ անմիջականօրէն վճռական: Անոնք կ'ազմուած էին երեք զօրաբանակներէ: Առաջինը և երկրորդը կը բաղկանային Ա., Բ., Դ., Ե. զօրաբաժիններէ, որոնց ամէնքն ալ Մոնսի կուրեններուն մասնակցեր էին, Գ. զօրաբանակը կը բաղկանար Դ. զօրաբաժինէն և ԺԹ. կիսաբաժինէն, որով բրիտանական բանակը կարելի է հաշուել հինգ զօրաբաժին, և հինգ հեծելազօրքի կիսաբաժին: Սեպտ. 6ին, այս զօրաբաժինները մեկնեցան իրենց բանակատեղիէն, և Քրէսի անտառին մէջէն յառաջացան դէպի հիւսիս-արեւելք, ետ մղելով թշնամի հեծելազօրքը, և հետեւակ առաջապահ գունդերը: Իրիկնամուտին անոնք ինքզինքնին հաստատել էին Տանեի-Քալօմիէ-Մէլզօն գծի վրայ: «Կարծեմ թէ Սեպտ. 6ին, կէսօրուայ մօտերը ըլլալու էր, կ'ըսէ Սըր Ճոն Ֆրէնչ՝ երբ թշնամին ըմբռնեց կարեւորութիւնը այն վտանգին, որ հարաւ-արեւելք շարժող իր շարքերու կողին կը սպառնար:»

Սեպտ. 7ին, բրիտանական բանակը շարունակեց իր ճակատէն վանել թշնամին, և իրիկնամուտին Կռան Մօռէնի գիծը հասած էր:

Արեւմուտքի կողմը, թշնամի զօրաբանակներու բռնադատուած նահանջը, անպաշտպան թողուց այն զօրագունդերուն կողը, որոնք կը գտնուէին ֆրանսական Ե. բանակին դէմ. ուստի անոնք ալ պարտաւորուեցան նահանջել, անանկ որ ֆրանսական Ե. բանակը, իրիկնամուտին, կարող եղած էր հասնիլ մինչև Մօռէն, Էսթէնէի և Լաֆէնթէ Կօչէի մէջտեղ:

«Սեպտ. 7ին, կ'ըսէ Սըր Ճոն Ֆրէնչ, ֆրանսական Ե. և Զ. բանակներն ալ ծանրապէս զբաղած էին մեր կողին վրայ: Գերման պահեստի

Բ. և Դ. զօրաբանակները, Ուրգի վրայ, մեծ թափով կը դիմադրէին ֆրանսական յառաջացումին, դէպի այդ գետը. սակայն Զ. բանակը քանի մը առաջադիր կէտէր գրաւելէ շարգիլեց: Գերմանները ծանր կորուստներու ենթարկուեցան: Ֆրանսական Ե. բանակը, թշնամիին ծանր կորուստ պատճառելէ վերջ, զայն ետ նետեց դէպի Կռան Մօռէն գետին գիծը:»

«Մեր յառաջանալէն առաջ, թշնամին նահանջեց Բ. և Թ. և պահակ հեծելազօրքի բաժիններու պաշտպանութեան տակ, որոնք շարաշար կերպով տուժեցին:»

«Մեր հեծելազօրքը մեծ թափով գործեց, մասնաւորաբար զօրավար Տը Լիդի կիսաբաժինը, Թ. նիզակաւորներու և ԺԼ. Հիւսարներու հետ:»

«Երկուշաբթի, 7ին, Գերմանները սկսան դէպի հիւսիս-արեւելք նահանջել: Ասիկա առաջին անգամն էր որ՝ այս զօրախումբերը, Մոնսի վրայ կատարած իրենց յարձակումէն ասդին, ետ կը դառնային: Բարիզի այսքան մօտ գալէ վերջ՝ իրենց նահանջը դառն յուսախաբութիւն մըն էր: Մեռեալներուն վրայ գտնուած նամակներէն յայտնի կ'ըլլար որ թշնամի գունդերու մէջ ընդհանուր տպաւորութիւն մը կար թէ իրենք Բարիզ մտնելու վրայ էին:»

Աւելի դէպի արեւելք կուրը ամենուրեք կատաղի էր: Ճակատամարտը յարձակումով, հակադարձակումով և գրոհով ետ և առաջ կը ատատանէր, նուազ որոշ արդիւնքով, ի բաց առեալ այն վճռական յարձակումներու շարքը, Նանսիի մօտերը, որոնք ծանր կորուստներով ետ մղուեցան, կայսեր աջքերուն տակ, և ֆրանսական Գ. բանակին աջը բաւակունչապի մը հարաւ քշուեցաւ. որպէսզի գահաժառանգը կարող ըլլայ Ֆօն Ռուայօնը ռմբակոծել: Կը տեղեկագրուի թէ Մօպէօթ այսօր իսկ ինկած ըլլալու է:


Սեպտ. 8ին ֆրանսական Զ. բանակը կուրի բռնուեցաւ գերման պահակ զօրաբաժինի կողին հետ, Ուրգի վրայ, և կուրը առաւ արիւնազանդ հանգամանք:

Բրիտանացիք շարունակեցին իրենց կուրը դէպի Մառնի և Մօռէնի գիծը, Թոբիլփօսի քովերէն մինչև Լաթոէթուառի մօտերը:

Ֆրանսական Ե. բանակը, մեծապէս օժտուած բրիտանական գործողութիւններով, կատաղօրէն յարձակեցաւ թշնամիին վրայ, գրոհ տուաւ Մօնմուայի և ուրիշ երկու գիւղերու վրայ, կուրձք կուրձքի կուրով մը, և հաստատու-

ուեցաւ Բըթի Մօռէնի մէջ: Գերման Բ. բանակին կողմ անպաշտպան մնալով՝ պարտաւորուեցաւ ետ քաշուիլ, և Ֆրանսական Թ. բանակը ի վիճակի կ'ըլլար առաջացնելու իր ձախն ու կեդրոնը Բըթի Մօռէնի գծին վրայ:

Սեպտ. 9ին թշնամին հրաժարեցաւ իր ընդհանուր նահանջի ծրագիրէն: Ան, ուստի, հզօրապէս ամրացաւ Լաֆէրթէ-սու-ժուառի մէջ, երբ Ուրգի պահակ կողմ զօրացուց, կարգ մը կատաղի յակայարձակումներ գործեց Ֆրանսական Զ. զօրաբանակին վրայ, և այս բոլոր ցոյցերու քօղին ներքեւ ետ քաշեց իր արեւմտեան կողմին ամբողջական մասը: Ֆրանսական Զ. բանակը այժմ լիով տէրն էր արեւմտեան եզերքին: Կսիւր մասնաւորապէս յուսահատական երեւոյթ մը առած էր, սակայն Ֆրանսացիներու շահած հողերը անխախտ մնացին: Գետին մէկ կէտին վրայ Գերմանները ամբողջ օր մը աշխատեցան նաւակամուրջ մը շինելու: Ֆրանսացիները թոյլ տուին որ Գերմանները գլուխ հանեն այդ ձեռնարկը, և ապա կրակ բանալով զայն խորտակեցին: Օդը, որ մինչև հիմա յաջող եղած էր, թէև շատ տաք, փոխուեցաւ և



Գերմանական Ծփուն ական մը

հեղեղանման անձրեւներ եկան, ընկերացած ահաւոր փոթորիկի մը:

Բրիտանական ձախին վրայ գործող Գ. զօրաբանակը՝ գնդացիներով զինուած, զօրաւոր վերջապահ գունդերու դէմ առ դէմ գալով անկարող եղաւ Լա-Ֆէրթէ-սու-ժուառէն գետը անցնիլ, մինչև որ իրիկնամուտը վրայ հասաւ, որ ատեն խուճաբ մը՝ Շանթիի քովերը անցնելով՝ կէսօրին հիւսիսային գետեզերքը տեղաւորուեցաւ: Ա. և Բ. զօրաբանակները՝ Բըթի Մօռէնի վերջապահները քշելով՝ յառաջացան Շառլիի և Շաթօ Թիէռիի վրայ, ուր բռնազրաւեցին գետին անցքերը և հաստատուեցան քանի մը մղոն դէպի հիւսիս:

Բրիտանական Ա. և Ե. զօրաբանակները սեպտեմբերի մը պէս միտէր էին Ուրգի Գերմաններուն և Ֆօն Պիւրովի արեւմտեան կողմին մէջտեղ, որով գերման բանակները պարտաւորուեցան հաստատուելով տեղի տալ արեւմուտքէն սկսեալ: Սրբ Ճօն Ֆրէնչ այս առթիւ կ'ըսէ. «Այս օրուան հետապնդումին մէջ՝ թշնամին մեռեալի և վիրաւորի ծանր կորուստ ունեցաւ: Քանի մը հարիւր գերիներ բռնեցինք, և Բ. զօրաբաժինը 8 գնդացիներու մարտկոց մը գրաւեց»:

«Ֆրանսական Ե. բանակին ձախը Շաթօ Թիէռի հասաւ, ամենադառն կոիւէ մը վերջ, թշնամին մեծ կորուստով կատարելապէս քշած ըլլալով գետին հիւսիսը»:

«Այս բանակին կսիւր, Մօնմիւայի մօտերը, խիստ սաստիկ եղաւ»:

Սեպտ. 9ին, Մօնմիւայի ճակատամարտէն վերջ՝ Ֆրանսական Ե. բանակի հրամանատարին կողմէ հրատարակուած հետեւեալ օրակարգը օրինակ մըն է այն ոգիին որ նըշնշած էր մեր դաշնակիցները: «Զինուորներ, Մօնմիւայի, Վօշանի, Շանբուպէռի յիշատակելի դաշտերուն վրայ որոնք դար մը առաջ ականատես եղան Պիլիսէրի Բրուսիացիներու վրայ տարուած մեր նախահայրերու յաղթանակներուն—ձեր հուժկու յարձակողականը Գերմաններու դիմադրութիւնը խորտակած է: Իր կողերուն վրայ կ'ուշած, կեդրոնը ջախջախուած թշնամին բռնադատուած քայլերով կը նահանջէ դէպի արեւելք և հիւսիս: Հին Բրուսիոյ ամենահռչակաւոր զօրաբանակները, Ուէսթֆալիայի, Հանովրի, Պրանտէնպուրկի զօրաբաժինները՝ հապճեպով քաշուեր են ձեր առջեւէն»:

«Այս առաջին յաջողութիւնը լոկ նախերգութիւն մըն է: Թշնամին ցնցուած է, սակայն տակաւին վճռականօրէն պարտուած չէ»:



Ընդծովեայ ականի մը պայթումը

«Դուք տակաւին դառն դժուարութիւններէ պիտի անցնիք, երկար ճամբաներէ պիտի քալէք, և ծանր ճակատամարտներու պիտի բռնուիք»:

«Թող մեր հայրենիքէն պատկերը, բարբարոսներէ եղծուած իր վիճակովը, միշտ ձեր աչքին առջև մնայ: Ամէն բան անոր սիրոյն զօհելու համար՝ ոչ մէկ ժամանակ այսօրուանին չափ պէտք տեսնուած էր»:

«Ողջունելով այս հերոսները, որոնք ինկան վերջին օրերս, իմ խորհուրդներս կը դառնան ձեզի, յաջորդ ճակատամարտին յաղթականներու դէմ»:

«Օն, յառաջ զինուորներ, Ֆրանսայի սիրոյն համար»:

Մօնմիւայ 9 Սեպտ. 1914
Ե. Բանակին հրամանատար Զօրավար ՖՌԱՆՇԷ ՏԷՓԸՐԷ

Ֆրանսական Գ. բանակը ճակատէն, կողէն և ետեւէն ծանր ճնշումներու, յարձակումներու ենթարկուեցաւ, սակայն յաջողեցաւ պահելու իր դիրքը: Ֆրանսական առջին վրայ (արեւելեան երես) քանի մը յարձակումներ եղան, սակայն բոլորն ալ ետ մղուեցան, և քիչ մը հող շահեցան: Մեզ անանկ կը թուի թէ Գերմաններու այս տեղերուն յարձակումները նպատակ ունէին ծածկելու Ալզաս-Լօռէնէ դէպի արեւմտեան կողմ կատարուած զօրաց փախադրութիւնը:

Սեպտ. 10ին, երկուշաբթի, գերման Ա. բանակը հապճեպով նահանջել սկսաւ, Բ. բանակն ալ անոր օրինակին հետեւեցաւ: Բրիտանական բանակը ձեռք առաւ հետապնդումի գործը:

Սրբ Ճօն Ֆրէնչ կը գրէ. «Մեր յառաջացումը 10ի արշալոյսին սկսաւ, որուն կ'ընդգիմանային զօրաւոր վերջապահական գունդեր: Ա. և Բ. զօրաբանակները, աչքն օժտուած հեծելազօրքի բաժիններով, և ձախէն Գ. և Ե. հեծելազօրքի կիսաբաժիններով՝ թշնամին դէպի հիւսիս քշեցին: 13 թիզանօթ, 7 գնդացի, գրեթէ 2000 գերի եւ մաս մըն ալ փոխադրական միջոցներ ձեռքերնիս ինկան: Թշնամին շատ մը մեռեալ թողոյց դաշտին վրայ: Ֆրանսական Ե. եւ Զ. բանակները, այս օրերս, քիչ ընդդիմութիւն գտան»:

Յորդանոս անձրեւներ կը տեղային ու ճամբաները դժուարանցանելի կը դառնային: Նախընթաց իրիկուն Գերմանները իրենց ծանր թշնադանօթները ետ քաշեր էին, ասով մէկտեղ զարմանալի էր որ յաջողեր էին դանոնք փրկել:

Սեպտ. 9ին կատարուած գերման նահանջը յայտնի էր որ խնամով պատրաստուած էր, եւ թշնամիներու ընկերացող վերջին հետեւակ խումբը ինքնաշարժերով խոյս տուած էր:

Ֆրանսական Զ. բանակը արագութեամբ մը դէպի Բօմբիէն-Սուասօն գիծը շարժեցաւ, և Ե.

ալ՝ Մառն հասաւ, Շաթօ-Թիէպիէն Տօմանս
գալով: Իրիկնամուտին Ֆրանսական Թ. բանա-
կը՝ Ե. բանակին աջ վերջակողմին հետեւեցաւ,
և Ֆրանսական Թ. բանակը գերման պահակ
զօրաբանակները քշած էր Ս. Կօնի ճախճա-
խուտները, մինչ իր աջը մտած էր կատարի
սակայն կայուն, Կոլի մը մէջ, Ֆէն-Շամբէ-
նուադի և Մուլի-լը-Շանի մէջտեղ:

Դժբախտ բրուսիական պահակազօրքը ճախ-
ճախուտներէ, չորս ճամբաներով, նահանջի
սկսաւ և, Կ'ըսուի թէ՛ մարդիկ, ձիեր և թըն-
դանօթներ, մեծ թիւով, կլանուեցան մօրուտ-
ներէն: Այս ընտիր զօրաբանակները ծանր կո-
րուստներ տուին՝ առանց կարեւոր ծառայութիւն
մը կատարած ըլլալու ամբողջ կոլի միջոցին:
Ճշմարիտ է թէ անոնք օգոստոս 22ին խորտա-
կեցին Ֆրանսական զիծը Սամպուի վրայ, սա-
կայն հոս անոնք հանդիպեցան այճերիական ա-
հաւոր զօրաբանակներուն, և իրենց նմաններուն
պէս շարաշար տուեցին: Օգոստոս 26ին անոնք
լը-Քամպի մէջ գործածուեցան Բրիտանացիներ-
րու դէմ և տասանորդուեցան: Երեք օր վերջ
անոնք Ֆրանսական Ե. բանակէն յարձակում
կրելով՝ Կիզի վրայ ետ ինկան: Ասանկով Պերլի-
նէն մեկնած ատեն ուռուցիկ հեռագրակները
երազող այդ չորս բանակները անյայտ կացու-
թեան մը մատուցեցան:

Դէպի արեւելք տարածուող դաշտին վրայ
բուռն կռիւ մը տեղի ունեցաւ, որուն մէջ,
սակայն և այնպէս, Ֆրանսացիները քիչ մը գե-
տին շահեցան: Հոս երկու հակառակորդ կող-
մերն ալ փորձեցին յառաջանալ, սուինի փոխա-
դարձ յարձակումներով: Ետ և յառաջ կը ձո-
ճէր այս մահացու, կուրծք կուրծքի պայքարը,
որուն մէջ Գերմանները 15 հազարէն 20 հազար
միայն մեռեալ ունեցան: Ահա՛ թէ ինչ կը
պատմէ ակնաստես մը.

«Թշնամիէն շատեր սպաննուեցան և վիրա-
ւորուեցան, և Մառնի հիւսիսային կողմի երկ-
րամասը կէտիկտող բազմաթիւ խիտ անտառները
գերման թափթփուք զինուորներով լեցուեցան:
Անոնցմէ շատեր կը թուին թէ, առնուազն եր-
կու օր առանց ուտելիքի մնացեր են: Գործու-
ղութեանց այս շրջանակին մէջ Գերմանները բա-
րոյալքուած են և հակառակօք փոքրիկ խումբե-
րով յանձնուելու: Ընդհանուր կացութիւնը Դաշ-
նակիցներուն նպաստաւոր կ'երեւի:»

«Թշնամիին կողմէ գրաւուած գիւղերու
մէջ խիստ վայրագ և անիմաստ միասներ կա-
տարուած են: Ստացուածքները լրբութեամբ

փճացուցուած են, դղեակներու պատկերները
պատուտուած, տուներ ընդհանրապէս կողոպ-
տուած են և ընակիչները խոշտանգուած:»

«Կռիւներու միջոցին հետաքրքրական դէպ-
քեր պատահեցան: 10ին մեր Բ. զօրաբանա-
կէն մաս մը դէպի հիւսիս յառաջանալով, տե-
սաւ որ, քիչ մը հեռուէն, ուրիշ հետեւակ ուժ
մը իրենին հետ զուգահեռաբար կ'ընթանար:
Նախ կարծուեցաւ թէ՛ բրիտանական միութիւն
մըն էր: Ժամանակ մը վերջ, սակայն և այն-
պէս յայտնի կղաւ որ ան՝ գերման նահանջող
ուժ մըն էր: Միջոցներ ձեռք առնուեցան ա-
ռաջքը կտրելու համար թշնամիին, որ չըջա-
պատուեցաւ և թակարդուեցաւ խորասուզուած
ճամբու մը մէջ, ուր 400է աւելի Գերմաններ
անձնատուր եղան:»

Սըր Ճօն Ֆրէնչ կը գրէ. — «... Թէ և խո-
րապէս կը ցախի մեր ունեցած ծանր կորուստ-
ներուն համար, այս գործողութեանց առթիւ,
սակայն նոյն ատեն խորհելու է թէ անոնք չա-
փազանց չեն՝ բաղդատելով կռիւի ահաւոր տա-
րածութեանը և թշնամիին կորուստներուն և
բարոյալքումին հետ: Պէտք է ըսել թէ Օգոս-
23էն սկսեալ մինչև Սեպտ. 17, իմ հրամանիս
տակ գտնուող բանակը անդադար զբաղած է,
առանց նոյնիսկ մէկ օրուայ հանգիստի:»

Ուրգ արեւելքէն արեւմուտք կը հոսի մին-
չև Լա. Ֆէնթէ Միլօն, և ապա անկէ ալ դէպի
հարաւ: Այս հիւսիսային և հարաւային տարա-
ծութեան վրայ էր որ Ֆօն Բլուքի կողային պա-
հակը կեցած էր: «11ի առտուն, կ'ըսէ Սըր Ճօն
Ֆրէնչ, թշնամիին աւելի հեռուները հետապըն-
դումը շարունակուեցաւ, և երեք զօրաբանակ-
ներ առանց ո և է ընդդիմութեան Ուրգը ան-
ցան. հեծելազօրքը էն գետի գիծը հասաւ, Գ.
և Ե. կիսաբաժինները Սուասօնի հարաւը, Ա.,
Բ. և Դ. կիսաբաժիններն ալ Գուվաէլի և Սիռ-
սէօլի բարձրաւանդակին վրայ:»

Ուրգէն մինչև էն, բրիտանական հետա-
պնդումը այնքան խիստ եղաւ որ, թշնամիին
պարտաւորեցաւ շարունակ նահանջել. ո և է
ընդդիմութիւն պիտի նշանակէր թշնամիին կա-
տարեալ ընաջնջումը և կամ գերութիւնը:

Մամուլի տեսչութիւնը հետեւեալը կը հա-
զորդէր. «10էն ասդին, գերման աջին ամբող-
ջութիւնը շարունակաբար ետ ինկած է մեծ ան-
կարգութեամբ: Ֆրանսական և բրիտանական
զօրագունդեր մօտէն հետապնդած են զանոնք:
10ին և 11ին 6,000 զինուոր և 15 թնդանօթ
գերի բռնուեցաւ, և կը տեղեկագրուի թէ թըչ-

նամին արագօրէն կը շարունակէ իր ընկրկումը
էնի վրայ, պարպելով Սուասօնի հողամասը...»

«Մինչ գերման աջ թեւը ասանկով ետ
մղուած և անկարգութեան մատնուած է՝ արե-
ւելեան հեռագոյն Ֆրանսական բանակները հուժ-
կու կռիւներու բռնուած են գերման կեղրոնին
հետ, զոր քշած են մինչև Վիթրի: 8ի և 10ի
մէջտեղ մեր դաշնակիցները անկարող եղան
Վիթրիի արեւմտեան կողմը կարեւոր գործեր
կատարել: 11ին, սակայն և այնպէս, գերման
բանակին այս մասը սկսաւ տեղի տալ և պար-
պեց Վիթրին: Ֆրանսական գունդերը թշնա-
միին կը հետեւին և անոր ղեկերէն մաս մը կը
քշեն դէպի հիւսիս, Աուկօնի անտառները:»

Ֆրանսական և բրիտանական Զ. բանակ-
ները 12ին էն հասան Սուասօններու արեւմուտքն
ու արեւելքը, որոնց հետեւեցան Ֆրանսական
Ե., Թ., Դ. և Գ. բանակները, կարգով՝ ձա-
խէն սկսեալ: Կէս գիշերին Բարիզի մէջ հրատա-
րակուած պաշտօնական զեկոյցը կ'ըսէ.

«Գերման բանակներու կեղրոնը կը շարու-
նակէ իր նահանջը: Մենք Մառնը անցանք՝
էփէնէի և Վիթրի-լը-Ֆրանսուայի մէջտեղէն:»

«Այսօր մեր աջ թեւին վրայ ալ թշնամին
սկսաւ քաշուիլ, և Նանսիի շրջակայ հողերը
լքեց: Մենք Լիւնէվիլը դարձեալ գրաւեցինք:»

«Հինգ օրուայ անդադար կռիւներու պատ-
ճառած յոգնութեան հակառակ՝ մեր զօրագուն-
դերը յամառութեամբ կը հետապնդեն թշնամին
իր ընդհանուր նահանջին մէջ, որ իրենց յառա-
ջացումէն ալ աւելի արագ տեղի կ'ունենայ:
Կարգ մը տեղերու մէջ այդ նահանջը գահավի-
ժող ընդթ ունեցաւ, անանկ որ մեր գունդերը
առիթ ունեցան հաւաքելու լքուած քարտէս-
ներ, վաւերաթուղթեր և անձնական թուղթեր,
ինչպէս նաև ծրարներ և նամակներ՝ նոր ստաց-
ուած կամ պատրաստ առաքումի:

«Ամէնուրեք, մասնաւորապէս Ֆոսմանդիէպի
շրջակայքը, թշնամին լքած է ումկասանդեր
և բազմաթիւ վակոններ, լի ուղղամթերքով:»

«Գերիները ցոյց կուտան անսուղութեան,
յոգնութեան և ընկճումի խոր տպաւորութիւն:
Ձիերը մասնաւորապէս սպառած են:»

Գահաժառանգի բանակին բռնադատուած
նահանջը ճիշդ ժամանակին փրկեց Ֆոս Թոուա-
յօնը, և, թերեւս, Վէոսէօնը: Վերջէն հաս-
ատուեցաւ որ որ Ֆոս Թոուայօնը իր վերջին
մահուան ժամերը կ'ապրէր: Բուն իսկ բերդը
աւերակներու կոյտի մը վերածուած էր, և ծա-
ռայութեան ընդունակ միայն 44 բերդապահ և

չորս թնդանօթ մնացեր էին: Աչքերնուս առջեւ
Ս. Միչիէլի օրինակը ունենալով՝ հաւանական կը
դառնար թէ՛ եթէ Գերմանները Ֆոս Թոուայօնը
բռնադրուէին և Վէոսէօնը մեկուսացնէին՝ պի-
տի կրնային իրենց գրաւած դիրքերը պահել:
Այդ պարագային Վէոսէօն պիտի իյնար, և
գերման բանակները պար նաւորելու հարցը մե-
ծապէս պիտի դիւրանար, և զինուորական շար-
ժումներու առանցք մը կորսուած պիտի ըլլար
դաշնակիցներու համար: Իրական յաղթութիւն
չկար՝ մինչև որ սահմանագլուխի բերդերուն
սպառնացող ամէն վտանգ չարտաքսուէր:


Այս օրուան մէջն էր որ Ֆրանսացիներ մեծ
հաճոյքը ունեցան վերագրաւելու Լիւնէվիլը
— գերման սահմանագլուխին վրայ 26 հազար
բակիչով քաղաք մը՝ որ օգոստ. 22էն ի վեր
Գերմաններու կողմէ գրաւուած էր: Անկողմ-
նակալ ըլլալու համար ըսենք որ՝ ասոնք ոչ այդ
վայրը ումրակոծեր էին և ոչ ալ ընակութեանը
հետ կոչտարար վարուել:

Ասանկով վերջացաւ Մառնի ճակատամարտ-
ները: Գերման յարձակողականը ձախողած էր,
և անոր հետ՝ վերջնական յաջողութեան հեռա-
նկարը:

Մեռեալ գերման սպայի մը վրայէն գտնը-
ւած նամակի մը մէջ կ'ըսուի. «Գերման հետե-
ւակազօրքը անգլիական հետեւակազօրքին ու-
հեծելազօրքին վրայ մօտէն չպիտի յարձակի:
Անոնց ձեռքը մահացու է: Անոնց վրայ յարձա-
կելու միակ կերպը հրետանիով է:»

Իսկ գալով Ֆրանսացիներուն, «Թայմզ»ի
զինուորական թղթակիցը սա պէս կ'ըսէ. «Այս
ճակատամարտը մեզ կը հայթայթէ ապացոյցը
Ֆրանսական առաջնորդութեան կարողութեան
և Ֆրանսական բանակներուն վճռականութեան:
Երկու շաբաթի չափ Ֆրանսացիները նահանջած
են: Ոչ մէկ բանակ կը փափաքի նահանջել,
նամանաւանդ Ֆրանսականը: Գերմանները իրենց
յաղթական թափին մէջն իսկ անմիջական կեր-
պով կասեցուցուեցան, յամառութեամբ յարձա-
կումի ենթարկուելով ետ մղուեցան ծանր կո-
րուստով: Գերմանները ասանկով կը յուսային
վճռական յաղթութիւն մը ձեռք ձգել, սակայն
գառն պարտութեամբ տուեցին:»

«Ֆրանսական բանակները Մառնի ճակա-
տամարտին մէջ, հսկայ քաջագործութիւններ
կատարեցին և կռիւին երեւոյթը փոխեցին:
Ֆրանսական սպայակոյտն ու հրամանատարու-
թիւնը աշխարհի տուին իրենց կարողութեան
ապացոյցը: Հեծելազօրքը գործունեայ և յան-



ԶՕՐԱՎԱՐ ՖՕՆ ՀԻՆՏԷՆՊՈՒՐԿ

դուզն էր: Հուշակալոր «75»-ը փշրեց գերման հետեւակազորքը և քայքայեց գերման թնդանօթները: Ֆրանսական հետեւակազորքը կռուեցաւ իր բոլոր առասպելական խոյացումովը: Ճակատամարտին ընտիր կարգադրութիւնը, ֆրանսական բանակի հրամանատարներու մեթոտիկ առաջնորդութիւնը, և սրտոտ զինուորներու անձնագոհութիւնները Ֆրանսացիներուն տուին յաղթութիւնը: Ֆրանսա ամէն իրաւունք ունէր հպարտ ըլլալու իր զաւակներուն քաջութեան համար:»

«Թայմզ»ի Տիֆօնի զինուորական թղթակիցը վառ գոյներով կը նկարագրէ այն տպաւորութիւնը, զոր ստեղծեց Մառնի յաղթանակը Ֆրանսացիներուն վրայ: Յաղթանակի վաղորդային տիրող տպաւորութիւնը ճնշող էր, յուսահատութիւնը կը քամէր ֆրանսացի ժողովուրդը: «Մեր Տիֆօն հասնելէն երկու օր վերջ, կ'ըսէ թղթակիցը, յուզումնալից մթնոլորտին մէջ յանկարծական փոփոխութիւն մը տեղի ունեցաւ: Կը զգայի որ բարի լուրեր հասեր էին: Պատերու վրայ փակցուած պատերազմի զեկոյցներուն առջեւ խոնավ բազմութեան նայուածքը հիմնովին փոխուած էր: Այդ վայրկեանին անձնական վիշտերն ու կորուստները մոռցուեցան: Սեպտ. 11ին, զօրավար Ժօֆուի զեկոյցը

կէս ժամէն ամէն կողմ չըջան ըրեր էր, և ամէն մարդ գիտէր թէ ինչ պատահած էր:

Հոն քանի մը տողերով պատմենք կարգ մը անցքեր, որոնք տեղի ունեցան Ուրզի ճակատամարտին մէջ:

Զօրավար Բոյի Զ. բանակը դէպի արեւելք կը յառաջանար, Ուրզի դիմաց, աջը Մառնի վրայ, և ձախը դէպի Պէց ուղղած: Գերման թնդանօթները գետին վրայէն կը գործէին, ֆրանսական սահմանազուխէն քանի մը մղոն ներսօք: Անոնց ուղեւորը՝ Մոյէն անդին գըտնուող դաշտին մէջ կ'իյնային: Բաղաքին վրայ կախուող բարձունքէն ծուխի ճերմակ գարգմանակներ հրագունդերու պայթուելուն յայտարար նշաններն էին: Հզօր պայթուցիկներու պայթիւնը ցետի հեղեղներ կը ժայթկեցնէր դէպի երկինք, կ'ամայացնէր ազարակները, և չոր խոտի դէզերը կը հրդեհէր:

Կռուողաշտի մէկ մասին մէջ ֆրանսական մարտկոցը չաքարի գտարան մը հրդեհեց: Տարաբախտ գերման պահակազօրքը թակարդուեցաւ, և արկածեալները պատուհաններէն դուրս խուժելու իրենց փորձին մէջ՝ ֆրանսական հետեւակազօրքի կողմէ գնդակահար ինկան: Կ'ըսուի թէ 2,000 մարդոցմէ հազիւ թէ 200ը խոյս տալով ազատեցան:

Նոյն ինքն Մօ քաղաքը աւերակոյտի մը վերածուած էր: Ռուսները օդին մէջ կը պայթէին, և օդանաւեր մթնոլորտին մէջ կը ճախրէին: Դէպի արեւելք տանող ճամբուն վրայ սփռուած էին Զո. ամիւներու, Թիւրքօներու, Ֆրանսացիներու, Գերմաններու և ձիերու դիակներ:

Սեպտ. 7ին, Երկուշաբթի, կռիւը Ուրզի վրայ դարձեալ սաստիպացաւ: Սուիւնը կարեւոր բաժին մը ունեցաւ այդ պայքարին մէջ, և անաւոր բաղխումի մը միջոցին Մակեդոնի (գերման) գունդին զրօշակները գրաւուեցան, և զրօշակակիր յիմնապետը իր կարգ մը մարդոց հետ, զրօշակը պաշտպանելու ջանքին մէջ, սպանուեցաւ:

Կռիւը տարածուեցաւ գիւղէ գիւղ և Զու. ամիւներն ու Թիւրքօները սուին գործածելու իրենց յագուրդը գտան: Բովանդակ երկրամասը լի էր հրկիղուող գիւղերով, ազարակներով և խոտի դէզերով: Ամէն կողմ կը տեսնուէին գերման դիակներ, որոնք կարգ մը վայրերու մէջ շեղջակոյտեր ձեւացուցեր էին: Սակայն թշնամիին գնդացիները, իրենց մահացու կրակովը, ազդեցիկ փոխատուութիւն մը ըրին Ֆրանսացիներուն: Ֆրանսական կորուստները խիստ ծանր



ՄԱՌՆԻ ՀՍ.ԿԱՏՍ.ՄԱՐՏԸ

Մառնի մէջ գերման զինուորները կը խեղդուին

ըլլայ կը թուին, մահաւորաբար Պրէժիի և Փանչառի մէջ, ուր քանի մը ծանր կռիւներ տեղի ունեցան:

Երբ մութը կը կոխէր, կռիւի այդ հողամասերը կը լուսավառուէին հրդեհուող գիւղերով: Այս ժամերուն՝ այրող տուներու լոյսովը Գերմանները կը հաւաքէին իրենց մեռեալները, զանոնք փայտակոյտերու վրայ կը դիզէին մեծ թիւով, փարսափնով կը թաթաւէին, յարդով կը ծածկէին և ապա դիակները կ'այրէին:

Սեպտ. 8ին, անգլիական ձախը քանի մը մարտկոցներով Մոյի մօտ Ֆրանսացիներուն օգնութեան հասաւ: Այդ դիրքը փութով աննկարագրելի տեսարան մը պարզեց յօշոտուած մարմիններու, ջախջախուած թնդանօթներու, ճզմուած և աքմատախիլ եղած ծառերու:

Սեպտ. 9ին, Մոյի մօտերը, ֆրանսական

մարտկոց մը թշնամին կը ումախոծէր գետէն անդին, որուն նկարագրականը սապէս կ'ընէ «Թայմզ».— Կո՛ւմ, կո՛ւմ, կո՛ւմ, կո՛ւմ, կը գոռան ֆրանսական թնդանօթները, և ապա, քանի մը վայրկեան վերջ, չորս սնկածեւ ծուխի հատուածներ հեռակայ անտառներու վերեւ կը բարձրանան, և դանդաղօրէն կը լսես պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ, անոնց հեռաւոր պայթիւնը: Այժմ գերման թնդանօթաձիգին կտրգն է: Գա՛նք, գա՛նք, գա՛նք կ'որոտան անոր թընդանօթները. հսկայ պղծեայ անօթի մը տըրուած տիտանական հարուածներու ազդեցութիւնը կը գործեն անոնք:»

«... Գերման թնդանօթները կը պաշտպանէին իրենց նահանջող աջը, ֆրանսական հրետանին կը պատասխանէր, և ֆրանսական հետեւակազօրքը կը յառաջանար՝ բռնադատե-

լու թշնամին որ շարունակէ իր նահանջը:»

«Թուրքիոյ երկաթուղիի կամուրջը խորտակուած էր և շուրին մէջ կը տեսնուէր ինքնաշարժ կառքի մը ջախջախուած աւերակոյտը: Երեք Գերմանացիներ կային անոր մէջ, կ'ըսէ Ֆրանսացի պահակը, երկու գինուոր և սպայ մը, անոնք չէին գիտեր թէ կամուրջը օդը հանուած էր. երէկ իրիկուն մեծ արագութեամբ այս ճամբան բռնած կու գային, դէպի Մօ երթալու համար, մինչև որ յանկարծ հոս գահավիժեցան»:

Բրիտանական հաղորդակցութիւնները ձախ կողէն կ'անցնէին մինչև Բարիզ: Լանժի մէջ Մառնի երկու կամուրջներն ալ Անգլիացիներու կողմէ քանդուած էին: Մօտակայ տուներու պատուհանները պայթումէն կտորտեր էին, փողոցները ջարդուփշուր եղած ապակիներով լեցուն էին, հեռաձայնի և հեռագրի թելեր քարշ կու գային շուրերու եզերքները և շրջակայ բոլոր նաւակները ընկղմեր էին:

Բրիտանացիները իրենց բանակատեղիներէն շարժեցան, Սեպտ. 8ին, և կարճ ժամանակէ վերջ հասան այն ճամբաները, որոնք Փոնքառէի, Թուրանի և Ռօզնիի հիւսիս-արեւելքը կ'երկարին, անցնելով Քրէսիի անտառներէն: Փսիսուք մը անցած էր զինուորներու շարքերու մէջէն թէ՛ վերջապէս յարձակողականը սկսելու էին թշնամիին դէմ:

Կէսօրէն վերջ թշնամիին ձգած հետքերը սկսան լքազմապատկուիլ ամենուրեք: Եզիպ տացորենի ընդարձակ հողամասեր մօխրակոյտներու վերածուած էին: Ծանրաչխատ գիւղացիութեան խոնարհ, պարզուկ տունները քանդուած և հրկիզուած էին: Ամէն ինչ կողոպտուած էր: Կտորտած պատկերներու շրջանակներ, մարմարեայ արձանիկներ, խեցանօթներ, սղոց խաղալիքներ, կահ կարասիք և ամէն կարգի ապրանքներ և շարժուն գոյքեր թափթրվուած էին տուններէն ներս ու դուրս: Գիւղին եկեղեցին այրուած էր, և գուրգուրացող ձեռքերու կողմէ սիրելիներու գերեզմաններուն վրայ գետեղուած ծաղիկներն ու խաչերը կոխկուտուած էին և գերեզմանաքարերը ջախջախուած:

Անտառներէն անդին կը տարածուէր բաց դաշտ մը, ուր ատաղձեայ գօտի մը ցոյց կու տար թշնամիին դիրքը: Անտառները զինեալ մարդոցմով կը վխտային: Անտառներէն անդին կը գտնուէին թշնամիին թնդանօթները: Յանկարծ հեռուէն թնդանօթի մը բոմբիւնը

լսուեցաւ, և ուումը մը անաւոր որոտումով մը մեր գիծերուն ետեւը պայթեցաւ: Թշնամի հրետանին ամբողջութիւնը ներդաշնակօրէն գործի ձեռնարկեց, և բրիտանական թնդանօթները ընդունեցին մարտահրաւէրը: Ականջը կ'անդգնար թնդանօթներու գոռումներէն, թըռչող ուումներու և պայթող հրագուններու խրատացիչ աղմուկներէն: Հեծելազօրքը յառաջացաւ, և փոշիի ամպեր ցոյց կու տային թէ անոնք անտառներէն դուրս կու գային և կը մտնէին հրացանի կրակի գծին մէջ:

Անմիջապէս թշնամին հակայարձակումի սկսաւ, և բրիտանացի հետեւակազօրքը սկսաւ կրակ ընել: Քանի մը վայրկեան բաւական եղաւ թշնամին ետ մղելու: Երկու ժամուայ կը ուրէ մը վերջ՝ հեծելազօրքը թշնամիին դիրքերուն մօտեցաւ: Գրոշի հրաման տրուեցաւ և բրիտանացիք մէկ հարուածով ոսոխը իր դիրքերէն տեղահան ըրին: Խրամները մեռած և մեռող մարդոցով լի էին: Շրջակայ հողերը ծածկուած էին վիրաւոր ձիերով և ջախջախուած թնդանօթներով:

Սեպտ. 7ին, Բրիտանացիները շարունակեցին իրենց յառաջացումը, իրենց երկու կողերէն ձրանսացիներու հետ շփման մէջ ըլլալով: Բուլօմիէի հիւսիսը տարածուող ճամբաներուն վրայ կը տեսնուէին նահանջող Գերմաններու երկայն շարքեր: Բրիտանական առաջագնաց բազուկը կէսօրէ առաջ ժամը 5ին գիւղը հասաւ: Ասկէ ճակատամարտը փոխադրուեցաւ Լա Ֆէռթէ Կօչէ և Ս. Կօնի ճախճախուտները:

Այս կռիւններուն մասին գերման սպայ մը իր մէկ նամակին մէջ սապէս կ'ըսէ. «Մենք պարտաւորուած էինք նահանջել, քանի որ Բրիտանացիք չուրջափակ շարժում մը կ'ընէին, ինչպէս մեր օգնակողները տեղեկագրեր էին: Վերջին երկու ժամերու տեւողութեանը, մենք շարունակաբար թշնամի հրետանիի կրակին ենթարկուած էինք, որովհետեւ մեր հրետանին կամ ամբողջութեամբ գործունէութենէ դադարած և կամ նահանջած էր: Թշնամիին օգնակողները մեր վերել թռչելով՝ երկու շրջանակ գծեցին, որ կը նշանակէ. «Հոս հետեւակազօրք կայ» և ապա դժոխքը վար թափուեցաւ: Թըռչնամիին հրետանին գետինը իր կրակովը կը հնձէր: Մէկ վայրկեանի մէջ 40 ուումը համրեցի: Շրափնէլը աստիճան առ աստիճան մեզի մօտեցաւ և վերջապէս մեր շարքերուն հասաւ: Արագութեամբ մախաղը ստամոքսիս կապեցի, որպէսզի ինքզինքս լաւագոյն կերպով պաշտ-

պանեմ: Ամէն կողմէ վիրաւորներու ճիւղ կը լսուէր, և տանջուողներու հծծիւնը լացուց զիս: Փոշին, ծուխը և վառողին հոտը մեզ կը խեղդէին:»

«Հնչող հրամանի մը վրայ՝ կորաքամակ ճամբայ ելանք: Ուղղակի թշնամիին գիծը անցնելու էինք: Մեր զինուորները անխնայօրէն կը հնձուէին: Փառք Աստուծոյ որ փախչելու կարողութիւն ունէի և փախայ: Կը խորհէի թէ սիրտս պիտի պայթէր, և ինքզինքս գետինը պիտի նետէի, քալելու անկարող, սակայն քու և Պօլիի պատկերները զիս գօտեպնդեցին և ճամբաս շարունակեցի:»

«Վերջապէս մեր մարտկոցները հասանք: Երեք թնդանօթներ ջախջախուեր էին և թըռչողանօթակիր կառքերը այրեր: Քանի մը վայրկեան կանգ առինք, շունչ առնելու համար: Ամբողջ այդ միջոցին ուումներու սուլումը և պայթիւնը շարունակուեցաւ: Զարմանալի է որ այս բոլորին մէջ մարդս չի յիմարանար:

Սեպտ. 8ին, երբ Բրիտանացիք կը յառաջանային՝ երկնակամարը լի էր օդանաւերով և մեքենաներու աղմուկներով: Լաֆէռթէ Կօչէի հարաւակողմը կը կանգնի դղեակ մը, ուրկէ թշնամին քշուած էր: Անխնայօրէն ան կողոպտուեր էր: Ծաչասրահի սեղանին վրայ դիզուած էր կերուած ճաշի մը թափթփուքը. Տախտակամար շիշերով ցրցքնուած էր: Բոլոր գըզրոցները, դարակները, պահարանները, հանդերձարանները բռնութեամբ բացուած՝ և անոնց պարունակութիւնները դուրս թափթփուած էին: Մահակալներ, հեռաձայնի գործիքներ, ձայնագրեր, գրի մեքենաներ ջարդուփշուր եղեր էին:

Կռիւը հոս սկսաւ Բրիտանացիներու, Ֆրանսական Ե. բանակին և Գերմաններու միջև, արշալոյսին, և առաւ խիստ արիւնազանգ երեւոյթ: Բրիտանական հրետանին գործողութեան մէջ մտաւ ժամը 6ին, կէսօրէ առաջ: Գերման թնդանօթները, Լա Ֆէռթէ Կօչէի մէջ, հաստատուեր էին Կուան Մօռէնէ անդին գըռնուող բարձունքներուն վրայ: Ծակատամարտի գիծը կը տարածուէր ուղղակի դէպի Սէզան և Վիթրի-ը-Պրանսուա: Իրենց բոլոր դիրքերուն վրայ Գերմանները գործողութեան մէջ մտցուցեր էին ծանր թնդանօթներ, որոնց կրակը խիստ բուռն ու ծանր էր: սակայն, բարեբախ-

տաբար, ոչ այնքան ճիշտ: Դաշնակիցներու թնդանօթները, աւելի թեթեւ, լաւագոյն որակով, և յաջողակութեամբ դեկավարուած, պաշտպանեցին, հրաշալի ազդուութեամբ, իրենց հետեւակազօրքին յառաջացումը: Ամբողջ այդ կէսօրին, կատաղի պայքար մը տեղի կ'ունենար բրիտանական աջին, ձախին և Ֆրանսական Ե. բանակին կեղբոնին վրայ, սակայն գիշերուան դէմ գերման դիմադրութիւնը տկարանալ սկսաւ: Անոնց հետեւակազօրքը Կուան Մօռէնէն և Սէզանի բարձրաւանդակէն անդին քշուեցաւ: Ծակատամարտը, սակայն նոյնպէս, երբեք չդադրեցաւ:

Լա Ֆէռթէ Կօչէի արեւմուտքը՝ կռիւը շարունակուեցաւ դէպի Բուլօմիէ և Ռէպէ: Հոս բրիտանական հեծելազօրքը եռանդով յառաջ մղեց իր քայլերը: Ամէն տեղ Բրիտանացիները տեսան որ թշուառներուն թշուառներն իսկ իրենց դրամէն և կերակուրէն կողոպտուեր էին, և իրենց ոռծիկին կէսը զրկեալներուն բաժնեցին:

Սեպտ. 9ին, չորեքշաբթի, թշնամին Մառնէն անդին քշուեցաւ: Շատեր խեղդուեցան գետին մէջ, այն աստիճան որ Մառն գերման դիակներով լեցուեցաւ: Գետէն անդին գըռնուող բարձունքներուն վրայ գերման հրետանի մտաւ գործունէութեան մէջ, և ժամանակին գետէն անցնող գերման փոքրիկ ուժերու հետ ունեցանք կուրծք կուրծքի կռիւներ: Երեքշաբթի գիշերը Բրիտանացիք տիրացան Լա Ֆէռթէ-Սու-Ժուառի, Շառլիի և Շաթթօ Թիէ-ռիի:

Շաթթօ Թիէռիէն ճիշտ անդին, քաղաքը թեւածող բարձունքներու վրայ, Գերմանները ձգեր էին բաւականաչափ վերջապահ գունդեր, զինուած քանի մը մեծ թնդանօթներով: Բրիտանացիները մօտենալուն պէս՝ այս ծանր գէնքերը գործել սկսան: Բաղաքին տուններէն շատեր ումբակոծումէն հիմնայատակ եղան: Սուասօն տանող ճամբուն վրայի տուններուն ճակատները լայնօրէն ափօսուած էին թըռչող ուումներուն հարուածներէն: Ծամբան եզերող բարձրաբերձ ծառեր տերեւազերծուած, գազաթնահատ և կամ ոստահատ եղած էին: Շրջակայ սիրուն հողամասերը հրկիզուած և անխացած էին, հոս ու հոն Գերմանները առանձին և կամ խումբերով կը յանձնուէին:

Գ Լ ՈՒ Խ Ի Գ.

ԱՆՎԷՐՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Պատկանութեան ամբողջութեան ու ծրագիրը.— Կանխի անձնատուութիւնը.— Պեղծ բանակը Անվերսի վրայ կը բաշտուի.— Խոյանք դեպի դուրս.— Գերման անազարկին մեծումը.— Մալիցի ռումբակոծումը.— Անվերսի բերդերը.— Արսախին բերդերու անկումը.— Կացուքիւնը քաղաքին մէջ.— Գերման յայտարարութիւնը.— Կառավարութիւնը կը պատրաստուի մեկնել.— Բրիտանական օգնութեան ուժերը.— Բրիտանական արշաւանքին պատճառները.— Ծովային յետազոտութեան գործը.— Գերմանները գետք կ'անցնին.— Կառավարութիւնը եւ պատերազմութիւնը կը մեկնին.— Ընդհանուր ելք.— Պեղծ բանակին փախուստը.— Գաղափին ռումբակոծումը, Բնակչութեան փախուստը.— Ահաւոր գաղթը.— Գանիական ասպնջականութիւնը.— Հրդեհ եւ աւերում Անվերսի մէջ.— Անձնատուութիւնը.— Ծովահեծներու վախճանը.— Գերմանիոյ դատարկ յաղթանակը եւ զինուորական յուսախաբութիւնը.— Պեղծ հերոսութիւնը:

Անվերս սահմանուած էր ըլլալու Պելճիգայի մեծագոյն ամրութիւնը, խարխիւր ցամաքային բանակին եւ պաշտպանութիւնը պելճիգաւորութեան: Բնութիւնը հիանալիօրէն օժտած էր զայն այս դերին համար: Մէկ կողմէն հեշտութեամբ ծովը կ'ըլլէր գետային հաղորդակցութեան գիծով մը, իսկ միւս կողմերէն կը շրջապատուէր, նպաստաւոր հեռաւորութենէ մը, երեք գետերէ — Շէլտ, Ռուբէլ եւ Նէթ: Բերդերուն ներքին կամ հին օղակը ծրագրուած էր մեծ մասամբ շինուած էր 1869էն առաջ: Նոր կամ արտաքին բերդերու առաջին օղակը (Ռուբէլմոնտ, Վաէլհէմ, Լիէռ, Շուլթըն, եւ Պէռանարէխթ) 1879ին Պրիւսիոյն կողմէ յատակազոծուած էին: Իսկ վերջագիծ բերդերն ու ամրոցիկները 1913ին նոյնմեքերին լրացեր էին: Ներքին բերդերը հիանալիօրէն ծրագրուած էին դիմադրելու թշնամիին, որ զինուած էր իր դարուն — կէս դար առաջ — զէնքերովը: Եթէ Անվերս պատշաճօրէն պաշտպանուէր՝ կարելի էր զայն անդրդուելի պահել ուղղակի այն օրերուն հետեւակազօրքի եւ դաշտային թնդանօթներու յարձակման դէմ: Նորագոյն արտաքին բերդերը, գետերու գծին հետ, կատարեալ պաշտպանութեան մը միջոցները պիտի հայթայթէին ունէ հրետանիի դէմ, որոնց գործածութիւնը ծանօթ էր մինչև մեծ պատերազմին սկզբնաւորութիւնը: Զինուորական իշխանութիւնները արդարացի էին խորհելու թէ Անվերս գործնականապէս անբաղաւոր զօրութեամբ օժտուած դիրք մը ունէր: Սակայն գերման կամ աւստրիական մեծ հրասանդները իրենց

հեռահաս եւ հաւաք քանդիչ հանգամանքովը կացութեան մէջ նոր տարր մը մտցուցին: Ասոնց դէմ կարելի չէր պաշտպանել քաղաքը հակառակ Ռուբէլ եւ Նէթ գետերուն ընձեռած բնական պաշտպանութեանը: Այս գետերուն Անվերսէն ունեցած հեռաւորութիւնը մօտաւորապէս վեց մղոն է: Չճնոց թնդանօթները 7½ մղոն հասողութիւն մը ունին, արտակարգ պարագաներու տակ երկու մղոն եւս կրնան աւելցնել իրենց սովորական հասողութեան վրայ: Ուրեմն թշնամին իր թնդանօթները գետին հեռագոյն եզերքին մերձեցնելուն պէս՝ քաղաքը իր գլխութեանը կ'ենթարկուէր, անանկ որ իր եւ Անվերսի գրաւման միջև կը մնային արտաքին բերդերու թնդանօթները, որոնք ոչինչ պիտի կրնային ընել ծանր թնդանօթներու դէմ: Ահաւասիկ այս էր Անվերսի իրական կացութիւնը, իբրև պաշտպանողական դիրք, երբ 1914 Սեպտեմբերին յայտնի եղաւ որ Գերմանները մտադրութիւն ունէին անոր դէմ լուրջ յարձակողական մը ընելու: Այդ յարձակողականին պատմականը ընելէ առաջ՝ հարեւանցի ակնարկ մը նետենք այն դէպքերուն շուրջը, որոնք տեղի կ'ունենային Պելճիգայի մէջ, Լիէթի քաջ պաշտպանութենէն, Նամիւռի անկումէն եւ Պրիւքսէլի գերման գրաւումէն ասդին:

Մինչ գերման բանակին զանգուածը դէպի հարաւ կ'իջնէր՝ իյնալու Բարիզի վրայ, Պելճիգայ յիւներուն կը մնար իրենց երկրէն այն հողամասը, որ կը գտնուի ծովեզերքին եւ այն գծին մէջտեղ, զոր կը գոյացնէ Շէլտ գետը՝ Անվերսէն մինչև Կանտ, եւ անկէ ալ Լիւ գետի գծովը

մինչև Տէյնց, ապա մինչև Ռուլէ, Իրու, Փօփէռինկ եւ Ֆրանսական սահմանագլուխը: Այս գրծին հարաւն ու արեւելքը կտոր մը վիճելի հող կար, զոր Գերմանները ունէ մնայուն ուժով, գրաւելու փորձ չըրին, եւ որ շարունակեց ըլլալ թատերաւոյրը անհաստատ կռիւներու, Օգոստոսի վերջերն ու ամբողջ Սեպտեմբերին: Պեղծ ուժերը, այս շրջանին մէջ, սեւէ կէտի վրայ, շատ աննշան էին: Բանակը, իբր ամբողջութիւն մը, Անվերսի ամրացեալ գօտիին մէջ քաշուած ըլլալով՝ այս երկայն ճակատին պաշտպանութիւնը, նոյն իսկ հաղորդակցութեան կարեւոր գիծերը, Կանտի եւ Օսթանտի, Պրուկզի, Ցիպրուկի, եւ ուրիշ կէտերու մէջտեղ, ինչպէս նաև քաղաքներու պաշտպանութիւնը, մեծ մասամբ, թողուած էր քաղաքային պահակներու եւ ոստիկան զինուորներու: Այս արթուն եւ քաջ խումբերը, յաճախ անվարժ, բնաւ չթերացան թշնամիին անվեհերութեամբ կուրծք տալու, իրենց հայրենասիրական պարտականութեան մէջ: Այժմ, Գերմաններու գլխաւոր նպատակն էր իրենց բոլոր զօրազունները կեդրոնացնել ճակատամարտի գլխաւոր կէտին վրայ, ուր անակնկալ դժուարութիւններ ծագեր էին: Անոնք մեծապէս կը յուսային թէ իրենց «հաւաքակցուցիչ» մեթոտը բաւականաչափ սմբեցուցեր էր Պելճիգայիները, որոնք չպիտի համարձակէին զիրենք գրգռել նորանոր «վրէժիւնդութեան», միջամուխ ըլլալով իրենց դէպի հարաւ կատարելիք շարժումներուն. ուստի յարմար դատեցին որ Պելճիգայիներուն ձգեն Պելճիգայի այդ անընաբարելի մասը:

Նոյն ատեն սուսերամարտական եւ յառաջապահական ընդհարումներ տեղի ունեցան ամբողջ գծին վրայ: Անգամ մը հարիւրի չափ գերման հետեւակազօրքի եւ հեծելազօրքի խառն ուժ մը Օսթանտի մօտեցաւ, ուր բաւականաչափ կորուստով ետ մղուեցաւ, պելճի ոստիկան զինուորներու կողմէ: Սեպտ. 25ին, օգտնաւ մը, Օսթանտի վրայ ուժը նետեց, նիւթական վնասէ զատ ուրիշ ոչ մէկ անձի կորուստ տեղի ունեցաւ: Մանր մունր ընդհարումներ կը կատարուէին զանազան կէտերու վրայ: Գերմանները 1,200 Ուլահներ զրկած էին, խումբերու բաժնուած, դէպի ծովեզերքը, հասկնալու համար թէլ Ֆրանսական կամ բրիտանական զօրազուններ կը հանուէին Ցիպրուկ եւ կամ Օսթանտ: Արժանահաւատ լուր բերողները երկաթ-

եայ խաչով պիտի գնահատուէին: Յայտնի է որ ոչ ոք չհանցաւ այդ պատուանշանը:

Սեպտ. 26ին, Կանտի դէմ եղած ցոյցը ալ աւելի լուրջ էր, այն ատեն երբ զօրավար Յօն Պօէն, հարաւի բանակին օգնութեան ղրկուած մեծ ուժի մը գլուխը անցած՝ երեւցաւ Ուրտէկէմի մէջ. Կոտէն 12 մղոն հեռու, դէպի հարաւ արեւելք, ուրկէ 5,000 հետեւակազօրքի առաջապահական ուժ մը ղրկեց դէպի քաղաքը, զինուած գնդաձիւներով, զայն գրաւելու հաւանական դիտարութեամբ՝ եթէ քաղաքը անպաշտպան գտնուէր: Այս ուժը, սակայն եւ այնպէս, տեսաւ որ Պելճիգայիները Շէլտ գետին, եւ Մէլի վրայ յանգած երկաթուղիին միջև զօրաւոր դիրքերու վրայ պեղուած խրամներու մէջ զետեղուել էին: Հոս տաք կռիւ մը տեղի սենցաւ: Պելճիգայիներու կորուստը, շնորհիւ իրենց դիրքին գերազանցութեանը, շատ չնչին էր, հազիւ երկօտասանեակ մը մեռեալ եւ քսանեակ մըն ալ վիրաւոր: Գերմաններու կորուստը աւելի ծանր էր: Անոնք իրենց ընկալեալ սովորութեան համաձայն, մտած գիւղերնին կրակի կուտային, եւ մութը կոխելուն պէս՝ կը քաշուէին իրենց գլխաւոր բանակը:

Յաջորդ օրը զօրավար Յօն Պօէն Կանտի քաղաքապետին սպանալից կոչում մը ըրաւ որպէսզի յանձնէր քաղաքը. հակառակ պարագային զայն պիտի ուժարկօժէր: Կանտի քանդուած ոճի մը պիտի ըլլար, որ պիտի ցնցէր աշխարհը աւելի մեծ թափով մը՝ քան ինչ որ ըրած որ Լուվէնի եւ կամ Ռէնսի Կաթողիկէին քանդումը: Գերմանները անտարակուսելիօրէն պատրաստ էին յաւերժացնելու այս ոճիրը: Այս մեծ դժբախտութիւնը իր ժողովուրդին խնայելու համար՝ քաղաքապետը յաջորդ առտու Ուրտէկէմ գնաց գերման զօրավարին հետ տեսնուելու համար: Համաձայնութիւն գոյացաւ, որով մէկ կողմէ Գերմանները կը խոստանային քաղաքը չուժարկօժել եւ հոն զինեալ ուժ չմտցնել, իսկ միւս կողմէ Պելճիգայիներն ալ կը խոստանային իրենց բանակը քաղաքէն հեռացնել եւ քաղաքային պահակազօրքը զինաթափ ընել: Ասկէ զատ, Պելճիգայիները գերման զօրազուններուն պիտի հայթայթէին որոշ քանակութեամբ հացահատիկ, կենդանեաց ճարակ, քարիւղ եւ սիկար:

Քաղաքապետը քաղաքային պաշտօնեայ մը ըլլալով՝ պելճի զինուորական իշխանութիւնը, ի վերջոյ մերժեցին ճանշնալ համաձայնութեան պարտադրութիւնը: Սակայն, բուն ստորագրող

կողմերը բաւականաչափ մը յարգեցին իրենց պայմանները, որով քաղաքը փրկուեցաւ գէթ մասնակի կործանումէ :

Երբ պիտ բանակը Անվէրսի վրայ քաշուեցաւ, կ'ըսուի թէ Պերճիգայի թագաւորը յայտարարած է թէ բանակը այլևս գործելու չէ իրրեւ պատերազմիկ բանակ մը, մեծածաւալ կռիւներու մէջ : Առաջին կռիւներու մէջ անոր կորուստը ահաւոր եղած էր, եւ Պերճիգայի առաջին եւ ամենահին ընտանիքներէն խլուած զօհերը, թէ զինուորներէն եւ թէ սպաներէն, Նորին Վեհափառութեան սիրտը խորապէս յուզեր էին : Ան որոշեց արգիլել անոնց կրկնութիւնը : Երբ յայտնի եղաւ որ զօրավար Թօն Պօէհն մեծ ուժերով հարաւէն կը յառաջանար՝ անմիջապէս վճռուեցաւ Անվէրսէն դուրս խոյանալ :

Թէրմօնտէն եւ Լիէնէն յառաջանալով՝ պիտ ձախը վերադարձեց Ալօսդը եւ իր ձամբան շարունակեց պէպի Աէրչօթ, և անկէ ալ անդին : Աջէն վերադարձեց Մալինը եւ թափանցեց Նօսէկէմ եւ Քօրթանպէրկ, Լուվէնի եւ Պրիւքսէլի մէջտեղ : Այդ շարթուան մէջ տեղի ունեցած կռիւները մեծագոյններն էին, որ երբեք պատահած ըլլային Պերճիգայի մէջ : Պիտ կորուստները ծանր էին : Եարթուան վախճանին միայն Անվէրս իր մէջ ունէր 8,000 վիրաւոր, և բազմաթիւ ուրիշ վիրաւորներ տարուած էին Կանտ Պրիւկզ, եւ ուրիշ տեղեր : Սակայն գերման կորուստները աւելի շատ էին : Քանի մը օր անանկ թուեցաւ թէ Գերմանները պարտաւորուած էին եւ նպատակ ունէին Պրիւքսելը պարպել : Զօրավար Թօն Պօէհնի ուժերէն մեծ մասը, որ Օտանարտի միւս կողմը հասեր էր, աճապարանքով մը ետ դարձաւ այն ձամբաներէն, ուրկէ անցած էր վանելու այն վտանգը, որ կը սպառնար Պերճիգայի գերման դիրքերուն : Հաւանականաբար Անվէրսի պիտ բանակին այս յանդուգն արարքն էր որ մղեց Քայզերը վճռելու անմիջական յարձակողական մը :

Այս արկածախնդրական ձեռնարկին սկսելէ առաջ Գերման կայսրը փորձեց համոզել Պերճիգայի թագաւորը որպէսզի չէզոքութիւն պահէր : Կայսրը, կ'երեւի թէ, լտակաւին ճանչցած չէր պիտ նկարագրին յատկանշական կողմը : Անվէրսի մէջ թագաւորին հետ ուղղակի բանակցութիւնները սկսան : Միջնորդը Պրիւքսէլի մէջ բնակող Պիտ մըն էր, քաղաքային կեանքին մէջ ծանօթ անձնաւորութիւն մը : Զօրավար Թօն Տէր Կօլցէն խնդրուեցաւ որ Գերմանիոյ առա-

ջարկները իր կառավարութեան հաղորդէ : Այդ առաջարկով կ'ըսուէր թէ Գերմանները պատրաստ են Անվէրսը չնեղել, պայմանաւ որ պիտ բանակը խելօք մնար, եւ պիտ հողը գրաւելու իր ձեռնարկին դէմ ուէ արգելք չյարուցուէր և կամ Ֆրանսայի մէջ ճակատամարտի գծին հետ ըլլալիք հաղորդակցութիւնները չխանգարուէին :

Այդ պարոնը առաջելութիւնը ընդունեց, միեւնոյն ատեն անկեղծութեամբ յայտարարելով թէ ինչորին լուծուած անյոյս էր : Ո՛չ թագաւորը, և ո՛չ ալ իր նախարարները վայրկեան մը իսկ այդ ամօթալի առաջարկը նկատողութեան առին : Դրկուած պատասխանը հակիրճ, վայելուէ և անսայթաք թու մը ունէր :

Գիտուար է հասկնալ այն ռազմավարութիւնը, որ վճռեց Անվէրսի վրայ ըլլալիք խոյանքը, առանց նախապէս զայն մեկուսացումի ենթարկած ըլլալու, գոնէ այնչափով որ ծովու կողմէ Օսթանտի և Յիպրուկի հետ անոր ունեցած հաղորդակցութեան գիծերը խղուէին : Որչափ ատեն որ այս վայրերը տանող ձամբաներու և երկաթուղիներու գիծերը մնային անվթար՝ օգնութիւն ընդունելու, և, ի պահանջել հարկին, նահանջելու ձամբան բաց պիտի մնար : Գերմաններու այս կարեւոր թերացումը, ինչ պատճառով ալ որ եղած ըլլայ, Դաշնակիցներու գործին մեծապէս նպաստեց :

Անվէրսի յարձակողականին հետ միահաղոյն լուրջ փորձ մըն ալ Թէրմօնտի դէմ եղաւ, ուր Սեպտ. 26ին և 27ին բուռն կռիւներ տեղի ունեցան : 26ին տեղի ունեցած ճակատամարտը ծանօթ է Օտէկէմի ճակատամարտ անունով — գիւղ մը, Թէրմօնտէն 2-3 մղոն դէպի հարաւարեւմուտք : 700 է բազկացած պիտ ուժ մը, առանց ուէ թնդանօթ ունենալու, Օտէկէմի մէջ յարձակումի ենթարկուեցաւ գերման շատ աւելի գերազանց ուժի մը կողմէ, որ գիւղը ունեցողն, մասնաւորաբար եկեղեցին, ըստ իրեն բարի սովորութեան, և յաջողեցաւ Պիտերը գիւղէն դուրս հանել, անոնց ուժին մէկ երրորդը կորուստի մատնելէ վերջ : Պիտերը ծայրայեղ յամառութեամբ կռուեցան և մեծ ուժի առջեւ քայլ առ քայլ տեղի տուին, մինչեւ որ իրենց օգնութիւն հասաւ, որ ատեն հակադարձակումով թշնամին նետեցին այն ձամբուն վրայ, որ դէպի Ալօսդ կը տանի : Այս գործողութեանց մէջ Գերմանները ծանր կորուստ ունեցան և 117 գերի տուին :

27ին տեղի ունեցած Լէպէքի (գիւղ մը

Թէրմօնտի հարաւարեւելքը) ճակատամարտին մէջ Գերմանները միեւնոյն ճակատագրին ենթարկուեցան :

Միաժամանակ զանազան կէտերու վրայ գերման փոքրիկ ուժերով յարձակումներ տեղի ունեցան, որոնց բուն նպատակն էր պիտ բանակին ուշադրութիւնը վրիպեցնել այն պատրաստութենէն, որ փութոյ պնդութեամբ յառաջ կը մղուէր Անվէրսի վրայ յարձակելու համար : Դաշնակիցները գիտէին թէ ինչ կ'անցնէր կը դառնար, և պիտ բանակը ամէն կարելի միջոց ձեռք առաւ պատրաստ գտնուելու ամէն հաւանականութեան առջեւ :

Ռուփէլ-Շէլտի հետ միացման կէտէն — և Նէթ գետերը քաղաքին հարաւային և հարաւարեւելեան կողմը կը կազմեն կիսաշրջանակ մը, քաղաքին շրջապատէն 6 մղոնի հեռաւորութիւն մը կազմելով : Գետերու այս շրջանակէն դուրս կային ինը բերդեր — Պրնիէմ, Լիզէլ, Պրինտօնք, Վաէլիէմ, Լավր, Ս. Քաթէրին, Քօինկսհոյքթ : Այս բերդերուն վրայ էր որ Սեպտ. 28ին յարձակողականը սկսաւ :

Նախորդ օրը — Կիրակի Գերմանները մինչեւ Մալին յառաջացեր և անպաշտպան քաղաքը ունեցողներու ենթարկելու էին : Յատկանշական պարագայ մըն էր որ Գերմանները ունեցողներու համար այն ժամերը կ'ընտրէին, որ ատեն ժողովուրդը պաշտամունքի գացած կ'ըլլար, և իրենց ռումբերուն կէտ նպատակին կ'ընէին մայր եկեղեցիները :

Երկու շարթի, 28ին, գերման թնդանօթներ Մալինէն անդին յառաջացան և կարող եղան հասնիլ հեռագոյն հարաւի բերդերուն, որոնցմէ Վաէլիէմ, Վավր, Ս. Քաթէրին առաջին հարուածով ինկան :

Անվէրսի վրայ խոյացող գերման բանակին իսկական քանակը ծանօթ չէ : ՔՅայմզ»ի թղթակիցը, որ պաշարման միջոցին քաղաքին մէջն էր, այդ ուժին թիւը 125'000 կը ներկայացնէ : Քաղաքին անկումէն վերջ՝ մասնաւոր հակում մը կար այդ թիւը նուազ ցոյց տալու. մինչեւ 60'000 : Սակայն Պերլինի կէս պաշտօնական յայտարարութիւններու համաձայն, յաղթութիւնէն վերջ, Անվէրսի անկումով 200'000ի ուժ մը գերձ կ'ըլլար գործելու կռիւի զլխաւոր թատերավայրին վրայ, անանկ որ 125'000 թիւը չափազանցուած ուժ մը չէ : Սակայն իրողութիւնը սա է թէ վճռական ազդակը մարդոց քանակը չէր, այլ թնդանօթին չափը (calibre) : Անվէրսը պաշտպանող թնդանօթներէն

և ոչ մին կրնար իր հասողութեամբ մրցիլ գերման 28նոց ունիվերսալներուն (howitzer) հետ : Ներքին բերդերը, մասնաւորաբար, կ'ըսուի թէ չինուած էին 4 ինչէզնոց հին կաղապարով թնդանօթներով, որոնք սե վաւօդ կը գործածէին :

Սեպտ. 28 ին և յաջորդ օրը Վաէլիէմ եւ Վավր Ս. Քաթերին բերդերը ենթարկուեցան ահաւոր ունիվերսալի մը : Զարմանալի է որ առաջին օրերուն գերման կրակին պատճառած վնասները չնչին էին : Պիտ կրակը, կարգ մը պարագաներու տակ, խիստ ազդու էր : Սակայն ո՛չ քաջութիւն և ո՛չ ալ ճարտարութիւն կրնային ուշացնել գերագոյն զէնքերու անխուսափելի հետեւանքը :

29ին Վավր Ս. Քաթէրին բերդն էր որ, առաջին անգամը ըլլալով, լուծեան դատապարտուեցաւ : Զարաչար կերպով ունիվերսալներու կողմէ այն աստիճան սանդուած էր որ իր հողապինդ (concrete) և պողպատեայ գմբէթաձեւ ամրութիւնները հաւասարապէս ջարդու փշուր եղած էին, և իր թնդանօթներուն կէտը անգործածելի դարձած էր, երբ վրայ հասաւ ռազմամթերանոցին պայթումը : Պահակազօրքէն շատեր չնչանեղձ եղան, իսկ հրամանատարը կէս չնչանեղձ՝ աւերակներէն դուրս հանուեցաւ : Կորուստը դարձանելու համար նոր ուժեր բերուեցան, սակայն յայտնի եղաւ որ ազդուօրէն գործելու համար թնդանօթներ կը պակսէին. ուստի բերդը թշնամիին լքուեցաւ :

Գերման յարձակողականը այժմ կեդրոնացած էր Վաէլիէմ եւ Լիէն բերդերուն վրայ : Վաէլիէմի ետեւը կը գտնուէին Անվէրսի ջրարալի անիւները որոնք թշնամիին կողմէ քանդուեցան, և ջրամբարն ալ պայթեցուեցաւ : Քաղաքը զրկուեցաւ ջուրէ եւ խրամները ողողուեցան այն աստիճան որ ռազմամթերքի փոխադրութիւնը՝ մէկ դիրքէ միւսը՝ խիստ դժուարացաւ :

Արթէգեան ջրհորներու ջուրը անբաւական կուգար : Զուրը դոյլերով կը փոխադրուէր : Աղքատները մեծապէս տուժեցին : Հրդեհի եւ տարափոխիկ հիւանդութիւններու սարսափը կախուեցաւ բնակչութեան գլխուն վրայ :

Սեպտ. 30ի գիշերը Վաէլիէմի բերդը ծանրապէս վնասուեցաւ, սակայն շարունակեց իր հերոսական պաշտպանութիւնը : Երբ բերդապահ զինուորը պարտաւորուեցաւ լքանիլ զայն, իր ետեւը թողուց անձեւ զանգուած մը հողի, պողպատի և քարի : Միեւնոյն օրը ինկան Թօնինկսհոյքթ և Լիէն բերդերը :


Գերման օդանավեր յաճախ կը սաւառնէին քաղաքին վերև, որոնցմէ մին Հոկտ. Չին վար նետեց բազմաթիւ օրինակներ յայտարարութեան մը, զոր կը թարգմանենք ի ստորև.—

«Յայտարարութիւն
Պրիիքսէլ, 1 Հոկտ, 1914

Պելժ Զինուորնե՛ր,

Ձեր սիրեցեալ երկրին համար չէ որ Ձեր աշխուհի ու կեանքը կը զոհէք: Ընդհակառակը դուք կը ծառայէք լոկ Ռուսիոյ շահերուն— երկիր մը, որ հետամուտ է աւելցնելու իր արդէն ահաւոր ուժը, և, ամէն բանէ վեր, դուք կը ծառայէք Անգլիոյ շահերուն, որուն նենգամիտ ագահութիւնը պատճառ դարձաւ այս անագորոյն և անյուր պատերազմին: Սկիզբէն իսկ, ձեր թերթերը, ֆրանսական և անգլիական կաշառքով կուրցած, բնաւ չդադրեցան ձեզ խաբելէ և ձեզի ստելու պատերազմի ծագումին և անոր ընթացքին նկատմամբ, և այսօր այ միեւնոյն բանը կը շարունակեն: Աւասիկ ձեր բանակին օրակարգերէն մին, որ մեր ըսածները դարձեալ կը փաստէ: Ուշադրութիւն ըրէք իր պարունակութեանը:»

«Ձեզի կ'ըսուի թէ ձեր ընկերները, որոնք Գերմանիոյ մէջ գերի տարուած են, կը բռնադատուին Ռուսերուն դէմ քաղի, մեր զինուոր-



ԶՕՐԱՎԱՐ ՅՕՇ

Հրամանատար Ֆրանսական Թ. Բանակին (1914)

Այս արտաքին բերդերուն անկումովը՝ Անվերսի կացութիւնը յուսահատութեան մասնուեցաւ: Նէթ գետը, իբր պատուար, թշնամիին արագ յառաջացումը կը խափանէր: Պելժերը գետին միւս կողմը քաշեցին իրենց ուժերը, և կամուրջները օդը հանեցին: Թշնամին շատ ալ յառաջանալու պէտք չունէր, քանի որ իր ծանր և հեռահաս թնդանօթները կրնային հեշտութեամբ քաղաքը ումբակոծել աղբուօրէն:

Քաղաքին բնակչութիւնը տակաւին վերահաս եղած չէր կացութեան լրջութեանը: Թընդանօթաձուլութիւնը շատ հեռու սահմանի մը մէջ տեղի ունենալուն համար, որոտումի՝ ձայներ հագիւ հազ, լսելի կ'ըլլային գիշերուան լուսութեան մէջ: Տորեկները բազմութիւնը զխաւոր փողոցներու վրայ կը խուռէր, ուր հակասական զրոյցներ չըլնէին: Թերթերը կրակ ու բոց կտրած կը հրահրէին ժողովուրդին եռանդը. Ձուրի ճամբաներուն խանգարումը, օդանաւերու յաճախակի թռիչքը և զինուորական ինքնաշարժներու փութկոտ խոյանքը՝ ժողովուրդին կը մասնէին թշնամիին մերձաւորութիւնը:



ԶՕՐԱՎԱՐ ՅՈՒԱՆՇԷՆ Տ'ԷՓԵՐԷ

Հրամանատար Ֆրանսական Ե. Բանակին (1914)

Այս յայտարարութիւնը մէկ նմոյն է գերման տխմարամտութեան և անփափկամտութեան: Պելժ ժողովուրդը, մամուլը, բանակը հեզնեց այդ ծանծաղամտութիւնը: Անոր մէջ յիշուած միակ ճշմարիտ կէտը Անվերսի յուսահատական պարագան էր:

Հոկտ. Չին, Ուրբաթ կէսօրին վճռուեցաւ որ կառավարութիւնը Անվերսէն Օսթանա փոխադրուէր: Երկու շոգեմակոյկ պատրաստ կեցեր էին Ռէնի նաւամատոյցը: Ասոնցմէ մին շաբաթ առտու պիտի մեկնէր, իր հետը տանելով կառավարական պաշտօնէութիւնն ու օտար դեսպանական մարմինները, իսկ երկրորդը պիտի մեկնէր իրիկուան կողմը, իր մէջը ունենալով ֆրանսական և բրիտանական ընդհանուր հիւպատոսական մարմինները և իրենց գաղութի անդամները: Աօի'ա բնականաբար քաղաքը պարպելու և յանձնելու սկզբնաւորութիւն մըն էր:

Երբ մեկնելու ամէն պատրաստութիւն տեսնուած էր, յանկարծ ծրագրի փոփոխութիւն մը տեղի ունեցաւ, որուն համաձայն առաջին շոգեմակոյկը ճամբայ չելաւ, իսկ երկրորդը որոշ-



ԶՕՐԱՎԱՐ ՍԱՌԱՅ

Հրամանատար Ֆրանս. Գ. Բանակին (1914)

ներուն հետ կողք կողքի կեցած: Անշուշտ ձեր ողջմտութիւնը չի կրնար ասանկ բանի մը կարելիութեանը վրայ խորհիլ. պիտի գայ այն օրը երբ ձեր եղբայրները պիտի վերադառնան իրենց հայրենիքը, և պիտի պատմեն թէ մենք իրենց ո՛րքան բարեսրտութիւն ցոյց տուած ենք: Անոնց խօսքերը ձեզ պիտի ամչցենն՝ ձեր թերթերուն գրածներուն և ձեր սպանելուն խարեբայութիւններուն համար:»

«Պելժ զինուորնե՛ր, պէտք եղածէն շատ աւելի կուուեցաք ոռու իշխաններու, դրամատէրներու և նենգամիտ Ալպիոնի շահերուն համար: Ձեր կացութիւնը յուսահատական է: Գերմանիա, որ իր գոյութեան համար կը կռուի, երկու ոռու բանակներ ջախջախած է: Այսօր չկայ Ռուս մը, որ գերման հողի վրայ գտնուի: Ֆրանսայի մէջ մեր զօրագունդերը դիմադրութեան վերջին ձիգերը խորտակելու վրայ են:»

«Եթէ կը բաղձաք վերստին միանալ ձեր կիներուն և զաւակներուն, եթէ կ'ըղձաք դառնալ ձեր գործին, մէկ բառով, եթէ կը սիրէք խաղաղութիւն վայելել, դադրեցուցէ՛ք ձեր այս անօգուտ պայքարը, որ ձեր քայքայումը կը ստեղծէ: Այն ատեն դուք փութով պիտի վայելէք երջանիկ և կատարեալ խաղաղութեան մը օրհնութիւնները: Տօն Պէզլէր

Ընդհ. հրմ. պաշարման բանակին:»



ԶՕՐԱՎԱՐ ՏԵ ԼԱՆԿԼ

Հրամանատար Ֆրանս. Գ. Բանակին (1914)

եալ ժամուն մեկնեցաւ: Բրիտանական նոր օգնական ուժեր հասնելով՝ կառավարութիւնը քաջալերուեցաւ՝ և վճռեց քաղաքը պաշտպանել մինչև վերջին շունջը:

Հասարակ ժողովուրդը կամաց կամաց ըմբռնեց կացութեան լրջութիւնը: Անոնք որ միջոցներ ունէին, փախուստ տուին քաղաքէն: Իսկ զինուորները միշտ պահեցին իրենց լաւատեսութիւնը իրենց վերջնական յաղթանակին մասին:

Խիստ կարեւոր իրողութիւն մըն էր թէ՛ պելժ զինուորը, բրիտանացի, ֆրանսացի և ռուս զինուորին պէս, այն զօրաւոր համողումը ունէր թէ ինք անհատապէս բարձր էր քան իր թշնամին:

Հակառակ անոր որ գերման հրետանին ունէր քանդիչ հանգամանք մը և գերման զօրագունդերու զանգուածներ հերոսաբար մահուան գրկը կը նետուէին, բրիտանական, ֆրանսասական, պելժ և ռուս զինուորներ փորձով տեսան որ գերման զինուորը հրացանով և կամ տուֆնով չէր կրնար իրենց հետ մրցել:

Պելժ կառավարութիւնը օգնութեան համար Անգլիոյ դիմում ըրած էր, որուն վրայ ճամբայ հանուեր էին մէկ ծովային կիսաբաժին, և երկու նաւային կիսաբաժին, քանի մը ծանր թնդանօթներով և զօրավար Բարիչի հրամանատարութեամբ:

Բրիտանական զունդերու առաջին ջոկատը Հոկտ. 3ին հասաւ, որուն ձգած ազդեցութիւնը պելժ ժողովուրդին և զինուորին վրայ կազդուորիչ հանգամանք մ'ունեցաւ: Բրիտանական զինուորներու երեւումը հրճուանքի նոր թափ մը տուաւ: պելժ զինուորին քաջութիւնն ու տուկունութիւնը եռապատկուեցան:

Շուտով հասկցուեցաւ թէ բրիտանական ուժը հասած էր անանկ վայրկեանի մը, որ արդէն իրերը առեր էին իրենց անխուսափելի ընթացքը: Հասնող բովանդակ ուժը 8,000ի մը չափ էր, զինուած քանի մը թնդանօթներով: Եթէ այդ մարդոց հնգապատկը և թնդանօթներուն ալ տասնապատկը 15 օր առաջ հասած ըլլային՝ Անվէրս կրնար անսահման ժամանակի մը համար պահել իր դիրքը թշնամիին դէմ:

Արտաքին բերդերը լուծ ըլլալով՝ գերման թնդանօթները Նէթ գետին մօտերը բերուեցան, ուրկէ կրակէ հեղեղ մը տեղացուեցաւ գետին մօտերը գտնուող պելժ խրամներուն վրայ: Այս կրակին պաշտպանութեան տակ՝ Գերմանները փորձեցին գետը անցնիլ Վալէնէմէն, որով յուսահատական կռիւ մը տեղի ունեցաւ Հոկտ.

3ի ամբողջ գիշերը և Հոկտ. 4ի առաւօտը: Գետը անցնելու այդ փորձը ձախողեցաւ: Միայն մէկ անգամ, գիշեր ատեն թշնամին յաջողեցաւ գետին վրայ նաւակամուրջ մը գետեղել, և զօրագունդեր զանգուածներով անցնելու աճապարէցին, սակայն տակաւին զօրքը միւս կողմը չհասած՝ Պելժիգացիները թնդանօթի հարուածներով կամուրջը խորտակեցին: Գերմանները ծանր կորուստներու մատնու եցան:

Երեւութապէս յուսահատ՝ գիշերուան այդ տխուր փորձէն, Գերմանները ետ կեցան գետը Վալէնէմէն անցնելու, և իրենց ուշադրութիւնը դարձուցին դէպի արեւելք, այն կէտին վրայ, որ Տիւֆէլի և Լիէռի մէջտեղ կը գտնուի:

Հոկտ. 4ի ամբողջ գիշերը և 5ի ցօրեկն ու գիշերը ճակատամարտը կատարութեամբ մղուեցաւ Լիէռի շուրջը: Հոկտ. 5ին չրափնեղներու գործած աւերը խիստ մեծ եղաւ: Գետին մօտերը փորուած պելժ խրամները ռուսներու կրակէն պաշտպանուելու ոչ մէկ յարմարութիւն ունէին, որով բրիտանական և պելժ զինուորները ետ քաշուեցան և տեղաւորուեցան 100 եարտա ետևօք գիծերու մէջ, ուր կրակի ենթակայութիւնը նուազ վտանգաւոր էր: Այդ իրիկունը եւ գիշերը թշնամին կրկին եւ կրկին փորձեց գետը անցնիլ, սակայն ամէն անգամուն ալ թնդանօթի և հրացանի կրակով ետ մղուեցաւ: Հոկտ. 6ին հազիւ Գերմանները կարող եղան գետին աջ կողմը կռուան մը գտնել, ծայրայեղ ճիգերէ վերջ:

Բերդերու ներքին գիծը, բրիտանական նաւային թնդանօթներով զինուած, անկարող էր երկար ատեն դիմադրելու գերման հրետանին: Փշաւոր արգելքները, և ուրիշ խոչնդոտներ կրնային ժամանակի մը համար արգելել հետեւակազօրքի յառաջացումը: Եթէ ցվերջ դիմադրութիւն ըլլար՝ անխուսափելի վախճանը պիտի ուշանար ժամանակ մը ևս, սակայն այդ պարագային բազմաթիւ անձեր կեանքերնին վրայ պիտի տային, և հաւանականութիւն կար որ պաշտպանող ուժին ամբողջութիւնը և կամ մէկ կարեւոր մասը գերի իյնար և քաղաքը հիմնովին կործանէր: Ուստի որոշուեցաւ այնքան մը դիմադրութիւն ընել, որ նահանջելու սահմանուած ուժը կարենար իր կատարելիք շարժումները անխուժի գլուխ հանել:

Անմիջական կարգադրութիւններ եղան կառավարութեան և դաշնակից դեսպանական մարմիններու դէպի Օսթանտ մեկնումին համար: Փոխադրութեան համար առաջին վիժող ծրագը

րէն ապրին միշտ երկու շոգեմակոյկ շոգիի վրայ կը սպասէին: Հոկտ. 7ին այդ ճամբորդութիւնը տեղի ունեցաւ:

Հոկտ. 5ին երբ տակաւին Նէթի պայքարը գտած չէր իր վերջնական լուծումը, Անվէրսի Խորհրդաժողովը որդեգրեց ընտիր եւ եռանդալից ծրագիր մը, որով ընդհանուր հրամանատարին իրաւունք կը տրուէր վարելու պաշտպանութեան գործը, զուտ զինուորական հայեցակէտով, առանց նկատի առնելու ստացուած քի խնայելու պարագան, և միեւնոյն ատեն անոր խոստանալով քաղաքային բնակչութեան օժանդակութիւնը: Հասարակութիւնը դայս նկատեց իբր հաստատուն նշան կացութեան ծանրութեան: Հոկտ. 6էն ապրին, քաղաքին բնակչութիւնը սկսաւ հապճեպով մեկնիլ դէպի Կանտ և Հոլանտա:

Հոկտ. 6ի գիշերը, պելժ զօրագունդեր սկսան քաղաքէն քաշուիլ: Անվէրսի նաւակայքերու մէջ գտնուող 30 գերման նաւերու մեքենաները ռումբերով խորտակուեցան, անանկոր եթէ Գերմանները զանոնք վերստին ձեռք ձգէին՝ երկար ատեն չպիտի կրնային անոնցմէ օգտուիլ: 7ին ալ Շէլտ գետին արեւմտակողմը հաստատուած իւրի մթերանոցները կրակի տրուեցան: Փճացուեցան բոլոր այն իրեղէնները, որոնք կրնային թշնամիին օգտակար ըլլալ:

Թշնամին ուր որ յառաջանար հոն աւերակոյտեր կ'ըստեղծէր, սակայն, ճշմարտութիւնը խօսելու համար, գործուած բովանդակ աւերը միայն թշնամիին դործը չէր: Կ'ըսուի թէ Անվէրսի պաշտպանութեան համար՝ 15 կամ 20 մղոն շառաւիղով տարածութեան մը վրայ՝ պելժ կառավարութեան կողմէ 10,000 շէնքեր հարթուած են: Ժողովուրդին ցոյց տուած զոհողութեան ոգին պարզապէս հիանալի էր: Ոչ մէկ անձ այդ փուլուումներուն համար դիտողութիւն կամ բողոք ըրաւ: Ամէն ոք սիրով խմեց այն բաժակը որ իրեն կը հրամցուէր իր սիրելի հայրենիքին փրկութեանը համար:

Շրջականերու, արուարձաններու բնակչութիւնը այս կերպով անտուն և անպատասպար մնալով՝ Անվէրս խուժած էր. անանկ որ քաղաքին բնակչութիւնը 100,000 մը ևս աւելցեր էր:

Հոկտ. 7ի առտուն Անվէրսի փողոցները արտակարգ տեսարան մը կը պարզէին: Ամէն անձի յայտնի եղած էր որ քաղաքը թշնամիին գթութեանը ենթարկուած էր: Գաղաքը ռմբակոծելու յայտարարութիւն մը ղրկուած էր Գեր-

մաններու կողմէ, այն պարագային երբ մերժում ըլլար անձնատուութեան: Ամէն հետեւանք աչք առնելով՝ զօրավար Տրկիզ մերժած էր այս առաջարկը: Գերման հրամանատարը խնդրած էր նմանապէս քաղաքին քարտէսը, ուր նշանակուած ըլլային ճարտարապետական և զեղարուեստական գլխաւոր շէնքերը, հիւանդանոցները, որպէս զի խնայուէր անոնց: Ամերիկեան փոխհրապետուր պահանջուած քարտէսը յանձնեց, որուն օրինակները, կ'ըսուի թէ, իւրաքանչիւր հրետանիի պետ սպային ձեռքը տրուեցաւ: Այս բանակցութիւններէն վերջ՝ ընդհանուրին կարծիքը այն էր թէ մայր եկեղեցիին անմիջական շրջականները ամենավտանգաւոր գօտին կը կազմէին, քանի որ Գերմանները քաղաքներ գրաւելու իրենց ճիգերուն մէջ՝ մասնաւոր փութկոտութիւն ցոյց տուեր էին ամէն բանէ առաջ իրենց կրակին նշաւակ ընել մայր եկեղեցիները:

Մինչև Հոկտ. 6ին, թերթերը ջանացին հասարակութիւնը խրախուսել շրջութեան նկատմամբ, և այն յոյսը ներշնչել թէ փութով թշնամին Նէթ գետէն անդին պիտի նետուէր: Հոկտ. 7ին այլևս կարելի չէր կացութեան ծանրութիւնը տգիտանալ: Թերթերը սկսան ժողովուրդին յայտնել եղելութիւնը իր մերկութեան մէջ, միեւնոյն ատեն ըսել թէ ինչ դառնութիւն ալ իրենց վիճակած ըլլայ՝ պատերազմը հայրենիքին համար յաղթանակով պիտի վերջանայ: Կառավարութիւնը շոգեմակոյկներու մասնաւոր սպասարկութիւն մը հաստատեց, Օսթանտի համար:

Առաուն փողոցները բազմութեամբ լեցուն էին, որոնք կ'սճապարէին դէպի շոգեմակոյկները և կամ երկաթուղիի կայարանը: Կառք և բեռնակիր կարելի չէր գտնել: Փողոցներու մէջ կը տեսնուէին լաւ հագնուած և հարուստ այրեր ու կիներ, որոնք իրենց սնտուկները փողոցներու մէջ քաշկռտելով կը տանէին և կամ իրենց պայուսակները ուսերնուն վրայ կը կրէին: Կէս օրին գլխաւոր փողոցները զարմանալիօրէն դատարկ էին: Նամակատուններն ու բաղամթիւ պաշտօնատուները գոց էին: Գլխաւոր պանդոկներու մեծամասնութիւնը դադրած էր գործունէութենէ: Խանութներու, ճաշարաններու սրճարաններու մեծ մասը, մասնաւորապէս քաղաքին հարուստ մասին մէջ, գոցեր էին իրենց դռներն ու փեղկերը: Կենդանաբանական պարտէզի պահապանները զբաղած էին հրացաններով սպաննել բոլոր վտանգաւոր կենդանիները, որոնք կրնային փողոցները և տունները խուժել, եթէ ուճակոծուումով քանդուէին իրենց վանդակ-

ները: Մեծ գերեզմանափոսի մը մէջ կը պառկէին չորս առիւծներու անշունչ դիակները: Այսպէս ամենուրեք կը տեսնուէր չարաշուք դէպքերու մերձաւորութիւնը: Ամբողջ օրը պելժ զօրագունդեր կը տեսնուէին նաւամատոյցներու և շոգեմակոյկներու վրայ, որոնք դէպի արեւմուտք կ'ուղղուէին:

Զօրագունդերու այս ընկրկումը տեղի ունեցաւ ճարտար պաշտպանութեան մը տակ, մասնաւորապէս բրիտանացի և պելժ այն ուժերուն կողմէ, որոնք ամրացած էին յառաջացեալ խրամներու մէջ: Զօրավար Փօն Պէզլէրի Նեթ գետը անցնելէ գրեթէ 48 ժամ վերջն էր որ առաջին ուժերը պայթեցաւ Անվէրսի վրայ: Իւրաքանչիւր խուսափող ժամ մը իր հետ կը տանէր թշնամին թակարգելու յոյսը: Հոկտ. 7ի կէս գիշերին սկսաւ քաղաքին իրական ուժակոծուկը: Գերմանները իրենց ամենամանր թընդանօթները քաղաքին դէմը չհանեցին: Սկիզբէն մինչեւ վերջը գլխաւորաբար գործածուեցան շրափնեղներ, որոնք ընդհանրապէս տանիքներու վրայ կը պայթէին: Շէնքերու փլուզումը բնաւ համեմատական չէր կրակին սաստկութեանը հետ բաղդատմամբ: Յարձակող ուժին նպատակը շէնքեր քանդելէ աւելի ժողովուրդը ահաբեկել և անձի կորուստ պատճառել էր: Սկիզբէն իսկ կրակը, անխորաբար տարածուեցաւ ամբողջ քաղաքին վտայ: Ասիկա եղած էր Գերմաններու ծրագիրը, յորմէյետէ անոնք մօտեցեր էին քաղաքին: Արտաքին բերդերը կը ներկայացնէին որոշ և կայուն նշանառու կէտեր. գերման կրակը կը կեղերմանար անոնց վրայ՝ մինչեւ որ խոշոր ուժեղասանդեր զանոնք ջարդուփշուր ընէին: Սակայն անկէ ասդին պելժ թնդանօթները և խրամները ցրուած կը մնային ընդարձակ սահմանի մը վրայ, որով որոշ կէտի մը վրայ կրակի կեղերմանցումը կը դժուարանար: Կրակ կը տեղար ամենուրեք, առանց մասնաւոր ծրագրի. այս իսկ պատճառաւ վատնուած ուղամաթերքին հետ բաղդատմամբ անձի կորուստը, Պելժերու համար, չնչին էր:

Անվէրսի մէջ տաք վիճաբանութիւն մը տեղի կ'ունենար թէ՛ քաղաքին, որ մասն էր որ պատիւ կ'ունենար ընդունելու առաջին ուժերու հարուածները: Կէս երկոտասնեակ մը թաղեր միահողոյն կը պնդէին թէ այդ պատիւը իրենց տրուած էր:

Անվէրսի բնակչութիւնը քանի մը օրէ ի վեր պարտաւորուած էր կանուխ պառկիլ: Ցէն վերջ փողոցները մթութեան մէջ կը խորասուզ-

ուէին, որմէ վերջ արգիլուած էր ճաշարաններու և պանդոկներու մէջ ճաշել: Պատուհաններէն լոյս չպիտի տեսնուէր. հոկտ. 6ի իրիկունէն սկսեալ կանոնադրութիւնները աւելի խիստ եղան: Փողոցի լոյսերը չէին վառուեր, և ժամը 6էն վերջ հանրակառքերը կը դադրեցնէին իրենց երթևեկը: Դուրսէն նշմարուելիք ոչ մէկ լոյս արտօնուած էր վերջալոյսէն վերջ: Գիշերը վրայ հասնելուն պէս՝ Անվէրս անտառի մը սրբտին չափ մութ էր: Փողոցներու մէջ ոտքի և կամ կառքի ձայն չէր լսուեր, իսկ ներսը ժողովուրդը քաշուած էր ստորնայարկերը: Հոկտ. 7ի գիշերը քիչեր քնացան: Շատեր այդ գիշերուան վերջին ժամերուն, մինչ դուրսը բուժներ կը պայթէին, զբաղեցան համախմբելու տնական այն առարկաները, զորս կրնային հետերնին տանիլ: Արշալոյսին բնակչութիւնը նետուեցաւ քաղաքէն դուրս, անանկ թափով մը, որ պատմութեան մէջ պիտի մնայ իբրև խիստ սրտառուչ դէպք:

Քաղաքին բնակչութիւնը կը խուժէր դուրս անդադար: Հոկտ. 7ին, տակաւին 400,000էն 500,000 բնակչութիւն կար քաղաքին մէջ: Հոկտ. 8ի իրիկնամուտին միայն քանի մը հարիւր մնացեր էին: Գրեթէ ամէնքն ալ հետերնին կը կրէին ուտեստեղէնի կամ անկողնի և կամ տնական գոյքերու բեռեր: Երթալիք վայրերն էին Ֆլըշինկ, Փօքէսթօն, Թիլպլըրի, Օսթանտ, Միպրուկ, Լիլօ, Թէրնէօզն, Ռօթէրտամ: Փախստականներուն սեւեռուն նպատակը այն չէր որ անպատճառ այս կամ այն քաղաքը հասնէին, այլ՝ նետուէին ու է տեղ որ կրնար զիրենք հեռու և ապահով պահել Գերմաններէն:

Ողբալի տեսարան մը կը ներկայացնէր այն կարաւանը, որ կ'երթար դէպի հոյանտական սահմանագլուխը՝ անցնելով Վիլմէնստօնքի և Իքէրէնի ճամբէն: Քառօրդ միլիոն մը մարդանցաւ այդ ուղիէն:

«Թայմզ»ի թղթակիցը հետեւեալ կերպով կը նկարագրէ այդ ելքը.—


«Մարդկային քայսափոխով այս ճամբուն վրայէն կ'անցնէին ամէն կարգի կառքեր, տատաղձատար մեծ կառքեր՝ տնական գոյքերով ծանրաբեռնուած, տապաստակներով (մինտէր) և անկողիններով ծածկուած և 30ի չափ ամէն հասակէ և սեռէ անձերէ թխմուած՝ կը քաշուէին հոյանտական մէկ կամ երկու դանդաղաչարժ և հուժկու ձիերու կողմէ. կառքեր, որոնք ամենախոնարհ ծառայութեանց համար կը գործածուէին, անձնական կառքեր, ֆեպեր

(միաձի կառք մը), ինքնաչարժեր, չնաքարչ կառքեր, ձեռակառքեր, մղակառքեր, յոպնակներ, յածակառքեր և հեծանիւններ: 20 մղոնի երկայնութեամբ ճամբան կը վխտար կենդանիներով և մարդկային էակներով: Այս կառքերուն մէջտեղէն ու քովերէն կ'երթային հետիտան գացողները, որոնք բեռնաւորուած էին ծրարներով և ամէն կարգի բեռներով — հազուստեղէն և ամէն կարգի տնական առարկաներ, լաւապարկերով լեցուն հացի խոշոր նկանակներ և ճամբու համար այլ և այլ պաշար: տղոց խաղալիքներ, և բոլոր այն գոյքերը, որոնք թանկագին կը սեպուէին իրենց տիրոջը: Մարդիկ և կանայք, երիտասարդ և ծեր, առողջ և հիւանդ, կաղացողներ, փոքրիկ տղոց ձեռքէն բռնող քոյրեր, անհամար կանայք իրենց մանուկները գրկած, և բազմաթիւ տղաք որ իրենցմէ քիչ մը փոքրիկներ չալկած կը քայէին, փափուկ աղջնակներ կը քամ անանկ բեռերու տակ, զոր հուժկու մարդ մը պիտի խորչէր մղոն մը կրելու, լաւ հագուած կանայք՝ մէկ ձեռքով տոպրակներ և միւսովը իրենց սիրական շունը բռնած, տարիքոտ այրեր իրենց անդացուպերուն վրայ կը քամ, կը քայէին տրիւրամամ:

«Ասոնց հետ կ'ընթանային արջատներ, սև ու ճերմակ հոյանտական կովեր, առանձին և կամ իրարու կապուած խուճերով, այծեր, անհամար շուներ, որոնք այս թո՛հ ու բոհին մէջ ճիգ կը թափէին չկորսնցնելու իրենց տէրերը: Կառքերու վրայ կային հաւեղէններու սակառներ, և կատուններու կողովներ: Մարդիկ և կանայք իրենց հետ կը տանէին թութակներու, դեղձանիկներու և ուրիշ թռչուններու վանդակները: Կարելի չէր չյուզուիլ տեսնելով այս ժողովուրդը, որ այնչափ ծանրաբեռնուած ըլլալով մէկտեղ՝ ճգնէր էր հետը տանելու իր ձեռնասուն անասնիկները և տղոց խաղալիքները:

Անվէրսէն մինչև Հոյանտական սահմանագլուխը գրեթէ 10 մղոն է: Մինչև հոս երկարող հանրակառքերու գծին վերջաւորութեան վրայ կը կենային քանի մը հարիւր հանրակառքեր, որոնք հազարաւոր փախստականներուն ծառայեցին իբրև ննջարան:

Իբր փոխադրութեան միջոց՝ հանրակառքերը հազիւ կարող եղան փոքր համեմատութեամբ փախստականներ փոխադրել, որոնց մեծագոյն զանգուածները անսպառելի ալիքներով ինկան այս ճամբաներուն վրայ, որոնք կը տա-



Ա.Ա.ՆՆԵՐ

Նաւուն և ականներուն դիրքը ցոյց տուող լուսանկար մը

նին դէպի Պիրկէն-Օփ-Չում և կամ Ռուչանտալ, ուրկէ երկարաձիգ կառաչարներ, մինչև վերջին կէտը մարդկային էակներով բեռնաւորուած, փոխադրեցին զանոնք Ռօթէրտամ, Ֆլըշինկ և ուրիշ տեղեր:»

Անշուշտ այս անաւոր պանդխտութիւնը ունեցաւ իր առանձին ողբերգութիւնները: Հոս էին հիւանդները, հոգ չէ թէ ինչ էր իրենց հիւանդութիւնը և կամ որչափ լուրջ էր իրենց կացութիւնը, կառքերու վրայ ինկած և կամ ափ յափոյ շինուած անթացու պերու վրայ կը թընած: Քանի մ'օրէ ի վեր, վիժող մայրերը, ճամբուն վրայ ծնող մանուկները և մեռնողները ամենքն ալ ողորմելի կացութեան մէջ էին: Բարեբախտաբար օղը գեղեցիկ էր, աշնան պայծառ արեւ մը կը փայլէր, ցորեկը ոչ այնչափ տաք և գիշերը զով էր և ճամբան ալ տափարակ դաշտէ մը կ'անցնէր:

Հոս կ'արժէ յիշել հոյանտական ժողովուրդին ծայրայեղ բարեսրտութիւնն ու ասպնջա-

կանութիւնը: Կ'ըսուի թէ Օգոստոս, Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամիսներուն մէջ 1,500,000 և աւելի փախստականներ Հոլանտա ապաստանեցան: Հոկտ. 7էն մինչև 10, կէս միլիոնի չափ փախստականներ սահմանագլուխը անցան: Անվէրսի անկման ատեն այս ուռճացող հոսանքին ամենամեծ ծանրութիւնը ինկաւ Պէրկէն-Օփ-Չում քաղաքին վրայ, որուն 15,000 բնակչութիւնը երեք օրուայ ընթացքին 300,000ը անցաւ: Ամէն ջանք թափուեցաւ զանոնք փութով Ռուզանտալ փոխադրել և անկէ ալ Հոլանտայի այլեւայլ վայրերուն մէջ ցրուել: Սակայն կարելի չէր զանոնք ցրուել այն համեմատութեամբ որ ներս կը խուժէին, անանկ որ շատ մը օրեր Պէրկէն աւանձինն 100,000է աւելի ժողովուրդ կերակրեց և խնամեց:

Փախստականները Անվէրսը թողելով՝ բոլորովին զերծ կը մնային գերման թնդանօթներու հասողութենէն: Շատ զարմանալի է որ ոչ մէկ ուժով ինկաւ փողոցներու մէջ խոնուած բազմութեան վրայ: Կէսօրուան դէմ, մինչ փախըստական թափօրը դէպի հոլանտական սահմանագլուխը կը յառաջանար՝ գերման օդանաւ մը, որ այս անցուդարձը կը հետազօտէր՝ Շէլտի արեւմտեան կողմը գտնուող բերդերէն ուժեղացուցաւ:

Հոկտ. 7ի կէս գիշերին սկսուած ուժեղ քամուր փոփոխական սաստկութեամբ շարունակուեցաւ ամբողջ 8ին: Մինչ Գերմանք աստիճանաբար մօտեցան քաղաքին շրջանակին, հարաւի և արեւելքի կողերուն վրայ հաստատուած բերդերը ուժգնօրէն պատասխանեցին յարձակումին: Այս բերդերէն ոմանք — մասնաւորապէս Բ. Գ. Գ. և Ե. — վատ կերպով ուժեղացուցան, սակայն իրենց մէջտեղը և առջեւը տեղաւորուած թնդանօթները շարունակեցին բուռն կերպով թշնամիին կրակին պատասխանել, մինչ երկու մղոն առաջօք գտնուած խրամներ տակաւին կը պահուէին Բրիտանացի և Պելթ զօրագունդերու կողմէ: Քաղաքը հասնելու համար հարկ էր անցնիլ այս խրամներէն և ճանկաւոր արգելքներէն: Գերմանները այս կարգի փորձ մը չըրին, այլ միայն գոհացան հեռուէն խրամները, բերդերը և քաղաքը ուժեղացուցանել:

Քաղաքը Հոկտ. 8ի կէս օրէն վերջ ուժեղացուցանելու արդիւնաւոր պիտի ըլլար, որովհետեւ Անվէրս այլեւս կենդանի քաղաքի մը երեւոյթը չունէր: Այնքան բանուկ և զուարթ փողոցները լուռ և ամայի էին: Չկային մարդ-

կային էակներ, որոնք մնասուէին և կամ ահաբեկէին թուրք ուժերէն, որոնք երբեմն շէնքի մը անկիւնը կը տաչէին, պատ մը հիմնայատակ կ'ընէին և կամ պարսպ հրապարակի և պարտէզի մը մէջ կ'իյնային: Անձնուէր բրժիշկներ և հիւանդապահներ իրենց հիւանդները ապահով տեղեր դնելու կը ճգնէին: Երկու-երեք պանդոկներ — քաղաքին ապահով դիրքերուն վրայ — նուազած պաշտօնէութեամբ կը շարունակէին բաց պահել իրենց դռները: Ասոնք և զինուորականները, քանի մը քաղաքային պաշտօնատարներ, կէս երկոտասանեակ մը բրիտանական թղթակիցներ, և կարգ մը երկբայող քաղաքացիներ, որոնք կը խորհէին թէ՛ Գերմաններու ձեռքը իյնալով՝ անոնցմէ վախնալու պատճառ մը չունէին, կը կազմէին Անվէրսի բովանդակ բնակչութիւնը: Կէս միլիոն բնակչութիւն ունեցող երէկուան Անվէրսը այսօր մեռեալներու քաղաքի մը վերածուած էր:

Իրիկուան աղջամուղջին՝ պելթ զինուորներու ջոկատ մը հրացանի հարուածներով կարգ մը տափանաւեր ընկղմեց ջրանցքին մէջ, այսպէսով խցելով ջուրի վերջին անցքը:

Կէս գիշերին քաղաքը բազմաթիւ տեղերէ կ'այրէր, ոմանք ուժեղութեամբ պայթու մին հետեւանքով, եւ ոմանք ալ Պելթերու կողմէ հրդեհուած, որպէս զի փճացուէր ամէն ինչ որ կրնար թշնամիին օգտակար ըլլալ: Այսպէսով գոյացուած դժոխային փուռին կ'ընկերանար թնդանօթներու գոռումը և ուժեղութեամբ ճարճատալից պայթիւնը: Երկինք, երկիր և ջուրեր բոսորագոյն կը փայլէին:

Գիշերը ժամը 10¹/₂ին, ուժեղացուցան ստացաւ անաւոր հանգամանք մը: Անընդհատ և խլացուցիչ գոռում-գոչումին մէջ, այլևս կարելի չէր իրարմէ զանազանել շրափնելի վզոցը, մեծ ուժեղութեամբ պայթիւնը և կամ նաւային մեծ թնդանօթներու ուժեղութեամբ գանգիւնը, ամենքն ալ իրարու մէջ ընդելուզուած էին իբրև անհղագոյ անընդհատ որոտում: Քառսն էր որ դարձեալ աշխարհը իջեր էր: Անվէրս իր վերջին ճգնաժամին մէջն էր: Անշուշտ ոչ մէկ քաղաք այսքան ահաւոր փորձութենէ մը անցած էր:

Հրետանիի մենամարտին պաշտպանութեան ներքեւ բրիտանական և պելթ հետեւակազօրքի մնացեալ մասին մեծագոյն մասը ետ բերուելով՝ Շէլտի վրայէն անցուցաւ: Առաւուն կանուխ բերդապահ զինուորը բերդերէն քաշուիլ սկսաւ: Բերդերէն ոմանք, որ տակաւին անպէտ դար-

ձուած չէին, օդը հանուեցան: Այն թնդանօթները, զոր չէին կրնար հետերնին տանիլ, անգործածելի դարձուեցան և ուղղամթերքը փճացուեցաւ, որուն մեծագոյն մասը Շէլտ գետը թափուեցաւ: Ուրբաթ առտու, ժամը 7ին, հոկտ. 9ին, պաշտպանող գունդերուն վերջին մասը անցաւ գետը, եւ այն նաւակամուրջը որ այնքան մեծ ծառայութիւն մատուցեր էր, խորտակուեցաւ: Ժամը 8ի եւ 9ի մէջտեղերը քաղաքապետը Գերմաններուն ընդառաջ գնաց, քաղաքին պաշտօնական յանձնուժը կատարելու: Կէս օրին Գերմանները քաղաք մասն Մալինի դռնէն:

Ռմբակոծումը Անվէրսի քիչ մնաս հասցուցեր էր: Ո՛չ Մայր եկեղեցին եւ ոչ ալ թանկագին եւ պատմական շէնքերէն ուէ մէկը մնասուած էր: Վնասուող ամենանշանաւոր շէնքը եղած էր արդարութեան պալատը: Քաղաքին ամէն կողմը խոչտանգումի հետքեր կը տեսնուէին: Աւելի անհատական տուները մնասուեր էին, մասնաւորապէս հարուստ դասակարգի թաղը:

Կը յիշուի թէ Անվէրսի վրայ խոչանալու պատրաստութիւններու հետ միահողոյն տեղի ունեցան լուրջ կռիւներ Թերմոնտի շուրջ, Օտէկէմի և Լէպէքի ճակատամարտներու մէջ, սեպտ. 26 և 27ին: Այդ երկու օրուան կռիւներու մէջ գործողութիւնները վերջացան ինըպատ Պելթերուն. սակայն ատով Գերմանները գետը անցնելու յոյսերնին չկտրեցին: Քաղաքին վրայ յարձակում գործուած ժամանակ շարունակաբար ճնշումի կ'ենթարկուէր Շէլտի բովանդակ գիծը: Թէրմոնտի Շունէրտի և Վէթէրէնի վրայ կատարուած յարձակումները բուռն կերպով ետ մղուեցան: Հաշիւ եղած էր որ առ նուազն 30,000 մարդ և բազմաթիւ թնդանօթներ գործածուեցան այս գործողութեանց մէջ:

Քանի մը օր, պելթ թեթեւ ուժեր յաջողեցան զսպել գերման յարձակողականին թափը: Հոկտ. 6ին և 7ին, սակայն և այնպէս, Գերմանները վերջապէս յաջողեցան երեք կէտերէ անցնիլ թէրմոնտ, Շունէրտ և Վէթէրն: Գետին հիւսիսային կողմը թշնամիին յառաջդիմութիւնը յայտնի էր որ լրջօրէն պիտի սպառնար Անվէրսի պաշտպան զօրագունդերու նահանջին, եթէ երեք առաջը չառնուէր:

Հոկտ. 6-7 կարգ մը զօրագունդեր քաղաքէն քաշուիլ սկսան, մասնաւորապէս հեծկազօրքը, հեծանիււոր գունդերը, գնդացիներն-

րով բեռնաւորուած զրահապատ կառքերը: Ասոնք կը կազմէին դիւրաշարժ և օգտակար ուժ մը: Փութով ցոյց սուին իրենց օգտակարութիւնը: Ասոնց վստահուած էր գերման յառաջացումը կասեցնելու պաշտօնը, մինչև որ դաշնակից օգնական ուժեր հասնէին: Այս պաշտօնը կատարեցին մեծ յաջողութեամբ, երկու օր անընդհատ բռնելով հիւսիսը տանող ճամբաները, ընդդէմ գերագանց ուժերու, որ ատեն բուռն կռիւներ տեղի ունեցան, մասնաւորապէս Ջէլի մէջ, և Օվըրբրի շուրջը: Այս ընդդիմութեան շնորհիւ էր որ Գերմանները հաղիւ Հոկտ. 9ին կարող եղան թափանցել Լօքէրէնի երկաթուղին գիծը: Մինչև այդ ատեն պելթ և բրիտանական բանակները արդէն անցեր էին դէպի արեւմուտք: Եթէ զօրավար Ֆօն Պէզլէր 24 ժամ առաջ կարենար զարնել երկաթուղին, հաւանական էր որ ո՛չ միայն Անվէրսի չոր պատեանը ձեռք պիտի աւցընէր, այլ նաև պիտի յաջողէր ամբողջ պելթ և բրիտանական բանակները կամ գերի վարել և կամ քշելով թխմել Հոլանտայի մէջ: Ան լքած էր ամենաէական կէտը մինչև այն րոպէին, որ արդէն շատ ուշ էր:

Պաշտպան բանակը իր նահանջին մէջ բոլորովին ալ զերծ չմնաց դժբախտութիւններէ: Բրիտանական նաւային երեք կիսաբաժնիներէն երկուքը ապահով Օսթանտ հասած էին, սակայն առաջին նաւային կիսաբաժնի մեծագոյն մասը Լօքէրէնի հիւսիսը գերման յարձակման վրայ՝ անջատուած էր իր բունէն, որուն 2000 սպաններն ու զինուորները ապաստաներ էին հոյանտական հողը, ուր չէզօքութեան օրէնքներուն համաձայն վար դրիւր էին իրենց զէնքերը: Կայսերական նաւային զօրաբաժնիէն 967 հոգի անյայտացած էին, որոնց 200ը յայտնի եղաւ որ գերի ինկեր էին: Մեռեալներուն թիւը 32, և վիրաւորներունը 189 էր: Ասոնք հաւանականաբար զոհը գացին այն սխալին, որով մոռցուեցաւ նահանջի լուր տալու այն կարգ մը զօրագունդերուն, որոնք ներքին բերդերուն և կամ մօտակայ խրամներուն մէջ կը կռուէին: Բրիտանական զօրագունդերէն դուրս, 20,000է բազկացեալ պելթ զօրագունդեր մտան հոլանտական սահմանէն ներս և հոն վար դրուեցան: Պելթ բանակը, իբր ամբողջութիւն, յաջողեցաւ խոյս տալ թշնամիէն, բան մը որ խոր յուսահատութիւն պատճառեց Գերմաններուն, որոնց ձեռք ձգած յաղթանակը չբերաւ իր հետ ալընկալուած պտուղը: Դաշնակիցները անցան Օս-



ԶՕՐԱՎԱՐ ԳԱՍԹԻՆՆՈ

Թանտէն անդին, ամրացնելու իրենց դիրքը Իզերի վրայ, հոն ուր պելժ բանակը հիացուց աշխարհը այն ոգիին և քաջութեան համար, զոր անգամ մը ևս ցոյց տուաւ ղիմակալելով թշնամիին:

Պելժ բանակին կողքին կը կանգնէր իր անվեհեր թագաւորը: Պատերազմի առաջին շաբաթներուն Ալպէն թագաւորը գերակշիռ ազդեցութիւն բանեցուց իր ժողովուրդին սրտին և հոգիին վրայ: Ան անձնական քաջութեան համար կրկին և կրկին ապացոյցներ տուաւ: Անվէրսի և ապա Իզերի պաշարումին ժամանակ



ԶՕՐԱՎԱՐ ՏՆՍԱՐԳՅԱՆ

յաճախ խրամներու մէջ թշնամիին կրակին տակը մնաց, ուր գացեր էր իր զինուորները խրախուսելու: Աւելի թանկագին էին իր ցոյց տուած զինուորական յատկութիւնները, հաստատամտութիւնը, յստակատեսութիւնը և նըկարագրի այն ուժեղութիւնը որ իր հանդէպ յարգանք և հիացում ստեղծեց բոլոր անոնց կողմէ, որոնք իր հետ չփուլմ ունեցան: Պելժի գալի համար մեծ փառք ու պարծանք էր ասանկ ժամանակի մը մէջ ունենալ այսքան բարձր ձիրքերով օժտուած թագաւոր մը:

ՎԵՐՁ ԻԳ. ԳԼՈՒԽԻ

ԳԼՈՒԽ ԻԳ.


ԷՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆԵՐԸ

Էնի անցքը.—Յառաջացումի գիծեր.—Բրիտանական զօրաբաժիններու դիրքը.—Ֆրանսական յառաջացումը.—Դաւանակիցներու ռազմագիտութիւնը.—Գերման հակասք.—Մօպիտի անկման ազդեցութիւնը.—Գերման կասաղի յարձակումներ.—Դժոխքը խրամներու մէջ.—Գերման նամակներ.—Էնի նակասամարսը եւ Մանչուրիայի դասերը.—Գերման օգնութեան ուժերու ազդեցութիւնը.—Կացութիւնը մինչեւ Սեպտ. 24.—Կեանքը բրիտանական գիծերու մէջ.—Ռմբակոծում.—Կեանքը խրամներու մէջ.—Երկրորդ գիծը.—Կացութիւնը Սեպտ. 25ին.—Գերման բարոյականը.—Սպայի մը օրագրութիւնը.—Գերմանները Մեօզը կ'անցնին.—Անոնց նպասակակէտը.—Վեռսոնի սպառնալիք.—Չօրավար ժօճոյի յամառութիւնը.—Ծանր կռիւներ ամբողջ գծին վրայ.—Գերմանները սպառած ես կ'իյնան.—Ռեհսի ռմբակոծումը.—Մեծ կորուստներ.—Դաւանակիցներու գիծը Սեպտ.ի վերջը.—Խրամներու մէջ.—Գերման հրետանին —Էնի անցքը անկարելի.—Բրիտանական բանակը ծածկաբար հիւսիս կը շարժի.—Գործողութեանց փառլամբ.—Ռազմագիտական եւ բարոյական հետեւանքներ.—Երեւուրպապա գերման յաջողութիւն եւ անոր որքան սուղի նստիլը.—Մառնի հակասամարտին հետեւանքներ.—Տեսնեան արշաւանքի ալիքը կը կասի վերջնականապէս:

Սեպտ. 11ին Դաւանակիցները մեծ թափով հալածեցին Մառնի հովիտէն նահանջող Գերմանները: Այդ օրը բրիտանական հեծելազօրքը էնի գիծը հասաւ, և տեսաւ որ թշնամին գետին հարաւի բարձունքները բռնած էր: Առաջին ձիաւոր զօրաբաժինը (Ա.Ֆ. և Գ. կիսաբաժինները) գիշերեց Քուվրէլի և Սիրսէօլի շրջակայքը գտնուող բարձունքներուն վրայ, Բ. ձիաւոր զօրաբաժինն ալ (Գ. և Ն. կիսաբաժինները) Սուասօնի հարաւակողմը:

Սեպտ. 12ին պաշտօնապէս յայտարարուեցաւ թէ գերման Գ. Գ. և Ն. բանակները Վիթթրի-ը-Ֆրանսուայի առջեւ էն խոյս տուեր էին, Սօլն ի վեր, և Առկօնի մէջ, և թէ Պել-

ժերը Անվէրսէն հուժկու խոյանք մը կատարեր էին Պրիւքսէլի արեւելեան կողմը, գերման հաղորդակցութիւններուն դէմ: Միեւնոյն ատեն, Ռուսերը կը պնդէին թէ իրենք, Կալիցիոյ մէջ, ի Ռավարուսքա, Օֆէնպուրկի աւստրիական բանակին մեծ պարտութիւն պատճառեր էին: Գերման Գ. և Ն. բանակներուն նահանջը մեծ կազդուրում եղած ըլլալու է Ֆրանսական ընդհանուր բանակատեղիին: Այս երկու բանակներն ալ գործադրելիք խիստ կարեւոր պաշտօններ ունէին, անոնց ունէ մէկուն յաջողութեան պարագային՝ Դաւանակիցները կրնային լուրջ վըտանգի ենթարկուիլ: Առաջինին պաշտօն տրուած էր խորտակելու ֆրանսական ճակատամարտի



Բրիտանական զինուորները Ֆրանսական ռազմաճակատը հասած

գիծը, Շալօնի պաշտին մէջ. իսկ երկրորդը պիտի խոցէր Վէրտոն-Թուլ բերդապատնէշը, Թուուայօնի վրայ: Ֆրանսական ճակատին խորտակումէն յառաջ գալիք արդիւնքը շատ պարզ էր: Արեւմտեան կէտը, իր դիրքերէն, դէպի հեռուները պիտի հալածուէր, մինչ արեւելեան կէտը, հաւանականաբար, քշուելով պիտի թխմուէր սահմանապահ բերդերուն մէջ, ուր պատեհ ժամանակին պիտի իյնար թշնամիին ձեռքը: Բերդապատնէշի խորտակումը այս կարգի հետեւանքներ պիտի չունենար, սակայն Վէրտոնի և Ֆրանսական Բ. և Գ. բանակներուն մասնակի ուժերուն պաշարուելուն առիթ պիտի հայթայթուէր, և Վէրտոնի անկումը Գերմաններուն պիտի հայթայթէր երկաթուղային հաղորդակցութեան ընտիր ճամբայ մը: Բարիդի արեւելքը տեղի ունեցած գերման առաջին բանակին ձախողանքը, և անոր պարտադրուած նահանջը, հարկադրեց որ գերման Բ. Գ. Դ. և Ե. բանակները կարգաւ ընկրկին, և կեդրոնբանակատեղին ժամանակի մը համար լքէ իր յղացած ծրագիրները, Ֆրանսական կեդրոնին և բերդերուն նկատմամբ:

Բրիտանական ձիաւոր առաջին զօրաբաժինի հետագօտիչ խումբերը երեւան հանցին թշնամի ուժեղ ջոկատներ — զինուած թնդանօթներով և զնդացիներով — որոնք կը բռնէին Պրէն քաղաքը, անոր կամուրջը և մօտակայ բարձունքները: Զօրավար Ալէնպի փութով գործի ձեռնարկեց թշնամին իր դիրքերէն տեղահան ընելու: Կէսօրին թշնամին հիւսիս քաշուած էր, հարիւրի չափ գերի բռնած էր Պրէնի շուրջ, և մեծ քանակութեամբ դաշտային թընթանօթ և ռազմամթերք գտնուած էր Վէլլ գետին մէջ: Բրիտանական ձախէն Ֆրանսական Զ. բանակը կը մօտենար էնի հարաւի բարձունքներուն, և աջէն Ֆրանսական Ե. բանակը Վէլլի գիծը հասած էր: Կէսօրէն վերջ և ամբողջ գիշերը յորդահոս անձրև տեղաց և խանգարեց փոխադրութեան գործը:

Կէս օրէ վերջ, բրիտանական Ա. զօրաբաժինը Վօքսսէրէ, Բ. Վօքսսթէն, և Գ. Պրենէլ հասէր էին առանց ռելէ ընդդիմութեան, ի բաց առեւայ վերը յիշուածները: Ե. զօրաբաժինը Միսսի մօտեցաւ, սակայն իր շարժումները դադարեցուց թշնամիին կրակին վրայ: Դ. զօրաբաժինը հասաւ Պիւզանսի շրջակաները ուր գտաւ Ֆրանսական Գ. բանակին աջը, որ կը ճգնէր տեղահան ընելու Մօն տը Բառիի վրայ — Սուասօնի հարաւը — հաստատուած գերման առա-

ջապահ գունդերը: Անմիջապէս իր թնդանօթները գործակցելով Ֆրանսացիներու հետ, թըշնամին վտարուեցաւ գետին միւս կողմը և կամուրջները քանդուեցան: Ժ. կիսաբաժինը բռնեց կատար մը, որ էնի հովիտին վրայ կը նայէր: Ասկէ կարելի էր տեսնել Գերմանները, որոնք կը քաշուէին Մօպէօթի ճամբէն, դէպի հիւսիս-արեւելք: Իրենց վերջին կարաւանը հազիւ թէ գետը հասեր էր՝ երբ Վէնիզէլ փոքրիկ քաղաքին կամուրջը անեղ պայթիւնով մը օդը ելաւ: Բրիտանական դաշտային հրետանին կարող եղաւ թշնամին ռմբակոծել, ամբողջ կէս օրին և իրիկունը, 2,700 եարտա հեռաւորութենէ, այնքան ճշտութեամբ որ թշնամիէն մաս մը պարտաւորուեցաւ իր խրամները պարպել: Գիշերը վրայ հասաւ յորդահոս անձրևներով:

Սուասօնէ քանի մը մղոն հեռու, դէպի արեւմուտք, Ֆրանսացիները ենթարկուեցան թշնամիին հետեւակազօրքի և հրետանիի կրակին: Բրիտանական Գ. զօրաբաժինի ծանր մարտկոցը, Սուասօնի արեւելքը, հարաւի եզերքին վրայ գտնուող բարձր դիրքերը գրաւելով՝ օժանդակեց Ֆրանսացիներու ձախին: Թըշնամիին ծայրայեղօրէն ուժեղ դիրքերուն հակառակ հարկ էր որ գետը անցուէր: Գետը անձրևներով ուռած էր, հարկ էր կամուրջներ շինել և նորոգել խորտակիչ կրակի մը ներքև:

Կիրակի, Սեպտ. 13ին, պաշտօնապէս յայտարարուեցաւ թէ Ֆրանսական գունդերը Մաունը անցեր էին, Էփէնիի և Վիթրի-ը-Ֆրանսուայի մէջտեղէն, և գրաւած էին Ռըվինյի, Պոպան-ը-Ռուա, Ս. Տիէ, Լիւնէվիլ, Ռօն լ'Էթափ, Պաքարա, Ռըմէսվիլ, Նօմէնի և Փօն-Թա-Մուսօն: Թշնամիին նահանջը այնքան գահավիժող եղած էր, որ ան լքած էր քարաէաներ, թերթեր, նոր ստացուած և նոր զրկուելիք նամակներու ծրարներ, պաշտօնական ու անհատական: Այս միջոցիս Ռուսերը Գերմանները պարտութեան մատնել էին Նիէմէնի մէջ:

Ֆրանսական և բրիտանական Գ. բանակներուն ձակաւի կացութիւնը տարտամ էր: «Այն հողի կտորը, կ'ըսէ Սըր Ճօն Ֆրէնչ, որ էնի հիւսիսը կ'իյնայ, խիստ յարմար թագրատոցներ ունի՝ և թշնամիին կողմէ այնքան ծարպիկութեամբ շահագործուած էր, որ կարելի չէր հասկնալ բնութիւնը այն ընդդիմութեան, որով մեր գետն անցքը պիտի արդիւնէր: Սակայն, ես զօրաւոր պատճառներ ունիմ եզրակացնելու թէ՛ առնուազն երեք զօրաբանակներէ բաղկաց-

եալ վերջապահներ, Սեպտ. 13ի առտուն, գետին անցքերը կը բռնէին: Այդ առտուն հրաման ըրի որ բրիտանական ուժերը յառաջանան»: Բրիտանական հրետանին թշնամի դիրքերուն և թնդանօթներուն վրայ կրակ բացաւ: Հովիտի երկու կողմերէն սուրացող հակառակորդ ուժերը անաւոր ճարձատիւնով կը պայթէին: Ճարտարագէտներ կ'աշխատէին կամրջանաւեր զետեղել գետին վրայ: Աշխատանքը հակայ էր, վտանգը մօտալուտ, սակայն և այնպէս կամուրջները հաստատակամօրէն կ'աճէին բրիտանական անաւոր կրակին պաշտպանութեանը տակ, և հետեւակազօրքը այդ կրակէ հովանիին ներքև կը յառաջանար անցնելու էնը, անգոսնելով շրափնէլի և բարձր պայթուցիկներու տեղատարափը, պող և խեղդող անձրևալից փոթորիկը:

Բրիտանական զօրաբաժիններու յառաջացման գիծն էր, գործնականապէս խօսելով, Թրուայօն՝ Ա. զօրաբաժինի, Պոէյ՝ Բ.ին, Էն՝ Գ.ին Սանսի՝ Ե.ին և Մարտիվալ՝ Դ.ին համար:

Այլին վրայ Ա. զօրաբաժինը և Ա. ձիաւոր զօրաբաժինը ուղղուած էին դէպի Պուրկի կամուրջը: Այս կամուրջին արեւելքը կամրջանակ մը կառուցուած էր, և Ա. զօրաբաժինին պատկանող հետեւակազօրքի խումբ մը մղուեցաւ անկէ անդին: Հեծելազօրքի կիսաբաժին մը անոնց հետեւեցաւ, և երկու գունդեր արդէն կամուրջը անցեր էին՝ երբ Գերմանները ամէն կողմէ կրակ բացին: Ուժեղ պայթուցիկներ կամուրջին քովերը երեք ռաք խորութեամբ փոսեր գոյացուցին, և կողերէն տեղացող շրափնէներ անոր շուրջը կը պոթկային: Զիաւորները, սակայն և այնպէս յաջողեցան քաղաքը հասնիլ, և ջանացին դէպի բարձունքները դիրք գրաւել, սակայն տեսան որ այդ բանը ընել անկարելի էր: Քաղաքը հիմա ենթարկուած էր ուժեղ ուժերու կոծումին, տուները խաւաքարդներու պէս կ'իյնային, և քաղաքին մէկ մասը կրակ կ'առնէր: Հետեւակազօրքին լուր զրկուեցաւ թէ օգնութիւն կ'ուզեն, եկած ժխտական պատասխանին վրայ, հեծելազօրքը, երեք ժամ հիւսիսային եզերքին վրայ անցնելէ վերջ, կամուրջէն նահանջելու երեւութապէս անձնասպանութեան գործը ստանձնեց: Այս միջոցիս կամուրջը արդէն թշնամիի կրակէն ալուելով տարուած էր: Զարմանալի է պատմել թէ անոնք հասան հարաւային եզերքը միայն քանի մը վիրաւոր ունենալով: Ամբողջ այս շարժումը — յառաջխաղացում և նահանջ —

ի յայտ բերաւ մեր զինուորին ընտիր քաջութիւնն ու ինքնազոհութեան: Ա. զօրաբաժինի գլխաւոր ուժը հանդիպեցաւ չնչին ընդդիմութեան: Իրիկնաւատին Ա. կիսաբաժինը Փէսին գրաւած էր, Բ. ը Մուլէնի մէջ բանակած էր, և Գ. ժէնի մէջ կը գտնուէր: Բ. զօրաբաժինը Ա. զօրաբաժինի ձախին վրայ յառաջացաւ: Իր առաջընթաց զօրագունդերը գետը հասան, կէս օրէ առաջ, ժամը 9ին:

Ե. կիսաբաժինը տեսաւ էր անցքի համար միակ ճամբայ մը կար — Բօն-Արսիի քայքայուած կամուրջի կտրտած և մասամբ ջուրի մէջ ընկող մած գօտիները: Զինուորները մէկ շարքով անցան անոնց վրայէն, ուժերի հարուածներուն տակ: Նաւակամուրջի մը շինութիւնը անմիջապէս ձեռք առնուեցաւ, և կէսօրէ վերջ, ժամը 5ին, աստիտեցաւ: Դ. կիսաբաժինը փորձեց անցնիլ ջրանցքն ու գետը, Սիսի և Շալօնի քովէն, սակայն զօրաւոր ընդդիմութեան հանդիպեցաւ, և հազիւ գիշերամուտին իր գունդերէն մին յաջողեցաւ նաւակներով գետը անցնիլ և տեղաւորուիլ հեռակայ եզերքին վրայ: Այսպէս Զ. կիսաբաժինը, և պահակ կիսաբաժինին երեք գունդերը, պարտաւորուեցան հարաւի եզերքին վրայ բանակիլ:

Գ. զօրաբաժինը յառաջացաւ Բ.ի ձախին վրայ: Ը. կիսաբաժինը Վէլլիէն գետը անցաւ, գիշերամուտէն առաջ հաստատուեցաւ հիւսիսի եզերքին վրայ, սակայն Թ. և Է. կիսաբաժինները պիտի տեղաւորուէին ասդիի եզերքը:

Ե. զօրաբաժինը Գ.ի ձախին վրայ յառաջացաւ: Միակ կամուրջը որ մինչև հիմա կը մնար անեղծ, բրիտանական բովանդակ ճակատին վրայ, Քօնտէի կամուրջն էր, որ այնքան քանդիչ կրակի մը ենթարկուեցաւ, որ անկէ անցնիլը անկարելի էր: Կիսաբաժինը, ուրեմն, Միսիի դիմացէն անցնիլ փորձեց: Հարաւային բարձունքները հոս գետէն քիչ մը ետեւօք կը կանգնէին, որոնց ձգած բաց միջոցը ենթարկուեցաւ խիտ և ճշգրիտ կրակի մը, Միսիի վերը գտնուող զառիվայրերէն, ուստի Ժ.Գ. կիսաբաժինը պարտաւորուեցաւ իր յառաջխաղացումը ցոյցի մը փոխակերպել, մինչ Ժ.Գ. կիսաբաժինը Միսիի և Վէնէդէլի միջեւ գտնուած նուազ վտանգաւոր հողէն կը շարժէր: Լաստափայտերով յաջողեցաւ հասնիլ հանդիպակաց կողմը, և ապահովել ինքզինքը վերի դառիթափերուն վրայ, ունենալով իր ձախը Ս. Մարկրիթի մէջ: Ժ.Ե. կիսաբաժինը հետեւեցաւ Ժ.Գ.ին, և ապա օժանդակեց անոր ետ մղելու

ծանր հակայարձակում մը, որ ուղղուած էր Դ. Զօրաբաժինին վրայ:

Դ. Զօրաբաժինը Ե. ին ձախին վրայ յառաջացաւ: ԺԱ. Կիսաբաժինը գիշերը հաստատուեցաւ Պիւսի-լը-Ղօնկի վերեւ գտնուող բարձունքներուն վրայ, և տեսաւ որ թշնամի զօրաւոր ուժ մը, Վոէնիի լեռնադաշտին վրայ, խրամներու մէջ տեղաւորուած էր: Վէնիզէլի կամուրջը կատարելապէս քանդուած չէր, անանկ որ առտուն մասամբ մը նորոգուեցաւ և դաշտային թնդանօթներ միւս եզերքը անցուեցան: Այդ միջոցին ջանք կ'ըլլուէր գետին վրայ նաւակամուրջ մը ձգել, Սուասօնի մօտ: ԺԲ. Կիսաբաժինը Վէնիզէլէն գետը անցաւ և համախըմբուեցաւ Պիւսիի մէջ, ժամը մէկին ատենները: Ժամ մը վերջ յառաջացաւ ԺԴ. և ԺԱ. Կիսաբաժիններու մէջտեղէն, Շիվրի արեւմտաքը գտնուող բարձունքները ապահովելու դիտաւորութեամբ, և իբր խարիսխ Վրէնէի վերը գտնուող լեռնադաշտին դէմ կատարուելիք յառաջացումի գործողութեանց: Ժամը 5¹/₂ին, Շիվր գետակը անցան, սակայն հետանիի և գնդաձիբի ծանր կրակ մը, հիւսիսէն, թոյլ չտուաւ որ այլեւս յառաջանան: Այս միջոցիս Վէնիզէլի կամուրջին շինութիւնը աւարտած էր, Ժ. Կիսաբաժինը քալեց դէպի Պիւսի: Սակայն Գ. Զօրաբանակին՝ Սուասօնի արեւելքը՝ գետին վրայ նաւակամուրջ ձգելու փորձը լքուած էր, թշնամիին պաշարման ուժը կասեցուցաւ ծանր կրկին պատճառաւ: Գիշերամուտէն առաջ ամբողջ Դ. Զօրաբաժինը գետէն անցած էր, բացառութեամբ մէկ դաշտային հրետանիի և ծանր մարտկոցի մը, իսկ ԺԹ. Կիսաբաժինը Պիլի մնաց, Սուասօնի հարաւ-արեւելքը:

Գիշերամուտին թշնամին քաշուեցաւ իր գլխաւոր դիրքը, ետեւ ձգելով ուժով ջոկատներ, իշխող կէտերու վրայ:


Գիշերուան պահուն շահուած դիրքերը, ԺԲ. Կիսաբաժինի Դ. Զօրաբաժինի կողմէ, Շիվր գետակին արեւելքը, ԺԴ. Կիսաբաժինին փոխանձուեցան:

Գետը անցնելու միջոցին գերման օդանաւ մը փորձեց գննել բրիտանական գիծերը, հրացանի հասողութենէ վեր բարձրութեան մը վրայ, սակայն բրիտանական օդանաւորը մը վեր բարձրանալով ջանաց իր հակառակորդին վերեւ թռչիլ: Գերմանը աշխատեցաւ անոր մօտենալ վերէն, և ապա անմիջապէս յաջորդեցին մեքենաներու խելացնոր շրջանակային շարժումները, երկու կողմը հսկայ թռչուններու նման,

և երկու հակառակորդ կողմերու արձակած զէնքի հարուածները: Յանկարծ Գերմանը դանդաղեցաւ: Թէեւ վիրաւորուած՝ սակայն պահեց բաւականաչափ կորով, մինչեւ որ դանդաղութեամբ յաջողեցաւ իր մեքենան գետինը իջեցնել, սակայն արդէն մտած էր բրիտանական գիծերու մէջ:

Կուրի ամենատաք միջոցին էնի հովիտը դժոխային երեւոյթ մը առած էր, դիւային ձայներ կ'արձագանգէին ամենուրեք: Բարձունքէ բարձունք հակառակորդ հրետանին անդադրում կրակ կը տեղացնէր հովիտին մէկ կողմէն միւսը: Ընտրուած կէտերու վրայ ճարտարագէտներ աշխատեցան կամուրջներ կառուցանել: Խաքի հագուստով զինուորներու յաջորդական ավիքները յառաջանալով մէկ գիրքէ միւսը, ճգնեցան հասնիլ իրենց նպատակին: Օդանաւերուն բզզիւնը և շրափնէլներու պայթիւնը օդը կը թնդացնէին: Հրացանին ճարձատիւնը, գնդացիներու անընդհատ ըէ՛թ, ըէ՛թ, ըէ՛թ, ումբերու պայթիւնը և հրետանին գոռումը ահեղ ձայնով աննկարագրելի խառնանուագ (medley) մը կը յօրինէին: Մօտակայ մարզագետները կրակէ դժոխքի մը վերածուեցան, ուր կը թուէր թէ ապրիլը անկարելի կը դառնար: Սակայն, անդրդուելի ճարտարագէտները թիզ առ թիզ կառուցին իրենց կամուրջները և կտրիճ հետեւակազօրքը ոտք առ ոտք յառաջացաւ դէպի գետը, անցաւ զայն և հասաւ հեռակայ զարիվերներ: Ամբողջ գիշերը թշնամիին լուսարձակները հարաւային եզերքները խուզարկութեան ենթարկեցին, երևան հանելու դէպի գետը շարժող զօրագունդերու շարժումները: Հազիւ հազ առտուն էնի հովիտին մէջ բաղդատական հանդարտութիւն մը տիրեց:

Փրանսական Զ. բանակը, բրիտանականին ձախին վրայ կեցած, յարձակումի ձեռնարկեց: Գետին երկու կողմերը գետեղուած հակառակորդ հրետանիին միջև կատաղի կռիւ մը տեղի ունեցաւ: Գերման հրետանին մեծապէս կը գերազանցէր իր հակառակորդները, թիւով, հասողութեամբ և ուժով, և իր ծանր ուժը կասեցնելու ումբերը կը թնդային հարաւի բարձունքներն ի վեր, սակայն իրենց գոյացուցած ահաւոր աղմուկին և պայթիւններուն հետ բաղդատելով ակնկալուած վնասը չհասցուցին: Փրանսացիները բռնէր էին Սուասօնի վերի կէտը, սակայն վարի կէտը կրակներու մէջ էր: Սեւ ծուխի զանգուածներ, խորտակուող պա-



Ջրահալատ կառուար մը և բրիտանական նաւային թնդանօթներ գործի վրայ

տերու փոշիներուն հետ խառնուած՝ վեր բարձրանալով կը միանային շրափնէլներու պայթիւնէն գոյացած ծուխի գարգամանակներու: Թնդանօթներու գոռումը տունները կը ցնցէր, սակայն բնակչութեան մէկ մասը կը մնար հանդարտ, թէև ապշահար: Այս ծուխերէն, բոցերէն և աւերակներէն վեր կը բարձրանային կործանած մայր եկեղեցիին զոյգ աշտարակները, որոնք հովանաւորած էին հին քաղաքը եօթը երկայն դարերէ ի վեր: Փրանսական պահեստներու մեծ մարմին մը կազմուած էր Սուասօնի հարաւը: Հեռու, դէպի ձախը Ը. Զօրաբանակը գետը անցաւ, հարաւի բարձունքներէն, կատաղի թնդանօթաձգութեան մը պաշտպանութեանը տակ, և հեռակայ արեւմուտքէն խուսք մը Զուսիւնը կը ճգնէին ետ դարձնելու գերման աջը:

Երկուշաբթի, Սեպտ. 14ին, յայտարարուեցաւ թէ՛ գերման կեղերնը գիրք բռնած էր Ռէնսի ետեւը, թէ՛ Գերմանները ետ ինկեր էին Արկօնի մէջ, Պէլ-Նուի և Թրիքուրի անտառէն անդին, և թէ՛ Նանսիի և Վօսերու ուղղութեամբ, անոնք բոլորովին պարպեր էին ֆրանսական հողը:

էնի անցքէն վերջ, քանի մը օր, ցորեկ և գիշեր, ճարտարագէտները անդադար աշխատեցան բարուոքել և լրացնել այն կամուրջները, որոնք 13ին կառուցուած էին: Բրիտանական հատուածին մէջ ինը կամուրջանաւեր ձգուած էին գետին վրայ, հրետանիի ծանր կրակի ներքեւ: Այս ուղղութեամբ ճարտարագէտներ ուրիշ բազմաթիւ ծանր աշխատանքներ կատարեցին:

Սեպտ. 13ին, էնէն կատարուած մասնակի անցքէն վերջ յայտնի չէր թէ թշնամին կը կուռէր պաշտպանելու համար շարունակուելիք նահանջը, թէ տեղահան ընելու Դաշնակիցները իրենց գրաւած նոր դիրքերէն: Տարտամ կացութիւնը վանելու դիտաւորութեամբ Սըր Ճօն Ֆրէնչ, ընդհանուր յառաջխաղացումի հրաման տուաւ: Զօրավարը կը տեղեկագրէ.

«Առաջին Զօրաբանակին այս օրուան (Սեպտ. 14ին) կատարած գործունէութիւնը, Սըր Տուկլաս Հէյկի ուղղութեան և հրամանին ներքեւ, այնքան ճարպիկ, յանդուգն և վճռական հանգամանք մը ունէր, որ գրաւեց դիրքեր, որոնք միայն կարող ըրին զիս պահելու իմ դիրքս, գետին հիւսիսի եզերքին վրայ, երեք շաբաթէ աւելի տեւող խիստ կռիւներու միջոցին:

«Զօրաբանակը ուղղուեցաւ, անցնելու Մուլէն-Մուսի գիծը, կէսօրէ առաջ, ժամը Նին ատենները»:

Բ. Կիսաբաժինը Մուլէնէ, և Ին.րդ Հրե-տանիի Կիսաբաժինը, Զօրավար Պիւլֆէնի հրա-մանատարութեամբ, դէպի հիւսիս քայեց, պաշտպանելու համար Վանտրէսի հովիտը գա-ցող զօրավարներին մնացեալ մասին յառաջխա-ղացումը: Այս կիսաբաժինէն սպայի մը պա-հակը տեղեկագրած էր թէ՛ Թրուայօնի հիւսիսը գտնուող գործարանի մը քով կարելի որ թշնամի ուժ մը կար: Այս լուրին վրայ կիսաբաժինի հրամանատարը թագաւորի Արքայական Հրա-ցանակիրներն ու Արքայական Սիւսէքս գունդը անոր դէմ ուղղեց, կէսօրէ առաջ, ժամը 3ին: Նօրթէ միջին շայր գունդը ժամ մը վերջ պիտի շարժէր գրաւելու Թրուայօնի արեւելքը գտնուող հանդիպագօտի մը, մինչ Լոյալ Նօրթէ Լէնքէշայր գունդը ժամը 5¹/₂ին ուղղակի Վանտրէսի վրայ պիտի քայլէր: Գործարանին մէջ հաստատուած թշնամին չափազանց ուժեղացած ըլլալով՝ Նօրթէ Լէնքէշայր գունդին հրաման եղաւ որ թագաւորի Արքայական Հրացանակիրներուն և Սիւսէքսի գունդին զօրավիգ ըլլար: Նոյնիսկ այս զօրեղ ա-ջակցութեամբ յայտնի եղաւ որ կարելի չէր յա-ռաջանալ, և հարկ եղաւ ուժեղացնել կիսաբաժինը՝ Քօլտսթրիմ պահակները (Ա. Կիսաբաժին) շար-ժելով դէպի երեք վաշտերուն աջը, մինչ Ա. Կիսաբաժինի մնացեալ մասը անոնց ձախը կ'անց-նէր: Բոլոր այս վաշտերը տաք կռիւի բռնուե-ցան, և թանձր մառախուղ մը թոյլ չտուաւ որ հրետանին անոնց ազդուօրէն աջակցէր, մինչ-չեւ ժամը 9ին, կէսօրէ առաջ: Ժամ մը վերջ Գ. Կիսաբաժինը հասաւ Վանտրէսի հարաւը, խոռոչաւոր վայր մը, և շարժեցաւ դէպի ձա-խը կռուող վաշտերը, որպէս զի անոնք կարե-նային երկարաձգել իրենց գիծը և միանալ Բ. Զօ-րաբաժինին հետ: Այս կիսաբաժինը ճիշդ ժա-մանակին հասաւ՝ թշնամիին տալու հուժկու հակահարուած մը, որ Բ. Զօրաբաժինի աջին վրայ կը յառաջանար: Կէսօրին Նօրթէ Լէնքէ-շայր գունդը Թրուայօնի գործարանը ձեռք ձը-գած էր, և բոլոր ութը վաշտերը, իրենց մէջ ունենալով Ա. և Բ. Կիսաբաժինները, տարած-ուած էին Թրուայօնի անմիջական հիւսիսը գրտ-նուող գծի մը վրայ, դիմակալելով գերման զօ-րաւոր ուժ մը, որ Շրմէն-տէ-Տամն ի վեր փոր-ուած ապահով խրամներու մէջ զետեղուած էր: Գերմաններու դէմ յառաջանալու կրկնակի փորձեր՝ չրափնէլի և գնդաձիրներու փոթորիկի

մը կողմէ ետ մղուեցան, և օրուան մնացեալ մասը յառաջացուեցաւ շարք մը յարձակում-ներու և հակայարձակումներու, որոնց միջոցին թշնամի յարձակումներուն թափը նուազե-ցաւ, և ի վերջոյ ետ մղուեցաւ ծանր կորուս-տով:

Բ. Զօրաբաժինը պիտի բերէր իր գործակ-ցութիւնը՝ զրկելով Զ. Կիսաբաժինը այն գծին ընդմէջէն, որ բռնուած էր Ե. Կիսաբաժինի կողմէ, գրաւելու Գուլթէքօնի հարաւը գրտ-նուող Շրմէն-տէ-Տամի կռնակը, մինչ Դ. Կի-սաբաժինը (պահակներ) և Լ. Կիսաբաժինը, կիսաբաժինի Զօրավար Փէրսօլի հրամանատա-րութեամբ, զրկուեցան ապահովելու Օսթէլի արեւելեան բարձունքները: Զ. Կիսաբաժինը սոցաւ Փօն-Արսիէն, բարձրացաւ դէպի Պրէյ հեղեղատը, և կէս օրէ առաջ, ժամը 9ին հա-սած էր Պրէյի հարաւի գիծ մը, ուր կասեց-ուեցաւ չրափնէլի և հրացանի ծանր կրակի մը տակ: Բ. զօրաբաժինին հրամայող կիսաբաժինի հրամանատարը զրկեց Լ. և Խ. Կիսաբաժին-ները և ծանր մարտկոցը Զ. Կիսաբաժինի օգ-նութեան:

Դ. Կիսաբաժինը Շալօնէն անցաւ կէս օրէ առաջ, ժամը 10ին, և անմիջապէս խիստ ընդ-դիմութեան բաղխեցաւ: Պարտաւոր էր կռուե-լով ճամբայ շինել խիտ անտառէն, որ հրետա-նիի օժանդակութեան դժուարաւ առիթ կը հայթայթէր. սակայն դաշտային հրետանիէն հատուած մը (երկու թնդանօթ) պատահաբար քշուեցաւ կռիւի գիծը, և ժամը 1ին, կէս օրէ վերջ, կիսաբաժինի ձախը Օսթէլի քամակին հարաւը անցաւ: Այս պահուն թշնամին, որ պահակ կիսաբաժինի ձախ կողմին շուրջը անցած էր, թափանցեր էր Բ. և Գ. զօրաբաժիններու մէջտեղ, և կը սպառնար խզելու վերջնոյն հա-ղորդակցութիւնները: Կը պատմուի թէ այս կռիւներուն մէջ Գերմանները ճերմակ դրօշակ պարզեցին, որուն վրայ Բրիտանացիք յառա-ջացան զանոնք գերի վարելու համար, սակայն դարանակալ թշնամի հրետանին մահացու կրակ մը բացաւ, որուն միացաւ դրօշակ պար-զող հետեւակազօրքը: Այս խարդախան-գին զոհ գացին բազմաթիւ անձինք: Սըր Տուկլաս Հէյկ, հրամանատար Առաջին Զօ-րաբանակին, նեղ դրութեան մատուած էր, զուրկ առ ձեռն պահեստէ: Սըր Ճօն Ֆրէնչը Ա. Հեծելազօրաբաժինէն զատ ուրիշ ուէ ուժ չէր կրնար անոր տրամադրել: Բարեբաղդաբար բրիտանական հեծելազօրքը վարժ էր հետեւա-

կազօրքի մարզանքներուն, և կրնար յաջողա-կութեամբ դորձածել հրացանը: Զօրաբաժինի մէկ մասը զրկուեցաւ երկարելու պահակ կիսա-բաժինի ձախ կողը, և խիստ կռիւէ մը վերջ, յաջողեցաւ թշնամին ետ մղել ծանր կորուստով: Կէսօրէ վերջ ժամը 4ին ատենները թշնամիին յարձակումները տկարանալ սկսան, և Սըր Տուկլաս Հէյկ ընդհանուր յառաջխաղացումի յանդուգն վճիռը տուաւ: Թէև Ա. Զօրաբա-նակը մեծ ընդդիմութեան և ծանր կրակի բաղ-խեցաւ, սակայն յաջողեցաւ գիշերամուտին ա-պահովել դիրք մը, որ կ'անցնէր Շրմէն-տէ Տա-մի վրայ կէտէ մը, Թրուայօնի հիւսիս-արեւել-քը, Թրուայօնի և Շիվիի ընդմէջէն մինչև Լա-ֆուր տէ Սուփիսը: Այս գիծը Ա. Հեծելակի-սաբաժինի միջոցաւ կ'երկարէր հովիտն ի վար, մինչև Շալօն-Սուլասօնի ճամբան: Զօրաբանա-կին աջը ապահովուեցաւ ժ.Ը. Զօրաբանակի մարտքեան զօրագունդերու ժամանումովը, ո-րոնք անոր աջին ետեւը տեղաւորուեցան խրամ-ներու մէջ: Գիշերուան պահուն Ա. Զօրաբա-նակը իր շահած դիրքերուն մէջ թաղուեցաւ, և յետագայ գործողութեանց մէջ, գիշեր և ցե-րեկ, երեք շաբաթ անընդհատ պահեց զանոնք անդդուելիօրէն: Ա. Զօրաբանակը գրաւեց 12 դաշտային թնդանօթ, շատ մը գնդացիներ և 600 զերի, հեծելազօրքի առաջնորդէն զատ: Անց-եալ շաբթուան տեւողութեանը Բրիտանացիք գրաւեցին 60 թնդանօթ, 30 գնդացի, 40 վակօն, մեծ քանակութեամբ ռազմամթերք և քանի մը հազար գերի: Գերիները կը պատկա-նէին պահեստի, Լանտուէրի ինչպէս նաև գործօն բանակին, բան մը որ ցոյց կուտար թէ թշնա-մին արդէն սկսած էր գործածել տարիքոտ դա-սակարգեր՝ դիմադրաւելու պատերազմին առ-թած սպառումները: Բրիտանական Ա. Զօրա-բանակին կորուստները խիստ ծանր էին: Մէկ կիսաբաժինի 4 գնդապետներէն երեքը զոհ գա-ցին այս աղէտին:

Գ. Զօրաբաժինը յառաջխաղացում մը փոր-ձեց Բ.ին ձախին վրայ, և հազիւ թէ հասած էր Էլբի արեւելքի բարձրաւանդակը, երբ բաղխե-ցաւ թշնամի գերազանց ուժի մը, և կարգա-պահութեամբ ետ ինկաւ Վէլիի հիւսիսային դիրքերուն վրայ, ուր խրամներ փորեց և ազ-դուօրէն պաշտպանեց հարաւի կամուրջը: Ե. և Դ. Զօրաբաժինները ինքզինքնին անկարող ըզ-գացին՝ իրենց դիրքերը պաշտպանելէ զատ՝ ու-րիշ ուէ ձեռնարկ ընելու: Անխնայօրէն ամբողջ օրը անընդհատ ռմբակոծուեցան, անանկ որ

պահ մը իսկ առիթ չունեցան փոխադարձելու: Հակառակ 15 ժամուան ռմբակոծումին միայն 3 մեռեալ և 1 վիրաւոր սպայ. և 60-70 մեռեալ և վիրաւոր զինուոր ունեցանք:

Երեխաքթի, Սեպտ. 15ին պաշտօնապէս զե-կուցուեցաւ թէ՛ Գերմանները կազմեր էին նոր ճակատ մը — Նուայօն, Վիք-Սիւս-Էն, Սուա-սօն, Լը Մօն-տը-Լօն, Ռէնսի արեւելքի և հիւս-սիսի բարձունքները, Վիլ-սիւս-Թուպի և Վա-ռէնի հիւսիսը՝ գիծ մը, և անկէ դէպի Լը Պուա-տը Ֆուրժ, Վէրտօնի հիւսիսը՝ Մէօզի վրայ:

Այդ դիրքին շուրջը կատարուած զգուշաւ-որ հետազոտութիւն մը և ֆրանսական բանակ-ներու տեղեկագրութիւնները ապահովցուցին Սըր Ճօն Ֆրէնչը թէ՛ այդ ուժը սոսկ վերջա-պահ ընդդիմադրական ուժ մը չէր, այլ վճռա-կանութեամբ դաշնակիցները նեղը ձգելու դի-տաւորութեամբ դիրքերու մէջ հզօրապէս ամ-րացած զօրութիւն մը: Մօպէտի անկման վրայ՝ թշնամին հոս բերած էր որոշ քանակութեամբ պաշարուէի հրետանի, որոնց 8 ինչէզնոց թնդա-նօթներն առնուազն 10,000 եարտա հասողու-թիւն ունէին: Էնի կռիւին ամբողջ ընթացքին, Դաշնակիցները դառնօրէն տուժեցին ծանր հրե-տանիի կրակէն, որուն անկարող լեզան պատ-շածօրէն պատասխանելու: Մինչև որ յետա-կողմի կամուրջները բաւականաչափ տոկուն չկառուցուէին, դաշնակիցները ի վիճակի չպիտի ըլլային պաշարումի հրետանի բերել: Ա.մէն կա-րելի միջոց գործածուեցաւ զօրագունդերը խրամ-ներու մէջ կրակէ զերծ պահելու համար:

Կէսօրէ վերջ Դ. զօրաբաժինը և ֆրանսա-կան Զ. բանակին աջը ենթարկեցին ծանր թնդ-դանօթներու անաւոր կրակի մը, իբր նախա-պատրաստութիւն կատարի՝ հակայարձակումի մը, օժանդակութեամբ գնդացիներու և դաշ-տային հրետանիի: Դաշնակիցները, սակայն և այնպէս, իրենց դիրքերը պահեցին, հրաշալի տոկունութեամբ, սպանիչ կրակ մը տեղացու-ցին յարձակողներուն վրայ, և զանոնք ետ մղե-ցին, ամէն ուղղութեամբ, կարգ մը կէտերու վրայ սուրինի հարուածով: Ասոնց կ'ընկերանային Ա. և Բ. զօրաբաժիններու վրայ կատարուած հակայարձակումները, որոնք թէև վեց անգամ կրկնուեցան, սակայն մեծ կորուստով ետ մղու-եցան, մասնաւորապէս ան որ Դ. կիսաբա-ժինի դէմ կատարուեցաւ: Նոյն միջոցին Գ. զօրաբաժինը մեծ թափով Վէլիէն յառաջացաւ և ձեռք անցուց այն հողը, զոր կորսնցուցեր էր 14ին, այսպէս ապահովելու այն դիրքերը:



ՋՕՐԱՎԱՐ ՏԷ ԿԻՉ

Անվերսի արև պաշտպանը

որոնք ազդուորէն կը պաշտպանէին իր ետեւը գտնուող գետին անցքերը: Ե. զօրաբաժինը, սակայն և այնպէս, այնքան բախտաւոր չգրտնուեցաւ: Ան իր կեցած տեղը չէր կրնար մնալ, քանի որ Շիվր լեռնադաշտի հարաւի եզերքն ի վեր փորուած խրամները անբնակելի դարձեր էին՝ Վրէնդեի շրջակայքը գտնուող թշնամի դիրքերուն կրակէն, և ոչ ալ կրնար յառաջանալ, քանի որ իր առջեւ գտնուած հողը ոչ միայն կ'ալուէր ճիւստէն տեղացող կրակէն, այլ նաև կը քանակոծուէր արեւելքի և արեւմուտքի բարձունքներէն: Զօրաբաժինը, ուստի, պարտաւորած էր քաշուիլ այն գիծը, որ կ'անցնէր Միսիի անմիջապէս արեւելքը՝ գետին վրայէն դէպի Ս. Մարկարիթը: Նոյն իսկ հոս ալ իր դիրքը նախանձելի բնոյթ մը չուներ, քանի որ իր խրամները, Յօս տը Բօնտէի շուրջը հաստատուած թշնամիէն կրնային ուժաւորուիլ:


Գիշերը տասը հակադարձակում ևս գործուեցաւ, բրիտանական ճակատին դէմ, սակայն ամէնքն ալ թշնամիին պարտութեամբը վերջացան:

Մինչ Բրիտանացիները և Ֆրանսական Զ. բանակին աջը այս կատաղի յարձակումներուն կ'ենթարկուէին, ճակատամարտը կը տարածուէր դէպի արեւմուտք: Ահագին թուով թընդանօթներ երկու կողմէն ալ կը գործէին, ա-

նանկ որ իրենց կրակին գոռուժը կը նմանէր հակայորէն մեծցուած հրացանաձգութեան մը: Գիշերամուտին ֆրանսական ճախը սկսաւ թըշնամին քշել դէպի Նուայօն, սակայն Սուասօնի հիւսիսը բռնող աջը չկրցաւ առաջ անցնիլ: Սուասօն ալ կանոնաւոր ուժակոծումի մը ենթարկուած էր, որով միասուեցաւ մայր եկեղեցին, եկեղեցիներ և անոնց շրջակայքի տուները:

Շարաթ օր ֆրանսական Զ. բանակը էնը անցած էր Վի.քէն և Յօնթընոյէն, ուր երկուշաբթի կամրջանաւեր ձգեր էին, ծանր կրակի տակ, գերման վերջապահները քշած էին. Ս. Բրիսթօֆի ընդ մէջէն, և հաստատուեր էին ի Նուվրօն, Օթրէշ և Մօրաէնի հովիտը: Երեքշաբթի գիշեր գերման կատաղի հակահարուածով մը ֆրանսացիները դուրս նետուեցան իրենց յառաջացեալ դիրքերէն, և ետ ինկան լեռնադաշտերու այն եզերքները որոնք կը զբտնուին գետին կողմը: Ամբողջ չորեքշաբթի ցերեկին և գիշերին ֆրանսական դիրքերը անխընայօրէն ուժակոծուեցան:

Չորեքշաբթի, Սեպտ. 16 ին, բրիտանական Զ. Զօրաբաժինը Անգլիայէ հասաւ: Սըր Ճօն Ֆրէնչ առաջարկած էր գործածել Ա., Բ. և Գ. Զօրաբաժինները, քշելու համար թշնամին իր Շըմէն-տէ-Տամի դիրքերէն: Սակայն տեսաւ որ բրիտանական աջին յառաջխաղացումը



ՍԷՐ ՍԷՍԻԼ ՀԷՐԹՈՒԷ

Անվերսի բրիտանական ընդհ. հիւպատոսը

Ֆրանսական Ե. բանակէն օժանդակութիւն չէր կրնար ընդունիլ, որով վտանգաւոր կացութեան կը մատնուէր: Ժօֆօրի ըսածին պէս քանի որ Գերմանները յայտնապէս մտադրած էին լրջութեամբ պաշտպանել իրենց դիրքը, ուստի յարկ էր աւելի անոնց արեւմտեան կողը ետ դարձընել՝ քան ջանալ անոնց գիծը խորտակելու: Զօրավար Ֆրէնչ այս ուղղութեամբ իր ճախը ուժովցնել սկսաւ: Զ. Զօրաբաժինը, գետին հարաւային կողմը զրկուեցաւ, բրիտանական ճախին ետեւը, իրրե ընդհանուր պահեստի ուժ:

Գերմանները շարունակեցին ուժակոծել, ամբողջ օրը, բրիտանական գիծերը, սակայն իրենց հակադարձակումները յաւետ ցոյցի՝ քան լուրջ ճիգի բնոյթը ունէին: Բրիտանական հրետանին ծայրայեղօրէն ճշգրիտ նշանառութիւնը պարտաւորեց զանոնք, ժամանակի մը համար, պարպել իրենց խրամները:

Հինգշաբթի, Սեպտ. 17 ին, ուստի պաշտօնական զեկոյցը կը յայտնէր աւստրիական բանակին արմատական ջախջախումը Կալիցիոյ մէջ, որով ան կը կորսընցնէր 250,000 մեռեալ և վիրաւոր, 100,000 գերի, 400 թնդանօթ, և դրօշակներ ու պաշար: Ֆրանսական Զ. բանակը, հզօրապէս ուժեղացած՝ վերստին գրաւեց բոլոր այն դիրքերը, զոր կորսուեցուցած էր երեքշաբթի գիշերը, և նոյն իսկ քշեց Գերմանները Նէմփսէլէն անդին:

Այս օրուան մէջ գերման ծանր հրետանին ուժակոծեց բրիտանական բոլոր դիրքերը, աւելի կորովով քան նախընթաց օրը, սակայն իրենց հետեւակազօրքը լուռ մնաց, ի բաց առեալ բրիտանական աջին դէմ ճակատող մասը: Հոս կարգ մը յարձակումներ տեղի ունեցան, և սովորականին պէս ծանր կորուստով ետ մղուեցան գլխաւորաբար դաշտային հրետանիով: Այսու ամենայնիւ, Ա. զօրաբաժինը ամբողջ օրը գործունէութեան մէջ էր:

Ըսինք, արդէն, թէ ինչպէս երկուշաբթի, 14 ին, Բ. Կիսաբաժինին աջը Շըմէն-տէ-Տամի վրայ առաջացեալ դիրքեր գրաւած էր: Նորթհէմթընշայր գունդը աջին վրայ էր, որ բրիտանական գծին ամենայառաջացեալ եւ ամենավտանգաւոր մասը կը կազմէր: Անոր գումարտակներէն մին, ճամբուն եզերքը, խրամ մը բռնած էր, ուր շաբաթէ մը ի վեր առատ անձրև իջած էր: Զինուորները, մինչև իրենց ծունկերը, ջուրի մէջ կը կենային, առանց վերարկուի: Այս պարագաներուն տակ չորս օր անընդհատ ուժակոծումի ենթարկուեցան, առանց

քունի և դադարի: Իրենց դէմը, 250 եարտա հեռու, կը գտնուէին գերման խրամներ, ուր թշնամին ունէր գերազանց ուժ մը: Խրամներէն վեր երեւիլը մահացու վտանգ մըն էր: Իրենց դիրքերու մէջէն գլուխին դուրս հանող պահակներ սպաննուեցան վայրկենաբար: Գուրօէն խրամները ուտելիք կը բերուէր մարդոց միջոցաւ, որոնք գիշեր ատեն իրենց փորին վրայ սողակելով կրնային այդ տաժանելի ճամբորդութիւնը կատարել, ետ և առաջ: Գումարտակին էն վարպետ նշանառուն՝ սաղավարտը շողգամի տերեւներով զարդարելով՝ գիշերամուտին կը սողակէր հանդիպակաց շողգամի արտը, ուրկէ քիչ մը անդին կը գտնուէր թշնամին, խրամներու մէջ կծկուած: Հոն գետնամած կ'ըսպասէր համբերութեամբ, անձրևի տակ և տիղմի մէջ, մինչև որ թշնամի գլուխ մը խրամներէն վեր երեւէր, այն ատեն հրացանի շնիկին վրայ ճնշում մը, և հառաջանք մը, ճիշ մը կը յայտնէր թէ գերման մը չուած էր անդիի աշխարհը: Խրամին ետեւը կար խոտի դէզ մը, որ «հիւանդանոց» անունը առեր էր, որովհետև Բրիտանացիք անոր ետեւը հաւաքեր էին 70ի չափ Գերմաններ, որոնք ծանրապէս վիրաւորուեր էին երկու շաբթուան կռիւներուն մէջ: Ասոնց ուտելիքի բաշխումը և հողատարութիւնը իրիկուան դէմ կ'ըլլար, թշնամիին կրակը թոյլ չէր տար որ ցորեկ ատեն անոնց ուէ օգնութիւն հասցուէր: Չորեքշաբթի օրը գերման ուժը մը խոտի դէզը հրդեհեց: Խիստ ծանր վիրաւորները ողջ ողջ այրեցան, և մնացեալներուն պատսպարանն ալ քանդուեցաւ: Վիրաւորներուն աղելարը ճիշերը խիստ յուզիչ էին, սակայն թշնամիին կրակը՝ անոնց ուէ օժանդակութիւն հասցնելը անկարելի դարձուց: Հինգշաբթի օրը, հանդիպակաց խրամներու Գերմանները յառաջանալու քանի մը ապարդիւն փորձեր ըրին, և ապա իրենց զէնքերը վար դրին և նշաններով իրենց անձնատուութիւնը յայտնեցին: Բրիտանացիները հրամայեցին որ խրամներէն դուրս ելին, որուն վրայ Գերմանները յառաջ խուժեցին: Միակ վերապրող բրիտանացի սպան յառաջացաւ և խնդրեց որ գերման սպայ մը իրեն մօտենայ: Պարզ զինուոր մը պատասխանեց այս կոչին: Բրիտանացին ըսաւ անոր որ ետ քաշուի և դարձեալ պոռաց որ սպայ մը յառաջ անցնի: Զինուորը ետ քաշուեցաւ և տեղը ուրիշ զինուոր մը անցաւ: Բրիտանացին հրամայեց որ փութով ետ դառնայ, և կրկին պոռաց որ գերման սպայ մը դէպի իրեն շար-

ւանական բանն էր: Այդ միեւնոյն ժամանակա-
միջոցին, հարիւր-հազարաւոր զօրագունդեր կը
պատրաստուէին բրիտանական կայսրութեան
մէջ: Չարին գորչագոյն լէգէոնները՝ ուսական
և սիպերիական տափաստաններէն կը յառնէին
միլիոններով և ծովու ու ժին անողոքելի ճնշումը
աստիճանաբար կը խեղդէր կեղերոնի Տէրութիւն-
ները: Ասկէ զատ, նախաձեռնարկ ըլլալը Գեր-
մանիոյ պարտադրեց վատնումը երեք թանկա-
գին ապրանքներու — մարդ, նիւթ և դրամ:
Այս երեք աղբիւրներու տեսակէտով Գաշնակից-
ները կեղերոնի տէրութիւններէն շատ աւելի գե-
րազանց էին: Գերման կորուստները, մարդկա-
յին կեանքի տեսակէտով, աւելի լուրջ էին,
քանզի անոնք մարզուած մարդոց պահեստի ուժ
չունէին: Մեծ նահանջէն վերջ՝ բրիտանական
կորուստները 15,000էն քիչ մը աւելի էին, բան
մը որ մէկ երրորդը չէր թշնամիին տրուած կո-
րուստին: Երբ նկատի առնենք որ բրիտանական
կորուստները, իբրև գերի, 8,000ի և 9,000ի
մէջտեղ բան մըն էին, յայտնի է որ թշնամիին
կորուստները, մեռեալ և վիրաւոր երեք ան-
գամէն աւելի շատ էին, քան ինչ որ ունէր
Մեծն Բրիտանիա: Քանի որ Գերմանները սովո-
րաբար նախայարձակ էին, իրենց կորուստը
50,000ը կ'անցնէր: Ծիշդ այդ միջոցին որ Բրի-
տանացիք էնէն կը շարժէին՝ իրենց կորուստ-
ները, մեռեալ, վիրաւոր և գերի, 33,000է
պակաս էին, սակայն 7 շաբաթէն անոնք առ-
նուազն 100,000 Գերմաններ անգործունէութեան
մատնեցին, թիւ մը, որ աւելի մեծ է քան բրի-

տանական ուժ որ երբէք, մինչև այս թուա-
կանին կռիւի դաշտը մտցուած ըլլայ: Անոնք
գրեթէ միշտ նախայարձակ էին և անխնայօրէն
կը վատնէին իրենց մարդոց կեանքը: Այսպէսով
գոյացած պակասը կարելի չէր ըլլար մարզուած-
ներով լեցնել: Սպաներու շարքերուն մէջ գոր-
ծուած աւերը ցոյց կուտար այն մտայնութիւնը,
որով զօրագունդերը կ'առաջնորդուէին և կը
գործածուէին անխնայօրէն:

Մառնի յաղթանակը վճռական էր, որով-
հետև յաջորդ երկու ամսուան կռիւներու ըն-
թացքին կեղերոնի պետութիւնները ականատես
եղան շրջապատնէշի մը լրացման, որուն սահ-
մաններէն ներս անոնք դատապարտուած էին
ուշ կամ կանուխ խեղդուելու: Անոնք իրենց
փրկութեան յոյսը դրին չէղոք տէրութեան մը
և կամ տէրութեանց միջամտութեան վրայ,
որոնք պիտի նպաստէին վերցնելու այդ սպան-
նող պաշարումը: Ռուսիոյ վրայ տարուած ուժ
յաղթանակ կարող չէր Գերմանիան փրկել, ո-
րովհետև Ռուսիա կրնար ետ ընկրկիլ, մինչև
Խաղաղական Ովկիանոս, առանց լուրջ վտանգի
ենթարկելու ինքզինքը, և Գերմանիա ի վիճա-
կի պիտի չըլլար զայն հետապնդելու հեռուները:
Մառնի յաղթանակը կասեցուց տեստոնեան
արշաւանքին ալիքը. էնը և Ֆլանտրը աւելի
ամրապնդեցին զայն: Գաշնակիցները գործեցին
ժամանակ շահելու, թշնամին մաշեցնելու, սպա-
ռելու, մէկ բառով, պաշարելու համար, և այս
բանին մէջ վճռաբար յաջողեցան:

ՎԵՐՋ ԻԴ. ԳԼՈՒԽԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ



106

8109

8110

2013

